



ԱԶԳԱՅԻՆ, ԳԲՎԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՆՍԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ ✱ ՅՈՒՆԻԱՐ 1900 ✱ ԹԻՒ 3

ԲԱՐԻԶ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանուն բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կիրպոլ մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւտեալական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եմէ, հոգին չմարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

ժ. ՄԻՇԼԷ

Ուրբաթ իրիկուն , մտաւորական բարձր արժէքով Հայ մը , Պ. Ա. Չօպանեան , Բուարէլ սրահին մէջ , էսթի Աշխարհագրական Ընկերութեան հովանաւորութեան տակ , արտասանեց բանաստեղծութիւն մը մեծապէս շահեկան , նիւթ ունենալով «Հայաստանը եւ Հայերը» : Բաղմաթիւ հասարակութիւն մը շատ անդամ ծափահարեց բանաստեղծը , զոր ներբողալից խօսքերով ներկայացուց Պ. Ֆիսթէր , Աշխարհագրական Ընկերութեան մեծարժոյ նախագահը : Պ. Չօպանեան , վայելչահասակ անձ մը , շատ ախորժալուր ձայնով մը օժտուած , խօսեցաւ վերջին ծայր ազնիւ եւ ընտիր ֆրանսերէնով մը , հազիւ երբեմն թեթեւօրէն օտար հնչիւնով մը երանգաւորուած : Հակիրճ կերպով յիշեցնելէ յետոյ ջարդերն ու վայրագութիւնները որոնց արիւնոտ թատերաբեմը եղաւ Հայաստանը , դազան Ապտիւլ-Համիտին՝ «Կարժիր Սուլթան»ին հրահանովը , բանաստեղծը գանգաւ եցաւ թէ Ֆրանսայի մէջ գրեթէ բոլորովին ծանօթութիւն չունէին Հայաստանի անցեալին ու պատմականն չնշանակութեանը մասին : Պ. Չօպանեան իր ազգին մեծութիւնը ցուցուց մարդկային գործունէութեան ամէն ճիւղերուն մէջ , գրականութեան ինչպէս արուեստի , վաճառականութեան ինչպէս ճարտարագործութեան մէջ : Գեղեցիկ բացատրութիւններով , բանաստեղծը սովորութեամբ ըրաւ Հայոց Պատմութեան , նշանաւոր յստակութեամբ եւ ցուցադրական գիտութեամբ ներկայացուած : Լիակատար ուսումնասիրութիւն մը նուիրեց Հայաստանի վերջին դէպքերուն եւ ցոյց տուաւ այն մասնակցութիւնը զոր եւրոպական զանազան ժողովուրդներ անոր մէջ ունեցան : Բանաստեղծը զանազան ֆրանսական դիւանագիտութեանն եւ շատ կծու կերպով քննադատեց Պ. Հանոթօն՝ ի նպաստ քրիստոնեայ Հայերուն միջամտած չըլլալուն համար , եւ հաւաստեց թէ այդ պատճառով ֆրանսական ազդեցութիւնը մեծապէս նուազած է Արեւելքի մէջ : Աւարտելով , Պ. Չօպանեան իր անդրդուելի հաւատքը շեշտեց կեղեքուած Հայաստանին հօգը կենսականութեանը եւ լաւագոյն ապագայի մը մասին : Պ. Ֆիսթէր բոլոր ուկնդիրներուն թարգմանը հանդիսացաւ շնորհակալ ըլլալով բանաստեղծին՝ իր գեղեցիկ եւ ընտիր խօսքերուն համար : Այս քառուկական բանաստեղծութեան աւարտին , Աշխարհագրական Ընկերութեան շատ մը անդամներ եւ մէկ քանի բարեկամներ , Սթանիսլաս հրապարակին Վալթէո ճաշարանը հաւաքուեցան Պ. Չօպանեանին բոնչ մը հրամայեցնելու համար :

Նանսի , էՍԹ ՐԷԲԻԻՊԼԻԿԷՆ , 10 դեկտ. 1899 .

... Այդ այնքան շահեկան ու դժբաղդ երկրին նկատմամբ Ֆրանսայի համակրութիւնները բազմապատկելու նպատակով է որ Պ. Ա. Չօպանեանի արժէքն ունեցող մարդիկ կը ձեռնարկին այսպիսի բանաստեղծութիւններ ընել որպէսզի քաղաքակիրթ ժողովուրդներու ուշադրութիւնը հրաւիրեն եւ կոտորածներու վերանորոգումը արգիլել տան :

Ֆրանսերէն լեզուն մինչեւ վերջին տարիներս Հայաստան շատ տարածուած էր , զայն կ'ուսուցանէին բոլոր դպրոցներուն մէջ ու կը խօսէին նոյն իսկ ամենէն համեստ տուններուն մէջ . ատենէ մը ի վեր , դիտել տուաւ բանաստեղծը , գերմաներէնը կը ձգտի ֆրանսերէնին յաջորդել . եւ մօտակայ ապագայի մը մէջ , եթէ Ֆրանսա շարունակէ իր արեւելեան քաղաքականութեան դաւաճող աւանդութիւնները լքանել , գերմաներէնը Հայաստանի մէջ ֆրանսերէնին տեղը պիտի բռնէ : Մէկ ու կէս ժամու չափ Պ. Չօպանեան ունկնդիրներն իր խօսքերուն հմայքին տակ պահեց . մեծ յաջողութիւն ունեցաւ կարգալով հայկական բանաստեղծութիւններ՝ թարմութեամբ ու զգացմանց բարձրութեամբ լեցուն :

Նանսի , Լ'ԷՆՓԱՐՄԻԱԼ , 10 դեկտ . 1900

Պ. Չօպանեան , ... որ մեր լեզուն հազուադէպ վայելչութեամբ մը գիտէ գործածել , ճարտասանօրէն պատկերացուց պատմութիւնը այդ ազատութեան ծարաւի եւ սրտին մէջ հայրենիքին վառ սէր մը ունեցող փոքրիկ ժողովրդին , որ բանաստեղծական առասպելներու մէջ կորսուող

# ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Պ Ե Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ա Ղ Գ Ա Ց Ի Ն , Գ Ր Ա Կ Ա Ն , Գ Ե Ղ Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ա Կ Ա Ն

Բ . Տ Ա Ր Ի

Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր 1900

Թ Ի Ի 3

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն Ե Ւ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Բ Ա Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Ր Տ Ա Ս Ն Ն Ո Ւ Ա Ս Թ Ի Ն Կ 1896 Ի Ն

Ա թ ե ն ա ց ի ք :

Այս իրիկուան բանախօսութեանս նիւթին անցնելէ առաջ, թոյլ տուէք ինծի յանուն ըտլար Հայերուն ձեզի մեր երախտագիտութիւնը յայտնել ազնիւ վարմունքին համար զոր զուք ցոյց կուտաք մեր ազգին՝ այն աղէտներուն մէջ որոնց ենթարկուած է այս պահուս : Կուգամ Պոլսէն ուր ականատես եղայ այն տեսարաններուն որոնց մանրամասնութիւնները զիտէք նրկար ատենէ ի վեր , եւ աչքովս հաստատեցի պաշտպանութիւնը զոր ձեր հայրենակիցները շնորհեցին մեր եղբայրներուն՝ զանոնք բարբարոսներուն ձեռքէն կորզելով , իրենց տուններուն մէջ պահելով , ծպտումներու տակ փախցնելով : Ու հոս ձեր նաւահանգիստները բացիք փախստականներուն , անոնցմէ շատերուն զորք գտաք , ամենէն խեղճերուն պատըսպարան տուիք , հիւանդները ձեր հիւանդանոցներուն մէջ ընդունեցաք , նպաստը երեկոյթ մը կազմակերպեցիք , ձեր մամուլը միաձայնութեամբ եթէ չեմ սխալիր , այդ փախստականներուն ուղղից այն խրատաւանքները որոնք աքսորը կը թեթեւեցնեն : Առ այժմ անկեղծ խօսքերով միայն կրնանք ձեզի շնորհակալութիւն յայտնել : Բայց նաեւ կը մտածենք թէ մասամբ արդէն վարձատրուած էք մեզի տուածնուդ փոխարէն . մենք պատրուակ մը եղանք որով ձեր հողոյ մեծութիւնը յայտնեցիք : Ուրիշներու օգնելը , այն զգացումը կուտայ մարդու (զգացումներուն ամենէն վեհը թերեւս) թէ բարձրագոյն ուժեր ունի : Կը տեսնենք որ զուք այսօր , միեւնոյն ատեն ,

պատասպարան կը շնորհէք հազարաւոր Կրեոացիներու՝ որ ձեր եղբայրներն են , եւ բոլոր մեր բիւններուն : Ձեր վասնելու համար ունեցած զգացմանց ու միջոցներուն չափին համեմատ , զուք մեզի համար աւելի բան ըրիք քան ո եւ է եւրոպական պետութիւն : Վստահ եղէք թէ մեր հողոյն խորէն մենք կը գնահատենք ինչ որ կայ վեհանձնութիւն եւ փափկանկատութիւն այս հիւրընկալութեան մէջ զոր կը գտնենք Յունաստանի հողին վրայ :

Ա թ ե ն ա ց ի ք :

Հայաստանի դէպքերը , երբ զանոնք մերձեցրնենք Արեւելեան խնդրոյն այս դարուս ընթացքին մէջ ունեցած նախորդ փուլերուն , անոնց հետ կը ներկայացնեն նախ եւ առաջ ընդհանուր յատկանիշի մը հանդիտութիւնը . հոն կը տեսնենք քրիստոնեաներուն պայքարը մահմետականներուն դէմ :

Կեղեքիշներուն հանդէպ : Յոյները , Ռուսները , Դանուբի Սլաւները , Հայերը , տեսակ մը կարեւոր յատկութիւններ ցոյց կուտան զոր ամենքն ալ ունին հաւասարապէս . այդ ժողովուրդները բնաշխարհիկ են : Բազմաթիւ դուրերէ ի վեր կը բնակին ու կը հերկեն միեւնոյն հողը : Կտաւներ կը հիւստեն , նաւեր կը շինեն , կեանքի հանգստացմանը հարկաւոր եղող առարկաներ կը յօրինեն . աւելորդը կը ծախեն . կ'արտադրեն եւ կը փոխանակեն : Նմանապէս ճարտար են երկրագործութեան , վաճառակաւութեան , նաւարկութեան ու պանքայի գործերու մէջ : Ասկից զատ , մասնաւոր ձեւ մը ունին զգալու եւ մտածելու : Գրիստոնէութիւնը , որովհետեւ տառապանքն ու պարտութիւնը կը պանծայնէ , զիրենք կը մղէ տարբեր պայմաններու մէջ գտնուող մարդիկն իրարու հաւասար նկատել : Սա ներքին համոզումն ալ ունին թէ եւրոպայի գիտական յառաջդիմութիւնը , որուն

կը գործակցին , կոչուած է տիրապետելու այն բոլոր երկիրներուն որոնց մէջ գեռ իր ազգեցութիւնը չէ մտցուցած :

Թուրքերուն՝ եւ անոնց հաւատարիմ մնացող վաչկատուն ցեղերուն՝ համար, էական յատկութիւնը պատերազմի մարդիկ ըլլալնին է : Կոռի ելած հրոսներու պէս ապրել կ'ուզեն . համոզուած են թէ պէտք է որ հինգ դարու չափ առաջ իրենց նուաճած մարդիկը մինչեւ վերջը իրենց ծառայեն ու զիրենք սնուցանեն : Տիրական զաւարիար մը արմատացած է իրենց զանկին տակ , այն է թէ Մեքքէի ընկերական դաշինքը , որ ուժը իմացականութենէն զերաւ կշիռ կը հոչակէ , սահմանուած է՝ հակառակ ամէն խոչընդոտի՝ աշխարհիս մէջ տարածուելու , թէ ան «միակ» , «անփոփոխ» ու «յաւերտեանական» է , ինչպէս այն Աստուածը որ զայն տուն տուած է : Այս ձեւով տրամաբանող մարդոց համար , ստրկութիւնը պէտք մըն է . առանց ստրուկի չեն կրնար ուտելիք գտնել : Իրենց տեսակէտով , ստրուկը անհրաժեշտ աւարկայ մըն է , ու միանգամայն անարգ աւարկայ մը . մարդկային էակ մը չէ ան . «բայ» է , այսինքն՝ «հօտ» : Եթէ երբեք իր անասնական զիրքէն բարձրանայ , եթէ նկրտի անկախօրէն մտածելու , կամ պարզապէս ազատ մարդուն յատուկ նշանը՝ ինքնապաշտպան զէնք մը՝ կրելու , պէտք է որ սպաննուի ան , իրեն արենակից եղող բոլոր չափահասներուն հետ . «ձառը , ըստ այն վճռին որ Հայաստանի ջարդերուն ատեն գործադրուեցաւ , ոստախիլ պէտք է ընել , բայց ոչ արմատախիլ , որպէսզի արդաքը , օրինակէն խրատուած , հնազանդութեան զգացումներու մէջ մեծնան եւ նորէն հաւատարմութեամբ ծառայեն Թուրքերուն : » Բարբարոսը երբեք պիտի չկրնայ հասկնալ թէ արիւնը ազգի մը մկրտութիւնն է , թէ այն տղան որ իր հօրը մորթուելը կը տեսնէ , ոչ միայն ազատ մարդ մը կը զանալ , այլ զարերով իր նախկին տէրերուն անհաշտելի թշնամին , թէ որչափ արիւնի շեղջը լայն ըլլայ , այնքան աւելի ժողովուրդը երիւսաւարդացած ու կայտաւ կը վերականգնի . . . Այդ տառապանքները , այդ կոտորածները մեզի չափ , թերեւս մենէ աւելի կրած էք դուք եւ Դանուբի Սլաւները : — Եթէ այստեղ մէկ խօսքով կը յիշեմ զանոնք միմիայն ցուցնելու համար է որ մենք մեր մտքին մէջ հայկական դատը յունական դատէն չենք զատեր : Մեր երկու ազգայնութիւններուն մարտիրոսութիւնն ու վերածնունդը միեւնոյն ծագումն ունեցած են : Առնչութեանց շատ պարզ օրէնքի մը համեմատ , Յունաց սկզբնական յեղափոխութիւնը մեր դատին յաջողմանը պիտի նպաստէ այնքան որքան յաղթանակ մը դոր այսօր մենք տարած ըլլալինք ,

եւ միւս կողմէ՝ ինչ ձեռնարկ որ մենք փորձենք , ձեր շահերուն անպատճառ յարակից եւ օգտաւէտ պիտի ըլլայ : — Ի՞նչ կերպով Թուրքերը կը մղուին այս շարք մը արիւնոտ սըխալները գործելու , ի՞նչ է մեր մէջ իբր տէր հաստատուած ու կարծես մոլորած այդ մարդոց հոգեբանութիւնը , ահա այն նիւթը որու մասին կ'ուզէի խօսիլ եթէ ժամանակը չպակասէր : Իրաւ է որ Արեւելեան խնդրոյն պէս կ'ընտոտ խնդիր մը կը շահի՝ սեղմուելով : Միտքը աւելի լաւ կ'ընդգրկէ ինչ որ հատուած առ հատուած իրեն կը ներկայացուի : Պիտի սահմանափակութիւնն ուրեմն այս բանախօսութեանս մէջ միայն երկու դերակատար նկատողութեան առնելու , երկու քոյր ազգերը , Յունաստանն ու Հայաստանը :

Ձենէ շատեր թերեւս պիտի զարմանան որ այսքան մօտիկ ազգականութիւն մը կը նշանակեմ Հայերու եւ Յոյներու միջեւ : Եւ արդարեւ երկու ժողովուրդներուն միջեւ յատկանշական տարբերութիւններ գոյութիւն ունին :

Դուք մենէ աւելի աշխոյժ , աւելի խիզախ էք , աւելի արագ կերպով ձեր որոշումները կուտաք եւ մենէ աւելի հակամէտ էք նորութեանց : Ձեր օրէնքներուն , ձեր սովորութեանց , ձեր հաւատալիքներուն յարած էք այնքան միայն որքան անհրաժեշտ է ձեր ազգային միութիւնը պահպանելու համար , եւ ո՛չ այնքան որ անշարժութեան մէջ ինքաք : Անշուշտ լաւ է , այն միջոցին ուր ազգ մը կը կտրուակերպուի , պահանջել , նոյն իսկ տեսակ մը մոլեռանդութեամբ , որ բարբերու , զգացմանց եւ զաղափարներու համանմանութիւնը տիրէ , սակայն այդ կանոններուն չափազանց անձուկ կերպով հետեւելը մօրացման կ'առաջնորդէ : Բայց դուք ժպտելու ձիրքն ունիք , ուրիշներուն եւ ձեր իսկ մասին ժպտելու , եւ ատով զերծ էք ծանրաբանադաղութենէ : Ձեր միտքը այնքան արագաշարժ է որքան ձեր մարմինը . հակամէտ էք մարդկային մտածման բոլոր խնդիրներն ուսումնասիրելու , բայց ամենէն աւելի յստակ դաղափարները կը սիրէք : Բնազանցութեան ամպերը ձեզ երբեք հաստատ հողին վրայ չեն սայթաքեցուցած , եւ նիւթապաշտութեան մէջ՝ յոռետես եզրակացութեանց վրայ տիրելու չափ երբեք առաջ չէք երթար : Այս չափաւորութիւնը ձեզի առողջ հողի մը կուտայ եւ առնական ուրախութիւն մը որ ձեր խօսքերուն , ձեր ժեսթերուն , ձեր փողոցի աղաղակներուն մէջ կ'արտաշնչուի : Արեւելքը՝ առանց ձեզի՝ թաղթալին պիտի ըլլար : Մովը ձեզ միշտ ճամբորդութեանց հրաւիրած է , դուք սովոր էք ուրիշներուն երկիրները երթալու , ձեր զաղափարներն օտարներու գաղափարներուն հետ չփման դնելու չէք վախ-

նար . ձեզ չողորթութիւնները կ'արհամարհէք , բայց կ'ախորժիք որ ձեր արժանիքներուն վրայ սքանչանան . չէք ծածկեր ինչ որ ունիք լաւ ու գեղեցիկ , կ'ուզէք որ ամէն մարդ զայն տեսնէ ու անկից օգտուի : Այսպէս՝ կը ցանկաք ձեռնէ դուրս տարածել ինչ որ ձեզ ամէն բանէ աւելի կը խանդավառէ , ազատութիւնը :

Մենք՝ Հայերս , ձեռնէ աւելի ծանր ենք : Կարծեմ թէ ձեռնէ աւելի ճիշդ կը տրամաբանենք , բայց դանդաղ կը տրամաբանենք : Ինչ որ ալ ըլլայ , հեղ մը որ գործ մը որոշենք , զայն ի գլուխ կը հանենք կորովով մը ուր մոլեգնութիւն կը խառնուի եւ որ վնասելի չի գիտեր : — Սակայն յատկութիւն մը ունինք որ ձերն ու մերն է միանգամայն , չենք մտածեր որ պէտք է կղզիացած , անշարժ , մեր տեսակին մէջ մէկհատիկ տիպարներ մնանք . յօժակով կը ճամբորդենք , ուրիշներուն երկիրը կ'երթանք , ամէն մէկ ազգի բարոյական առաւելութիւններէն կ'օգտուինք : Այս կարողութիւնները մեր երկրին ֆիզիքական կերպաւորութիւնէն ստացած ենք : Առաջաւոր Ասիոյ կեդրոնը , կղզիի մը նման , ձիւնապատ սարերով համակ ցցուած ու զանգուածեղ , կը բարձրանայ Հայաստանը : Կովկասէն Տաւրոս տարածուող այդ ցուրտ բարձունքներուն վրայ է որ ապրած են մեր հայրերը : Կլիմային խստութիւնը , հողին խորտուրտութիւնները , ձիւնակոյտները , զիրենք կը ստիպէին վարել կեանք մը որ լոկ պայթար կ'ընդդէմ տարերուն եւ բնդդէմ անասուններուն որոնց որսորդութեամբ կը սնանէին : Իժնդակօրէն բայց անկախ կ'ապրէին : Ամէն մէկ ծորձոր , մօտակայ ծորձորներէն կ'իրճերով ու գահավէժներով բաժնուած , իր ուրոյն դիմազմութիւնը կը պահէր : Տիպար մը հոն կը զարգանար՝ մասնաւոր ժեսթով , խօսքերով , երգերով . աւատականութիւններ ծածկեցին Հայաստանի խոստցներն ու կատարները . անոնց բնական , գրեթէ անընդհատական , պայքարները ազգին մարմնոյն արագ յառաջդիմութիւններ կատարել տուին : Յազթուած կողմին կողոպուտը կը ծառայէր յաղթականին՝ ջրանցքներ փորելու , ժայռերուն մէջ ճամբաներ բանալու , նոր ձեւով բերդեր կանգնելու : Եթէ անշարժ ու իրարու հետ միշտ հաշտ մնացած ըլլային , մեր հայրերը միջակութեանէն դուրս պիտի չելլէին : Այդ եղբայրասպան կռիւները , սկարագոյնին պարտութիւնն ունենալով իբրեւ արդիւնք , ազգին մէջ նորանոր ձեւեր ստեղծելու կը ծառայէին : Ասկից զատ Հայաստանը միշտ պարտաւոր եղաւ պատերազմներ մղել Հիւսիսի , Արեւելքի եւ Հարաւի արշաւողներուն դէմ : Այդ պարագաներուն մէջ , թագաւորը , որ Վսնայ լճին մօտ կը գահէր եւ իր սեփական

հողերէն դուրս անուանական իշխանութիւն մը միայն ունէր , հաւանական է որ աւտտական սեպուհներն ի ժողով կը զումարէր . զանոնք իր շուրջը համախմբելու համար , ստիպուած էր զանոնք համոզել . համոզելու համար՝ կը խօսէր անոնց . այդ խոտվասէր սեպուհներուն եւ Տիգրիսին երկայնքը յառաջացող թշնամիին մէջտեղը գտնուելով , պէտք ունէր գեղապատուած ու խանդավառիչ խօսքեր գտնելու : Պէտք էր որ մասնաւոր շահերուն գոհացում տար եւ ընդհանուր շահերուն կարեւորութիւնը պանծայնէր : Ո՛րքան ցաւալի է որ մեր ձեռքը չեն հասած այդ ճառերէն մէկ քանին , ուր թագաւորը , իւրաքանչիւրին խօսածն ամփոփելով , կը պատասխանէր բոլոր փաստերուն եւ վսեմ ազաղակով մը այդ կենսական հոգիներուն խորը հայրենիքի զգացումը կ'արթնցնէր : Կրնանք գոնէ գոհացուցիչ գաղափար մը կազմել այդ վիճաբանութեանց մասին՝ խորհրդածելով Վսնայ թագաւոր Ուրասայի պատմութեանը վրայ զոր հնախօսութիւնը վերաշինեց վերջերս : Ուրսա , իր բովանդակ թագաւորութեանը միջոցին , ամէն տարի շարունակ Ասորեստանի բանակներուն յարձակմանը դիմադրեց . իր խօսուածքին մագնիսութեամբ հովիտներուն սեպուհներն իր շուրջը խմբուած պահեց . երբ իր քաղաքները հրդեհուեցան , եւ իր աստուածներու արձանները փշոտեցան , երբ ինքն իսկ իր ապաստանած վայրին մէջ պաշարուեցաւ , բարձր բլրի մը վրայ ելաւ ու իր զաշնակիցներուն ուղղեց վերջին հրաւէր մը որուն մէջ պատուոյ զգացումը պանծացուց , յետոյ իր սուրովն ինքզինքը զարկաւ : Հիւսնալի ժեսթ , եւ զոր մեր պատմութեան մէջ մէկէ աւելի անգամներ կը վերագտնենք : Թիմուրլէնկի արշաւանքին ատեն , Կարինէ՝ հայ դիւցազնուհին , իր ամուսնոյն գունդերուն գլուխն անցած , թաթար հրոսներուն դէմ անձամբ կը մարտընչէր . երբ բերդի մը մէջ պաշարուեցաւ , անձնատուր ըլլալու գաղափարը մէկդի վանեց եւ ժայռերուն կատարէն անգունդը նետուեցաւ՝ զաւակը բազուկներուն մէջ բռնած : Նմանօրինակ մահով մը մեռաւ Քարամաններուն վերջինը , — այդ հայազգի ընտանիքին որ քաղաքական պատճառներով մահմետականութիւն ընդունած էր՝ Օսմանի տոհմին ձեռքէն արեւելքի կայսրութիւնը խլելու համար : Մուհամմետ Բ . ի գունդերէն պաշարուած , Բիւր-Ահմետ Լաւրինտայի միջնաբերդին գագաթէն ինքզինքը վար նետեց : — Եւ փառաւոր անձնազոհութիւն մը չէ՞ նաեւ Ուրֆայի ու ամբողջ Անատոլիի հազարաւոր Հայերունը , որոնք իրենց զէնքերէն դաւաճանաբար զրկուած , ու մահմետական կամ քրիստոնեայ մնալու մէջ ընտրութիւն ընելու բռնադատուած , մահուան վիճը նախ

ընտրեցին՝ որպէսզի պատիւը անաղարատ մնայ : — Այսպէս, դարերուն մէջէն, կը շարունակուի մեր հայրերուն վայրենի խորտաութիւնը : Այդ բարքերէն կրնաք հետեցնել թէ ո՛րքան բուռն եղան պատերազմները զոր ձորերուն ժողովուրդներն իրարու դէմ կը մղէին : Շնորհիւ՝ մէկ կողմէն՝ այդ ներքին պայքարներուն որոնց առջեւ միայն հասարակ իմացականութիւն մը տիրութիւն կը զգայ, եւ միւս կողմէ արքային ու սեպուհներուն միջեւ կատարուած այն աղմկայոյզ ժողովներուն, հայ ուղեղը կանուխէն ստացաւ վիճաբանութեան ոգին, առանց որու ոչ մէկ յառաջդիմութիւն չի կրնար կատարուիլ :

Մեր հայրենիքները, թէպէտ ձերը ծովուն մէջտեղ եւ մերը ցամաքի մը կեդրոնը զետեղուած ըլլան, շատ տեսակէտներով իրարու կը նմանին : Մեր նախահայրերը, իրենց ձորերուն մէջ մեկուսացած, ժայտերուն պարիսպովն իրարմէ բաժնուած, իրենց անկախութիւնը կը պահէին իրրեւ ընկերական խմբակներ, եւ օտար արշաւանքին առջեւ զաշնակցարար կը միանային, ինչպէս որ ձեր նախահայրերն ալ իրենց կղզիներուն ու պարսպապատ քաղաքներուն մէջ ցեղական ներքին կեանքով մը կ'ապրէին, եղբայրասպան կռիւներով իրար կը ըզկտէին, եւ Բարբարոսին դէմ կը միանային : Դուք ալ մենք ալ հրաբլխային հողի մը զաւակներն ենք : Բաղդը մեր երկու ազգերուն խնայած է բռնապետներու կառավարութեան նպաստաւոր եղող ընդարձակ դաշտերու ձանձրոյթին մէջ մեծնալը :

Սակայն, իրենց քաղաքական շահերուն վրայ վիճելու սովորութիւնը զոր ունէին մեր նախահայրերը, երբեք պիտի չբաւէր Հայաստանի յառաջդիմութիւնը պատճառաւորելու : Մեր ազգը իր յառաջդիմութիւնը գլխաւորապէս կը պարտի վաճառականութեան : Արարատի բարձրադիր սարահարթէն մեծ գետեր կ'իջնեն, Տիգրիս, Եփրատ, Երասխ, Հալիս • այդ ձամբաները որոնցմէ յաճախ արշաւողը մեր երկիրը կը մտնէր, մեր հայրերը կը հրաւիրէին օտար երկիրներ երթալու որպէսզի իրենց բերքերուն աւելորդը այնտեղ ծախեն : Երկու սաստիկ ձմեռներու մէջտեղ, Հայաստանը կը ծաղկի ներուժ կորովով մը : Կարճատեւ բայց յորդառատ են իր գարուններն ու աշունները : Բոլոր գառիթափներուն վրայ ուր ձիւնը նոր է հալած, անհամար հօտերու կեանքի ճիչը կը խառնուի անուշահոտութեանը ծաղիկներու զոր բուսաբանն այլուր չի գտներ : Օդը կը թնդայ խինջիւնովը ձիւն մը որ ուրախ է գետնափոր արտոնէն դուրս ելլելուն՝ ուր ամբողջ ձմեռը փակուած մնաց : Հովը յամբօրէն կը պարտցնէ ժայտերուն մէջ բարձր պտղած

հովուի մը ձայնը կամ պարերգը զեղջիւհուհին, բուն որոնք զետին եզերքը ձապուկ ոտքով լուացքի լաթերը կը ծեծեն : Մեր հայրերը առատօրէն կը քաղէին հողին պտուղները, կաթնեղէններ ու հօտերու բուրդը : Երկաթի հանքերը ճարտար դարբիններ կ'արտադրէին : Մեր հայրերը կարաւաններ կազմեցին : Տիկեր ու ունցուցին ու անոնց վրայ լաստեր դրին : Իրենց ցուրտ երկնքին տակ անապատի ուշտերն ընտելացուցին, զորոնք այս նոր կլիմային պատշաճեցնելու համար բնութիւնն անոնց բրդոտ երկայն մաշեր տուաւ, ինչ որ չունին Արարիոյ ուղեքը : Մեր հայրերը այսպէս ձորերն ի վար իջան, տաք երկիրները տանելով Հիւսիսի խոսաբարոյ հարստութիւնները, դարբնուած զէնքեր, մուշ տակներ, շինութեան փայտ, Հարաւի մէջ անձանօթ պտուղներ, հոտաւէտ տունկեր, եւ բոյսեր որ հիւանդութիւններ կը բուժեն : Ու իրենք ճանչցան, Պարսից Մոցին մարգրիտները, Տիւրոսի վաճառանոցներն ու Յունաց նաւերը որոնց կը հանդիպէին առեւտրական բոլոր մեծ պողոտաներուն ծայրը, նաւահանգիստներուն մէջ, միշտ պատրաստ՝ նախանիւթեր առնելու եւ գործածուած արտադրութիւններ դուրս հանելու : Ձեր հայրերը ծովերուն կը տիրապէտէին • մերինները Արիանէի թեւն ունէին որ Հնդկաստան կը տանի՝ Անատոլուի կնճոտ ձամբաներուն մէջէն : Այսպէս, նախապատմութեան մօտեցող չըջանի մը մէջ, մեր երկու նորածին ազգութիւնները՝ համանման զբաղմամբ մը եւ կարողութիւններով՝ կը պատրաստուէին այն տեսութեանց եւ շահերու միակերպութեան որ քանի քանի անգամ յայտնուած է անցեալին մէջ, բայց երբեք այնքան ակներեւ կերպով որքան այսօր :

Այդ վաճառականական յարաբերութիւններուն զոր ուրուադձեցինք եւ որոնք երբեք չընդհատուեցան, տակաւ առ տակաւ միացան կրօնական, գրական, քաղաքական յարաբերութիւններ :

Աղեքսանդրի աշխարհակալութեան շնորհիւ է որ Հայաստանը, մինչեւ այն ատեն Պարսկաստանին նմանելու չափազանց հոգատար, առաջին անգամ ինքիրմէ տարակուսեցաւ եւ դէպ ի Արեւմուտք դարձաւ : Անկից ի վեր յունական գաղափարներու հոսանքը այլ եւս անդադար անցաւ ու դարձաւ մեր լեռներուն մէջ : Տիգրանի օրով, համաձայնութիւնը կատարեալ էր • Յունաստանի աստուածները, արձանները, սոփեստները, դերասանները, հիւրընկալուեցան Տիգրանակերտ եւ Արտաշատ : Աթէնք, Միհրդատ եւ Հայոց թագաւորը մեծ ճիգի մը մէջ միացան Հռոմի աշխարհակալութեանը դէմ : Յունաստան արդիւնքը կը քաղէր

այն մտաւորական ազգեցութեան զոր Ասիոյ մէջ տարածած էր : Անոնք զոր կրթած էր իր զբաղմանց ու մտածմանը համեմատ , հելլենականութեան արտօնանները զարձան : Ասկից զատ՝ առաջնակարգ տնտեսական պատճառներ այդ զաշնակցութեան ծնունդին նախադասեցին :

Հռոմայեցիներուն քաղաքական յաջողութիւնը արգելք չեղաւ որ հելլենականութիւնը շարունակէր Արեւելքի մէջ ծաւալիլ : Յոյն ուսուցիչները չզաղքեցան հարուստ Հայերը դաստիարակել : Արտաւազդ թագաւորը , իմաստասէրներով շրջապատուած , յունարէն լեզուով ստիպուածեւ ողբերգութիւններ կը շարադրէր : — Յաղթականները կրցան այն բարբարոս ժողովուրդներուն վրայ զոր նուաճեցին Սպարտայի , Վալլիոյ եւ Սկիւթիոյ մէջ՝ ներգործել բարոյական ազգեցութիւն մը որ մինչեւ այսօր կենդանի է , բայց Արեւելքի մէջ իրենք իսկ ստիպուեցան յունական քաղաքականութեան գերազանցութիւնը խոստովանել : — Արդէն , ազգեր որոնք բազմութիւն ունեցողական տարր մը ունին եւ որոնց մէջ աշխատութեան եւ պատճառարանման սովորութիւնները զարգացած են , միապետութեան մը ներքեւ կորսուելու վախը չեն կրնար ունենալ : Բերա Ուժը կարող է , յանկարծակի բերելով , նուաճել այդ ներգաշնակ բաժանումները զոր կը կազմեն ցեղային խմբակները , իրենց շարժումներուն զիւրութեանը համար շատ թեթեւեարով իրարու միացած . կարող է զանոնք միասին ձուլել շփոթ , արուեստական եւ միշտ կարճատեւ միութիւններու ձեւով : Դուք ալ , մենք ալ , մեր գլխուն վրայէն անցնելը տեսած ենք , յանկարծ ելլող հովերու պէս , ու բազմութիւն , այդ մեծահանդէս բռնապետութիւնները . անոնք մենէ ոչինչ պակասեցուցած են : Ընդհակառակն , մինչեւ այսօր մեր ցեղին ամենէն հին կարողութիւնները կը պահենք : Ինչ ալ ըլլան մօտակայ պատահակցութիւնները , մենք լըջօրէն վախնալու բնաւ տեղի չունինք այն ժողովուրդներէն որոնք բանակներ ունին , բայց զուրկ են այն յատկութիւններէն որոնցմով մենք ժամանակն ու մարդիկը կ'արհամարհենք :

Մինչդեռ Հռոմի լուծին ներքեւ կ'ըսած էին , մեր երկու ազգերը , որովհետեւ զբաղումներով եւ ուղեղի կազմուածքով շատ նման էին իրարու , դրեթէ միեւնոյն ատենը քրիստոնէութիւնն ընդունեցին : — Գլխաւորապէս կրօնքով է որ միջին դարուն մէջ նորէն իրար գտանք եւ իրարու հետ զաշնակցեցանք : — Ս. Ժողովներուն ու սինոդներուն վրայ չեմ կրնար խօսիլ՝ առանց ձեզի , եւ ինձի , ձանձրոյթ պատճառելու : Կրնանք սակայն դիտել ընդհանուր կերպով մը թէ՛ քննութեան արտաբանութիւնը , մեր երկու ազգերէն իւրաքանչիւրը յատկանշական տարրեր բերաւ հոն : Ձեր հայրերը աւելի շնորհ , աւելի աւանդակներ , արարողութեանց աւելի մեծ ճոխութիւն մը , մէկ խօսքով՝ շատ մը պատկերներ եւ արտաքին պաշտամունքի բազմութիւն ձեւեր . մերինները՝ աւելի խստութիւն , պարզութիւն եւ տեսակ մը զօրութիւն : Պատկերաճարտութիւնը կամ Արեւելքի ըղբարականութիւնը որ երեւան եկաւ իսաւրեաններու Հարստութեան օրով , օրթոտոքս եկեղեցւոյն՝ մէջ հայկական յղացմանց վաղանցուկ յաղթանակը եղաւ : Արդէն մէկ ազգին ծայրայեղութիւններովը միւսին ծայրայեղութիւնները կը սրբագրուէին : Իրենց զաշնակցութիւնը միանգամայն մըցում կրնար կոչուիլ , — այնպէս որ երբեք ամուլ չմնաց : Երկու ուղիները զիրար փոխադարձաբար կը շորացնէին . մերը ձեռնէ փոխ կ'անէր նրբացում մը առանց որուն ծանրազանգալ պիտի մնար . ձերը՝ մերինին չփութովը՝ նրբամոլութիւններն արհամարհող ու առնական կորով մը կը շահէր :

Կրօնքի համանմանութիւնը , գրական եւ գեղարուեստական ճաշակներու համանմանութիւնը յառաջ բերաւ : Մեր կախկոպոսները Փոքր Ասիոյ եւ Կ. Պոլսոյ յունական դպրոցներուն մէջ կրթուեցան . Աւետարանը թարգմանեցին յունարէն բնագրերու վրայէն , Պղատոն ու Արիստոտէլ ուսումնասիրեցին : Մեր պարբերութիւնը իր ձեւին մէջ յունական գարձաւ առանց հայկական մտածումն ատով նեղելու : Մեր երկուքին գրականութիւնները շատ մը տեսակէտներով իրարու կը նմանին . ինչ որ զանոնք երկուքն ալ կը յատկանշեն՝ երբ Հիւսիսի եւ Արեւելքի արտադրութեանց հետ բազմաւորութիւնն է : Մենք գիտենք մեր ճառերէն ու մեր պատմութեանքներէն յապաւել ամէն ինչ որ անհրաժեշտ է : Ձենք սիրեր ինչ որ չփոթ ու խճողուած է : Դիւրաւ տրուած վերադիրները մեզի անախորժ են . աշխատանքի վարժ , մենք իրերը գլխաւորապէս գրական տեսակէտէն կը նկատենք . կը յարինք այն բաներուն որ իրական եւ յստակ են : Միտիքականութիւնը որ մթին մտքերու մէջ եւ բռնապետական կառավարութեանց տակ կը զարգանայ , երբեք լուրջ ներգործութիւն մը չէ ունեցած մեր ուղեղներուն վրայ : Հայ գասականները ամենքն ալ յունական դպրոցին մէջ կազմուած են , եւ անոնց գլխաւորներուն , Եղիշէի , Փարպեցիի , Եզնիկի , Փաւստոսի քով կը գտնենք սա նախաւորող յատկութիւնները . ծանրախոհ վեհութիւն մը վայելչութեամբ խառն : Պէտք ունի՞մ ըսելու որ ճիշդ այդ տպաւորութիւնն է որ կը կրենք ի տես Ակրոպոլին մարմարներուն :

Կրօնքի համանմանութիւնը , գրական եւ գեղարուեստական ճաշակներու համանմանութիւնը յառաջ բերաւ : Մեր կախկոպոսները Փոքր Ասիոյ եւ Կ. Պոլսոյ յունական դպրոցներուն մէջ կրթուեցան . Աւետարանը թարգմանեցին յունարէն բնագրերու վրայէն , Պղատոն ու Արիստոտէլ ուսումնասիրեցին : Մեր պարբերութիւնը իր ձեւին մէջ յունական գարձաւ առանց հայկական մտածումն ատով նեղելու : Մեր երկուքին գրականութիւնները շատ մը տեսակէտներով իրարու կը նմանին . ինչ որ զանոնք երկուքն ալ կը յատկանշեն՝ երբ Հիւսիսի եւ Արեւելքի արտադրութեանց հետ բազմաւորութիւնն է : Մենք գիտենք մեր ճառերէն ու մեր պատմութեանքներէն յապաւել ամէն ինչ որ անհրաժեշտ է : Ձենք սիրեր ինչ որ չփոթ ու խճողուած է : Դիւրաւ տրուած վերադիրները մեզի անախորժ են . աշխատանքի վարժ , մենք իրերը գլխաւորապէս գրական տեսակէտէն կը նկատենք . կը յարինք այն բաներուն որ իրական եւ յստակ են : Միտիքականութիւնը որ մթին մտքերու մէջ եւ բռնապետական կառավարութեանց տակ կը զարգանայ , երբեք լուրջ ներգործութիւն մը չէ ունեցած մեր ուղեղներուն վրայ : Հայ գասականները ամենքն ալ յունական դպրոցին մէջ կազմուած են , եւ անոնց գլխաւորներուն , Եղիշէի , Փարպեցիի , Եզնիկի , Փաւստոսի քով կը գտնենք սա նախաւորող յատկութիւնները . ծանրախոհ վեհութիւն մը վայելչութեամբ խառն : Պէտք ունի՞մ ըսելու որ ճիշդ այդ տպաւորութիւնն է որ կը կրենք ի տես Ակրոպոլին մարմարներուն :


Աղեքսանդրացի Փիլոնին շատ մը գործերը , Անտիոքացի Ս. Իգնատիոսի Թուղթերն ու Եւսեբիոսի Քրոնիկոնը , որոնց յունարէն բնագիրը կորսուած է՝ հայերէն թարգմանութեանը շնորհիւ ջնջուած փրկուած են : Տարակոյս չկայ որ մեր վանքերը եւ մեր դեռ չխուզարկուած աւերակները ուրիշ շատ անակնկալներ կը պահեն մեզի :

Այդ թարգմանութիւններէն զատ , որոնց անգաղարայնատեցաւ միջին դարու ամբողջ ընթացքին մէջ , մեր բարձր կղերը կը զբաղէր նկարչութեան եւ ճարտարապետութեան արուեստներով : Բիւզանդական որմնակարներ մեր եկեղեցւոյն պատերը զարդարեցին , յունական մեղեդիներ անոնց մէջ սաղմոսերգուեցան . ուրիշներ , աւելի թաւ , զոր մեր քահանաները շարադրած էին , Կ. Պոլսոյ մէջ սորվուեցան : Այսպէս՝ կանուխէն՝ Հայերը գնահատեցին բիւզանդական գմբէթին ամրապնդութիւնը , բայց զայն չընդունեցան իբրեւ գլխաւոր զարդ : Իրենց ճարտարապետութիւնը պահեց իր անկախութիւնը որ իրեն իբրեւ յատկանշական մոթիֆ ունէր սրածայր տանիքով բոլորչի կամ քառակուսի աշտարակ մը : Այդ անկիւնաւոր սրածայր կատարը , որ Արարատին գագաթը կը խորհրդապատկերէ , կը կրկնուի մեր վարդապետներուն սեւ մետաքսէ վեղարին ու մեր քահանաներուն թաղեայ փակեղին մէջ : Կ. Պոլսոյ Ս. Առաքելոց եկեղեցին , թերեւս հայազգի կայսրի մը խնամքովը , այդ կոնստանտինոսի : Հայերը իրենց լեռներուն մէջ վարժուած էին քարի հատուածներ փոխադրել եւ բերդեր կանգնել : Շատ մը ճարտարապետներ եւ որմնագիր բանուորներ Հայաստանէն Կ. Պոլիս եկան : Եթէ յաճախ իրենք չէին յատակագիծը վարողը , հաւանական կը թուի որ ամենամեծ բաժին մը ունեցած են շէնքերուն կառուցման եւ անոնց ներքին զարդարման մէջ : Գիտենք որ ճարտար էին պատերուն վրայ քանդակելու այն արապեսքները որ կարգ ու անկարգութիւն են միանդամայն եւ որոնց արուեստը նոյն իսկ իրենց զրացի Պարսկաստանէն սորված էին :

Միացած այս արուեստագիտական զգայնութիւններով , կրօնական յղացումներով եւ եւ վուզընթաց առեւտրական շահերով , մեր երկու ազգերը ա՛լ աւելի սերտիւ դաշնակցեցան՝ երբ մազդէական եւ յետոյ մահմետական տիրապետութեան սպառնալիքին տակ , Հայը բովանդակ քրիստոնէութեան պատուարը կղաւ : Մեր երկիրը պատերազմի դաշտ դարձաւ : Դարերով , մեր ժողովուրդը դիմազրեց , կոխտուեցաւ , ձիւներուն մէջէն վերականգնեցաւ , կիրճերուն բերանը , քարայրներուն մօտերը , անմասոյց բարձրութիւններու վրայ

երեւցաւ , կորովի ծաղկափթթութիւն՝ ժայռերու մէջ արմատացած : Ամէն տարի անհաւասար պատերազմը կը վերսկսէր : Շատ մը գիւղացիներ , հարուստ ուստանիկներ եւ իշխաններ Բիւզանդիոն գաղթեցին : Իրենց ջարդուած եղբայրներուն վրէժը լուծելու համար , Յունաստանը իրենց հայրենիք ըրին : Ա՛լ այնուհետեւ մեր երկու ազգերը իրարմէ չզանազանուեցան : Կ. Պոլիս ունեցաւ հայազգի պահակազունդ մը , զօրապետներ , նախարարներ , եւ կայսրեր :

(Շարունակելի) ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ



Ա .

Դու լա՛ց ես եղել . այդ ինձ մատուում են Քո խոնաւափայլ աչերը տըխուր .  
Դու լա՛ց ես եղել , այդ ինձ պատմում են Արցունքից հանգած քո այտերը հուր :

Դու լա՛ց ես եղել . ա՛խ արդեօք կըրկի՞ն Չարթնել է անցած օրերից սիրուն  
Անդարձ կորուստիդ յուշը ցաւազին  
Եւ պատճառ դարձել քո արցունքներուն :

Բ .

Լուռ մենութեան մէջ ծովի պէս հանդարտ  
Երբ սիրտըս ծրփում յուշերում անվերջ ,  
Դէպ հեռուն յառած աչերըս անթարթ  
Քեզ եմ ըսպատում լուռ մենութեան մէջ :


Լուռ մենութեան մէջ , շուշա՛ն նազելիս ,  
Ուզում եմ սեղմել քեզ կըրծքիս անվերջ ,  
Քո առաջ բանալ գաղանալի հողիս ,  
Սըրտիս խորքերը՝ լուռ մենութեան մէջ :

Գ .

Ծո՛վ ու մըրըրիկ , սըրտիս հարազատ  
Ձոյգ ընկերներն են արար-աշխարհում .  
Ա՛խ ես սիրել եմ նոցա երգն ազատ  
Ու խորհրդաւոր լացը գիշերում :

Իսկ երբոր մեռնիմ , ես պիտի չուզեմ  
Ո՛չ տըխուր կոչնակ , ոչ խուճիկ երգեցիկ  
Թող մութ ալիքներն իմ մահը գուժեն  
Ու մըրըրիկներն ինձ սուլեն հանգիստ :

Պարել ԱՐԱՄ ՉԱՐԸԳ



ՊԶՏԻԿ ՀԱՅ ԳԵՂՊՈՒԿԻՆ ՊԱՏԱՀԱՐԸ (\*)

ՀԵՐԵԱԹ

— 0 0 —

ԲԻԷՌ ԳԻՅԵԱՍՈՒՆ

Վերջին իրիկունն էր այդ չարագուշակ 1895 տարւոյն ուր Ոճիրը աշխարհիս վերեւ սաւառնեցաւ : Մոլեռանգ ու թալանոգ անբաններու բազմութիւններ խելայեղ կառավարութեան մը հրամանովն արձակուած էին հայ զիւղերուն վրայ : Գանդիչ ուժերը պաշարած էին աշխատութեան ու խաղաղութեան ժողովուրդ մը : Դիմագրութիւնը զոր փորձեցին մէկ քանի երիտասարդներու խմբակներ՝ ջախջախուեցաւ , խուլ ձորերուն խորը , խուռնամբոխ զինուորականութենէն . եւ ծերերուն , աղաքներուն ու կոյսերուն տկարութիւնը զազանի ճերաններու մէջ բզկտուեցաւ ու լըզրճուեցաւ : Ամպերուն մէջէն՝ Չարին զէմքին անցնիլը տեսնուեցաւ , հրճուանքէ ծամածոած . եւ վայրկեան մը կարծեցին թէ Արեւը պիտի մոռնէր :

Հրոսները քաշուած էին հիմա , մահու խըրախճանքը դադրած էր , բայց արհաւիրքը դեռ կը յածէր ամայացած զիւղերն ի վար : Հրդեհուած եկեղեցիներն իրենց վտիտ սեւ կմախքները կը ցցէին . կործանած տնակներն ու այրած արտերը իրենց համր մերկութեանը մէջ կը սրսփային : Փողոցները դատարկ էին : Ողջ մնացողներն իրենց ծակերուն մէջ սմբած կը կենային , աներեւոյթ , որպէս թէ ամենքն ալ հողին տակ ընկլուզուած ըլլային :

Չմեռը կուգար աւարտել մարդկային ձեռքերուն գործը : Չիւնը ճամբաները զոցեց , հաց չունեցող խեղճ մարդիկը բոլորովին առանձնացուց . եւ սպանիչ հովերը կրակ չունեցող խոնարհ հիւղակներուն վրայ խուժեցին :

Այդ կաղանդի նախորդ իրիկունը , ոչ մէկ լոյս երեւցաւ պատուհաններուն մէջ , եւ ձիւնապատ երզիկներէն ոչ մէկ երգ բարձրացաւ :

Գամին կ'անցնէր միջոցին մէջէն , եւ իր ոռնումը , միայնակ , կ'երկարածագուէր ամայի զիւղերուն մէջ , մեծ մահերգի մը պէս :

(\*) Այս հեքիաթին ֆրանսերէն թարգմանութիւնը հրատարակուած է «Մէնքիւս տը Ժուանո»ի 1899 Մարտի թուոյն մէջ :

Սակայն մահը ստերեուցթ էր : Խոռովեալ , դանդաչկոտ ու յամառ գոյութիւններ , ձիւնին տակ ու լուծեան մէջ , կը տեւէին : Հոգիներ խուլ կերպով կը բարախէին սառած աղջամուղջին խորը : Անէճքներ , սղբեր , աղօթքներ ու ցասումներ կը զեռային , աննշմարելի , այդ սոճոյն անշարժութեան մէջ :

Եւ ահա արտակարգ պատահարը որ այդ զիւղերէն մէկուն մէջ , Գ . . . ի մօտերը , տեղի ունեցաւ , վերջին իրիկունն այդ տարւոյն որ մահ հոտեցաւ :

\* \* \*

Դիւղին խրճիթներուն ամենէն տխրոյն մէջ , գիշերուան շատ յառաջացած մէկ պահուն , տասերկու տարեկան տղեկ մը կը յապաղէր մտմտալու : Տեսեր էր՝ այդ աշունին անիծուած օրերուն՝ արիւնոտ աչքերով մարդիկ որ իր հօրը վրայ յարձակեր , բիրի հարուածներով զայն զգեստներ , անոր զլուխը կտրեր ու քնդակի պէս իրարու նետեր ու յետոյ ուրախութեան աղաղակներով մեկներ էին հետերնին քաշկոտելով իր քոյրը , տասերեք տարու աղջնակ , զոր մօրը գրկէն յափշտակեր էին : Իր ամբողջ խեղճ զիւղին հեծելն իմացեր էր մարդկային մրբիկի մը անցքին ներքեւ : Տեսեր էր Տաճիկներ որ փողոցին մէջ զիղուած գիւղներուն վրայ կը թքնէին : Տեսեր էր իրենց փոքրիկ եկեղեցւոյն արամօրէն այրիլը ամբարիշտ ամբոխի մը քրքիջներուն տոջեւ : Անկից ի վեր , տնակին մէջ քաշուած կ'ապրէր , իր երկու պզտիկ եղբայրներուն հետ որ իրենց հօրը ետեւէն կուլային , եւ իր մօրը՝ որ , խենթեցած , հին օրերու խաղեր կ'երգէր : Օրեր անցուցեր էին առանց ուտելու : Ընտանիքի փոքրիկ հայր , գացեր էր աշխատիլ իրենց զիւղին այն մէկ քանի մարդոցը քով , որոնք դեռ քիչ մը ստակ կրնային ունենալ . յետոյ դիմեր էր մօրուեղ , գիրուկ օտարականներու որոնք աղէտքէն ի վեր զիւղին մէջ կ'երթեւեկէին , եւ որոնք՝ իրենց բաշխած հացին փոխարէն՝ պապենական հաւատքին ուրացումը կը պահանջէին : Ատի զինքը ճմլեր էր , եւ այլեւս չէր ուզած տեսնել այդ մարդիկը որ իր երկրին զաւանանքները կը նախատէին : Շատ անգամներ արիւնիւու աստիճան ծեծ կերած էր Տաճիկներէն՝ այն կատաղի նայուածքին համար զոր անոնց կ'արձակէր փողոցներուն մէջ քովերնէն անցած ատենը : Տուն գառնալուն , լոկի մնջիկ ինքզինքը կը կրճէր՝ մտածելով որ անկարող էր աշխարհիս բոլոր Տաճիկները մորթելու :

Տարօրինակ աղայ մը եղած էր միշտ : Ամենափոքրիկ հասակէն իսկ , իր ծնողքին կըշտամբանքներուն դէմ կ'ըմբոստանար : Յաճախ կ'երթար անտառներուն մէջ թափառիլ , օձերէն ու գայլերէն աներկիւղ : Մէկէ աւելի անգամներ գետին հոսանքին մէջ ինքզինքը վտանգած էր՝ անուշադրութեամբ ջուրը ինկած պզտիկ աղջիկներ ազատելու համար : Քիչ կը խօսէր , եւ իր ցանցառ խօսքերուն մէջ վրդովիչ վաղահասութիւն մը ցոյց կուտար . կ'ուզէր ամէն բան գիտնալ : Հարցումները զոր հօրը կ'ուզէր , միամիտ գեղջուկը կը շուարեցնէին : Օր մը հարցուց անոր թէ ինչո՞ւ իրենց գիւղին ծեր վաշխառուն , այդ ա' յնքան տգեղ ու չար մարդը , երջանիկ կեանք մը կ'անցընէր , մինչդեռ իր հայրը որ բարի մարդ մըն էր , օրն ի բուն իր արտի բրդուծին վրայ կըքած , հազիւ կտոր մը հաց կը դոնէր իրեն ու իր ընտանիքին համար . ուրիշ անգամ մը անոր հարցուց թէ ինչո՞ւ մարդիկ Տաճիկներու եւ Հայերու բաժնուած էին եւ ինչո՞ւ առաջինները , ծոյլ , աղտոտ ու բիրտ , վերջիններուն ճակատին քրտինքովը կ'ապրէին ու անոնց դատանքը նախատինքներով ու կեղեքումներով կը վարձատրէին : Հայրը կը պատասխանէր թէ այդ բաները մարդոց հասկացողութենէն վեր էին , թէ երկնքին խորը աներեւոյթ էակ մը կար , բոլոր մարդոց հայրը , մեծ ծերունի մը , Աստուած անունով , որ կեանքը շտկրտած էր իր ըմբռնած ձեւովը , եւ թէ ամէն բանի պէտք էր հանդուրժել՝ քանի որ Հայրը այդպէս կ'ուզէր , որովհետեւ ամենամեծ փորձանքներ յառաջ կուգային եթէ մարդ տրտնջար անոր դէմ : Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար , խորհուրդ տուած էր որ երթայ տեսնուի քահանային հետ որ այս մասին երկայն բարակ կրնար խօսիլ : Քահանան միեւնոյն բանը կրկնած էր , եւ աւելցուցած էր թէ Աստուած երկընքին մէջ երանաւէտ կեանք մը պատրաստած է այս աշխարհիս մէջ չարչարողներուն եւ թէ անկից պիտի վտարուին աշխարհիս չարերն ու հօգրները որոնց կը սպասեն յաւիտենական պատուհասներ : Աղէտքի օրերուն , պզտիկ գեղջուկը տեսեր էր գիւղին ծերունիները որ բազուկներնին երկինք կը բարձրացնէին եւ կը պաղատէին Աստուծոյ որ իրենց օգնութեան հասնի : Բայց Աստուած տեղէն չէր շարժած , ու լիրբ սուրերը Աստուած ազերտող դողդոջուն բերաններուն մէջը մխուեր էին :

Չէր հասկնար . ու գաղափարն ունեցաւ երթալ տեսնել այդ Աստուածը , որուն բարութեան կերպը զինքը կը դարմացնէր , անձամբ անկից բացատրութիւն տանելու համար այս աշխարհիս իրերուն վրայ :

Այդ իրիկունը , ամէն ատենէ աւելի այս գաղափարին կը մտածէր : Երեւ օրէ ի վեր ամբողջ ընտանիքը անօթի էր : Ձիւնը ամէն հազորդակցութիւն կտրած էր : Մնացեր էին միւսմինակ՝ անօթութեան ու ցուրտին հետ դէմ առ դէմ : Այդ առաւօտն իսկ՝ պզտիկներէն մէկը մնակ էր , անօթութենէն հատած , ինչպէս նիհար մոմ մը որ մեծաբոց կրակի մը առջեւ կը հալի : Միւսը , անկիւն մը կձկտած , անձայն ու ա' շարժ կը կենար , քուրջի ծրարի մը պէս : Մայրը , ջղային տագնապներէ ուժասպառ , գետինն ինկած փռուած էր , ծանր թմբութեան մը մէջ ընկղմած : Ու գիշերը ուղղած էր անճրագ եւ անպատուհան խրճիթը , զոր դուրսը սոնացող հովն ուժգնապէս կը ցնցէր : Մութին մէջ տեսաւ , կանգուն , իր հօրը կարուած գլուխը , որուն աչուրները արիւն կուլային : Շուրջն իր եղբօրը մեռնիլն զգաց : Ու այդ սեւ լոռութիւնը կը խեղդէր զինքը : Որոշեց վերջ տալ : Ալ ուրիշ բան չէր մնար բայց եթէ երթալ Աստուած տեսնել :

Լսեր էր որ Աստուծոյ շով ասնող միակ ճամբան մահն էր : Եւ զի ոէր թէ մեռնելու համար պէտք էր երկայն ատեն մտիլ կամ անօթի մնալ : Երկրորդ միջոցը շատ երկար էր : Որոշեց առաջինն դիմել :

Ատանց բառ մը ըսելու կամաց մը դուռը բացաւ , դուրս սահեցաւ , դնաց ձիւնին մէջ պառկեցաւ , ու մահուան սպասեց :

\* \* \*

Այն շաւղէն որով ձիւնի հատիկները երկընքէն երկիր կ'իջնեն , փոքրիկ հոգին դէպ ի վեր թռաւ : Աղջամուղջին մէջէն բարձրացաւ , հովերէն տարուբեր , ձիւնի հատիկներուն զարնուելով , ու շնչասպառ էր երբ հասաւ երկնքին մեծ ոսկի դրանը սեմին առջեւ :

Շատ ատեն անցաւ մինչեւ որ հրեշտակները դոները բացին . կազանդը ասնելու վրայ էին , եւ բաւական սպասցուցին նորեկը , ինչպէս որ նոյն բանը կը պատահի աշխարհիս մէջ՝ հարուստի տուները . այն աստիճան որ ցուրտէն փառցած , անհամբերութենէն կատղած , փոքրիկը քիչ մնաց պիտի զղջար երկրէն հեռացած ըլլալուն . բայց այն գաղափարը թէ վերջաւ

պէս Աստուծոյ հետ պիտի խօսէր, — արդէն մտքին մէջ պատրաստեր էր այն մէկ քանի ծանր խօսքերը զոր անոր պիտի ըսէր, — եւ Աստուծոյ բերնէն խկմեծ բացատրութիւնն իմանալու յոյսը, զինքը սրտապնդեցին, համբերութիւն ու քաջութիւն տուին իրեն :

Բայց երբ դուռը բացուեցաւ, իր աչքին պարզուած տեսարանը զինքը այնքան զմայլեցուց որ վայրկեան մը ամէն բան մոռցաւ : Հեշտական գաղջութիւն մը զինքը պարտօրեց, փայփայիչ, թուլացուցիչ : Այդ տեղը լեփ-լեցուն էր լոյսերով, ու պաշտելի բուրուճներ կը ծածանէին հոն, որպէս թէ շատ մեծ ու շատ չքեղ եկեղեցի մը ըլլար, շատ աւելի գեղեցիկ քան երկրիս վրայ տեսնուածները :

— Ո՞վ ես դուն, հարցուց դուռը բացող հրեշտակը : Նեղսիրտ ձեւ մը ունէր, խրախճանքին ճիշդ մէջտեղը այս անակնկալ այցելութեան անհանգիստ եղած ըլլալուն համար :

— Երկրի տղայ մըն եմ ես, պատասխանեց պզտիկը :

— Ի՞նչ մտածելով այս ատեն, ու այս գիշեր, ելեր եկեր ես : Ի՞նչ կ'ուզես : Անցագիր ունի՞ս :

— Չունիմ եւ չեմ գիտեր ատոր ի՞նչ ըլլալը : Ես տղայ մըն եմ որ մէկուն գէշութիւն չէ բրած, եւ կ'ուզեմ Աստուած տեսնել :

Հրեշտակը դարձապէս էր քահանայէն վկայագիր չունեցող եւ ներս մտնելուն պէս Աստուծոյ հետ տեսակցութիւն մը խնդրելու համարձակող այս հոգիին սարօթինակ ժամանումէն : Բայց տղեկը կը պնդէր . կ'ըսէր թէ շատ կարեւոր բաներ ունէր Աստուծոյ ըսելու . եւ մատաղաշ ալ էր ու շատ սիրուն . հրեշտակը հաւանեցաւ զայն Աստուծոյ մօտ տանիլ, պայմանով որ անհարկի բան մը չընէ :

Սրահէ սրահ, առաջնորդեց զայն Արքայութեան մեծ ամփիթաօրը, ուր այդ երկուները Աստուած հրեշտակներնու արգարները հաւաքած էր՝ կաղանդը տօնելու համար :

Ի՞նչ աղւոր էր : Տղեկը, շլացած, կը գիտէր : Սրահները որոնցմէ կ'անցնէին, շատ աւելի մեծ էին քան իր երկրին գաշտերը : Օդը հոն լուսաւոր էր եւ փաղիփուր նրանգներով խայտաբղէտ : Ձեղունները հեռաւոր ու էին խոլունի՝ երկինքներու պէս, եւ արտակարգ գոյներով աստղեր հոն կը պտուտքէին անպատում երաժշտութիւնով մը : Անծանօթ անուշահոտութիւններ միջոցին մէջ կը ծածանէին : Հրեղէն ծառեր կը ցնուէին, պրիսմակաթոյր բոցերով տերեւաւորուած, արեւներ կրելով իբրեւ պըտուղ . մեծ կապոյտ թռչուններ, փոսփորափայ-

լական թեւերով, ծիածանաձեւ պոչերով . երգելով կը թռչտէին : Կակուղ ու թաւշենի յատակէն կը սլանային մեծ ծաղիկներ ներդաշնակ ձեւերով եւ որոնց բաժակները կ'նշդէմքերու պէս կը փթթէին :

Այս ծայրայեղ պերճանքը, այս փափուլութեանց առատութիւնը տղեկին ախելժ ու մակոտ հոգին կ'ընդարձայնէին : Բոլոր այդ բաները ա՛յնքան քաղցր, ա՛յնքան արբեցուցիչ էին որ վախցաւ թէ տկարահայ եւ հարկաւոր ուժգնութեամբը խօսելու անկարող դատնայ : Գերագոյն ճիգ մը ըրաւ, եւ մտածումը սեւեռեց յիշատակին վրայ իր ընտանիքին զոր վարը թողած էր տառապանքի ու խաւարի մէջ :

— Աճապարե՛նք, խնդրեմ, ըսաւ ծերունի հրեշտակին որ զինքը կ'առաջնորդէր : Կ'ուզեմ անմիջապէս Աստուած տեսնել :

Հրեշտակը կը վարանէր :

— Գժուար է այս ժամուն զինքը տեսնել : Արդէն ան սովորութիւն չունի պզտիկ տղոց հետ խօսելու : Աւելի լաւ է որ իր գիւնաազպիւրներէն մէկը տեսնես :

— Կ'ուզեմ Աստուած տեսնել, պնդեց տղեկը :

Վերջապէս հասան մեծ ամփիթաօրը : Անհամար բազմութիւն մը այնտեղ շարուած էր ճոխ խնջոյքի մը շուրջը : Տղեկը մօտեցաւ : Պերճափարթամ սեղանը կ'երկննար, երկնաւոր համազամներովը ծանրաբեռնուած : Հաղար տեսակ խորտիկներու, կարկանդակներու եւ մրգեղէններու մէջ, նշմարեց, չողչողուն աւնօթներով՝ կաղանդի համբաւաւոր հայկական կերակուրները, Արքայութեան եղանակով պատրաստուած . անուշապուրը, հոտուն արշալոյսով շինուած, լուսիններով պճեղուած, ու վրան ծիրկաթինի փոշի ցանուած . քրքմաներկ փիլաւը, յաւերժական ճիւղով յօրինուած, հրեշտակի աչքերով զարդարուն, արեւծագի դեղինով երփնուած . դոնդողը, ամստուան երկնքի ամպերով կազմուած, աստղի կտորուանքներով ծակծկուած եւ լուսնի լոյսով փռչեցան : Այդ բոլորը կը փողփողէր, կը պսպղար լոյսերու եւ ծաղիկներու խօլ գեղխութեան մը մէջտեղը : Եւ սեղանին չորս կողմը, մերկ սերորէներու օգածածան հոյլեր անվախճան երանութեան տաղը կ'երգէին՝ կուսական հոգիի գոյնով եօթնադեաններու նուազման ընկերակցութեամբ :

Մեր հրեշտակն էր որ խնջոյքին այս մանրամասնութիւնները կը բացատրէր :

Տղեկը ակնարկ մը պտուղցուց կոչնականներուն վրայ :

«Անշուշտ, կը մտածէր, այս հոգիները որ այստեղ, տիրոջը տան մէջ, կը հրճուին, հոգիներն են այն մարդոց որ վարը դժբաղդ եղան եւ բարի եղան» Յանկարծ, կոչնականներէն մէկը ճանչցաւ. իրենց նախկին դիւղապետն էր, առջի տարին մնաած, խարդախ, բիրտ, յափշտակիչ, կեղեքիչ, կեղծաւոր ու շատ շար մարդ մը: Քիչ անդին, նշմարեց վաշխառուն, իրենց գիւղին ահռելի վաշխառուն: Եւ ահա, ո՛վ արհաւիրք, տեսաւ Տաճիկներ, որոնք վայրագ ախորժակով մը խոշոր պատաններ կուլ կուտային, որպէս թէ մորթուած մարդու գլուխներ լափէին: Աչքերուն չհաւատալը եկաւ, Վիթխարի զայրոյթ մը կողորդը սեղմեց: Աչքը վերէն վար պտըտցուց կոչնականներու երկայն շարքին վրայ. ամենքն ալ պարարտ, այտեղ, ինքնագոհ հոգիներ էին, ապուշ ու անգուլթ կերպարանքով մը: Ուշադրութիւնը գրաւեց կլորիկ, ուռած, շատ տգեղ հոգի մը, որ աղւոր քերորէ մը կը փայփայէր՝ իր լայնաբաց երախին մէջ աստղեր ընկլուզելով:

— Ո՞վ է այդ մարդը, հարցուց հրեշտակին:

— Երկրի վրայ սեղանաւոր էր ան:

Ուրիշ մը, նիհար, կանաչորակ մոյնքով, աչքերը արիւնով ողողած, զաղիք ծիծաղով մը կը խնդար:

— Ո՞վ է այս մարդը:

— Երկրի վրայ սուլթան էր ան:

Տղեկը կատաղութենէն ցատքեց: Գիտէր թէ ինչ կը նշանակէին այդ սուլթան եւ սեղանաւոր բառերը: Իր հայրը երբեմն տարտամօրէն խօսած էր անոնց մասին: Ի՞նչ գործ ունէին այդ թշուառականներն Աստուծոյ տանը մէջ:

Ձգեց իր ծեր առաջնորդը, եւ խելայեղ վազքով մը դէպ ի Աստուած սլացաւ: Չայն նշմարեր էր հեռուն, սեղանին գլուխը, համաստեղութիւններով գրուագուած ու լայն վարդագոյն ամպհովանիով մը ստուերուած մեծ ոսկի ակնոցի մը վրայ:

Հրեշտակներու հոյլերը կը կենային անշարժ իր գլխուն շուրջը, հրամաններուն սպասելով: Քովերը ունէր պապեր, սուլթաններ եւ կայսեր որ իրեն թոհաֆ պատմութիւններ կը պատմէին, զինքը խնդացնելու համար: Ծերուկ, մօրուքին բոցավառ մացառին մէջ կնճած դէմքը խորասոյզ, աչուրները փարոսներու պէս կարմիր, հսկայ պատաններ կը կլէր անբեկիչ որկրամոլութեամբ մը:

Յանկարծ, ձայն մը թնդաց, անակնկալ, տարօրինակ, սրագոչ թէեւ մանրիկ.

— Տէ՛ր, մտի՛կ ըրէ ինձի: Տղեկն էր:

Գլուխները ասդին դարձան, իրարանցում մը յառաջ եկաւ, եւ Աստուած յօնքերը պոստեց:

— Տէ՛ր, շարունակեց փոքրիկը, ես երկրի տղայ մըն եմ, եւ ինձի ըսած են թէ դուն բարի ես: Տեսայ որ բարիները կը տատապին հոն եւ շարերը երջանիկ են ու հօօր: Եկած եմ քեզի հարցնել այս անխրաւութեան բացատրութիւնը: Բայց կը նշմարեմ որ հոս քու սեղանդ ընդուներ ես ոչ թէ մեր աշխարհին դժբաղդները, այլ սրբիկաներն ու ճիւղակները: Իրա՞ւ է ուրեմն որ դուն մարդոց հայրն ես, իրա՞ւ է որ դուն բարի ես: Պատասխան տուր:

Հրեշտակները վրդովիւր էին, սերորէները երգելէ դադար, շատակեր երախներն այլ եւս չէին շարժիր. ապշութեան սարսուռ մը սեղանին շրջանն ըրեր էր: Փոքրիկ սուր ձայնը անաւոր հնչականութիւն մը ստացած էր այդ մէկ քանի բառերն արտասանելով:

Աստուած ասդին էր դարձեր, դէմքը ծամածուած, արիւնը գլուխն ելած. իր խորին անգունքները բարկութենէ կը մխային:

— Այդ պզտիկ ստահակը դռնէն դո՛ւրս ըրէք, խանչեց, եւ գիտաւոր աստղերով խարագանեցեք հրեշտակը որ զինքն իմ Արքայութեանս մէջ մտցուցեր է:

Այն ատեն սրտմտութիւնն ընդլայնեցաւ ու բարձրացաւ պզտիկ ապստամբին հոգիին մէջ: Եւ այդ սրտմտութիւնն այնքան մեծ, այնքան գեղեցիկ էր որ տղեկը վայրկեան մը կարծեց թէ իր կատաղութեանը պայթումովը պիտի կարողանար օդը հանել բոլոր այդ ստութեան տունը՝ այդ գէշ հայրովը մէկտեղ:

Կուլփը ցուցուց Աստուծոյ, ու թքաւ գէյլ ի ան:

Իսկոյն պաշարուեցաւ երկնաւոր ծառաներէն: Եւ ահա իր աչքերը մթնցան, իր շուրջն ամէն բան ցնդեցաւ, եւ զգաց որ կը գահավիժէր լուսեման մէջ, խաւարի մէջ ու ցուրտի մէջ: Բայց յանկարծ տեսաւ կապուտակ ստուեր մը որ զինքը պարուրեց. տրտում քաղցրութիւնով մթին դէմք մը իր առջին երևցաւ. սեւ ու տաք թեւեր զինքը բռնեցին իր անկուսին մէջ. եւ խորունկ ձայն մը ականջն ի վար փախաց. «Եկո՛ւր ինձի հետ. ես Վռնտուածն եմ ու Ապստամբը. ես Եղբայրն եմ դժբաղդներուն. եկո՛ւր ինձի հետ. մենք պիտի կործանենք Աստուծոյ Տունը»:

## ՄԵՏԵԼՈՅԻ ՅԱԺԱԲԱՆՔ

## ՈՐԲԵՐԸ

...Ու դարձեալ հոգիիս փոռոյիներէն կ'անցնիս ,  
 Մահապարտներու պաղատող նաշուածներով ,  
 Ապաշխարանքի կերոններ ձեռնընկնի ,  
 Ու պաշտամունքի բուրփառներ դանդաղորէն խնկարկեշով :  
 Օ՛հ, իրենց կարուստ' քը սժգոյն լիսիսի ուխտաւորի .  
 Որ ա' յնչափ երկիրոյս ու մահագոյժ ու խոհուն ,  
 Դեպ ի նուիրուը ասուածայի ճարին անհունօրէն կ'երկարի :  
 Այս գիշեր, հսկումէն յետոյ , Մեռելոցի իրիկունն ,  
 Օ՛հ, Անոնք հոն բոյորն աչ իրենց Մահերը պիտի ճանչնան ,  
 Հոգիիս անդնդայի մեռելասանիկն վրայ ,  
 Անասնեանօրէն իրարու հետ , ճակաս ճակասի ...  
 Ու արդէն , խեղցեղօրէն բոյորը մեկ ,  
 Գերեզմաններուն վրայ ծռակի եկած՝  
 Մեռելներու յանախակէն իրենց հոգիները անաբեկ ,  
 Ու գոյխն ձեռնընկուն մեջ ու աջուրնիկն փակած ...  
 Իրենց ցաւին սարփաւ տի արիւնը կուշան ... :

Օ՛ , չըլլայ որ երբեք այս գիշեր խնկն վրաս մտածեք ...

Ասումա՛ծ , մտի ըրեք սա ընդհարումները մարմիններու ,  
 Ու բոյոր որբերը որ ա' չ կը փաքքունին  
 Փոքորկոսօրէն գերեզմաններէն բարձրացող ամեհի կուսիքներուն ...  
 Ու այն բոյորին ճիշերը որ իրար կը ճանչնան ...  
 Ու անոնցը որ խեղքօրէն իրար կը փնտնեն ...  
 Ու դեռ իրարու ետեւեւ  
 Բացուող հողերուն մերկուը սառնց հետ ,  
 Ու անոնց աղերսը որ դեռ իրար կ'ուզեն ...  
 Ու երդումները անոնց որ ա' չ իրար պիտի պաշտեն առ յաւիտ ...  
 Ու անոնք որ իրար երբեք չճանչցան ...  
 Ու դեռ անոնք որ մեկմեկու մեջ ինքզինքնիկն պիտի զննեն ...  
 Ու անոնք որ վերջապէս այս գիշեր, այնչափ չարաշուփօրէն իրարու բաղիկեցան .  
 Ու փախո՛ւ շուք սառնց, այս անեւուն, այս բոյորին ,  
 Իրարու մեջէ, մահագործօրէն վայրագ ու խոշախան ,  
 Դեպ ի ո՛ր հեռաւոր հորիզոններէ իմ հոգիին  
 Ու դեպ ի ո՛ր Ասումածը քերտու աւելի ոճրական ,  
 Օ՛հ , ա' չ վերջապէս , եղբայրաբար ըսեք ,  
 Խեղապարօրէն, իրարու մեջ , բոյորը մեկ պիտի երթան ... :

ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ

# ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

## Ե Զ Ի Տ Ի Ն

Շար . (\*)

Զ .- ԵԶԻՏԻՆԵՐՈՒ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՒ ՆԱԽԱՊԱՆՇԱՐՈՒՄԻՆԵՐԸ

Եզիտիներու աւանդապահները շեխ ու փիւր այր ու կիւներն են : Ասոնք կ'ըսեն որ իրենք արեւը տիեզերքի տէրը , ամենակարող եւ հըզօր , անծնունդ եւ անմահ ընդունելով՝ աւանդաբար կ'ընդունին եւ կը հաւատան որ անոր զօրութեան , անոր կարողութեան խտացումը , անոր լոյսէն մաս մը մարմնաւորուած՝ մարդոց կերպարանքով՝ շատ անգամ երկրիս վրայ կը յայտնուի , առանց մարդոցմէ ծնուելու եւ առանց մահուամբ վախճանելու : Կ'ըսեն որ արեգակնային այդ զօրութիւնը երեւցած է Անուահան անուն ազգի մը ախրապետութեան ժամանակ . թէ այդ միեւնոյն կարողութիւնը միեւնոյն կերպարանքով , եւ առանց երբեք մարդոցմէ ծնուելու , եւ առանց մեռնելու , երեւցեր է աշխարհիս վրայ ուրիշ շատ անգամներ ու երկրիս արարածներուն կարգապահութեան օրէնքներ է սուեր , բայց մարդիկ չեն հետեւած անոր օրէնքներուն , միշտ մերժած են զանի եւ ապրած են միշտ անկարգ ու անօրէնք :

Աւանդութիւններ պահող շեխերը կ'ըսեն որ արեգակնազօր այդ էութիւնը տեսած են միայն իրենց նախահայրերը , եզիտի շեխերը , եւ ատոր համար այդ զօրութիւնը անուանուած է «Շեխան տի» (այսինքն շեխերէ տեսնուած) եւ կամ «խօ տի» (ինքը տեսաւ) : Կան այնպիսի շեխ ցեղեր որ կ'ըսեն թէ այդ միեւնոյն անձնաւորութիւնն եւ միեւնոյն բառերու կրճատումն է ինուտա կամ իսօտէ (\*\* ) բայց կան այնպիսի շեխեր որ կը հերքեն այդ բացատրութիւնը :

Կ'ըսեն նաեւ թէ եօթ հրեշտակապետներ կան երկրի վրայ յաճախ շրջող , որոնցմէ ամէն մէկը արեւուն մէկ գոյնը կը ներկայացնէ եւ իրենց անուններն են՝ Ազրայէլ , Ճիպրայէլ , Ազրազէլ , Միքայէլ , Ազրաֆէլ , Դուրապէլ եւ իմամազէլ որ իրենց հրամանները կատարող հրեշտակներն ունին :

(\*) Տես «Անահիտ» , Ա. տարի , թիւ 12 , եւ Բ . տարի թիւ 1—2 :

(\*\*) Քրիստոնեաներու ներկայութեան կ'ըսեն թէ Քրիստոսն եւս կ'ընդունին որպէս արեւի լոյսը եւ զօրութիւնը որ Շեխանտիէն փոքր է եւ շատ յետոյ աշխարհ

Եզիտիները իրենց նախահայրերու գոյութիւնը Ազամէն շա'տ առաջ կը համարին : Իրենց նախահայրերու ստեղծագործման մասին եղած աւանդութիւնը , — որով կը հպարտանան եւ օտարէն կը պահեն , — չեմ կրցած գիտնալ , իսկ Ազամի ստեղծագործութիւնը այսպէս կը պատմեն : Իրենց այս առաւելութիւնը տալով , կ'ըսեն որ Ազամի ստեղծագործութենէն առաջ Եզիտի շեխ ցեղը երեք գլխաւոր բաժանում ունեցեր է՝ Շեխէ Բապրան կամ Շեխէշեխան , Շեխ Սնան եւ Շեխ Շամսան , թէ Շեխ Շամսանները Ազամէն առաջ չորս տոհմի են բաժնուած . — Սջատիան , Նասրատիան , Շամսատիան եւ Մալաք-Ֆախրատիան , — կ'ըսեն որ Մալաք-Ֆախրատին տոհմի հիմնադիր Ֆախրատիի օրով Շեխանտիի երեւցեր է երկրի վրայ , իրեն պարտէզ մըն է անկեր ու Ազամը ստեղծելով իր պարտէզին պահապան է կարգեր , եւ թէ Ֆախրատիը այդ ատեն Շեխանտիի եւ հրեշտակապետներու առջեւ ծառայելով՝ մասնակցեր է Ազամի ստեղծագործութեան եւ Շեխանտիէն «մալաք» տխուր ընդուներ :

Ազամի համար կ'ըսեն՝ երբ անգամ մը գեւտինը հերկելու կ'ելլէ , հողին մէջէն մարդու մը գանկը կը գտնայ եւ ինքը՝ շատ իմաստուն՝ կը գուշակէ որ իրմէ առաջ գոյութիւն ունեցող մարդոց նախահայրը Ալամ անունը ունեցեր է :

Երկրի ամէն կողմ ջրհեղեղով ծածկուել եւ միայն Նոյի ու իր տապանակի մէջ եղած արարածներու ազատիլը հերքել կողգին : Կ'ընդունին թէ ջրհեղեղ եղած է եւ անով երկրի մէկ մասի բնակիչները միայն են խնդրուած ,

եկած : Թէ ինքն Շեխանտին է որ եզիտի շեխի կերպարանքը մտած Քրիստոսին օգնութեան է հասեր , բայց տեսնելով որ զանի արդէն խաչին վրայ են դամաձ եւ միայն գամ մըն է մնացեր այդ գամը անյայտացուցած , եւ Քրիստոսի հոգին ու անոր արեգակնային զօրութիւնը իր հետը աւանդելով տարած է : Բայց ինչպէս ըսի նախապէս այս պարագայի մէջ կը կեղծեն , որովհետեւ նախ որ Եզիտիները իրենցմէ գտտ բոլոր ազգերը խառնուած եւ պիղծ համարելով չեն ընդունիր որ արեգակնային զօրութիւնը անոնցմէ ծնած ըլլայ , եւ թէ Շեխանտին՝ որ արեգակնային զօրութեան կը ծանչնան՝ մարդէ ծնուելը չեն ընդունիր , հետեւաբար արեգակնային զօրութեան չեն կրնար ընդունիլ մեր աստուածորդի Յիսուսը որ մարդոցմէ ծնաւ եւ մահուամբ մեաւ (թէպէտ ըստ մեզ մեռնելէ յետոյ յարեաւ) :

Անգամ մը աւանց իմ ներկայութիւնս գիտնելու մտիկ ըրած եմ իրենց մահմետական փիւրտերու հետ ունեցած խօսակցութիւնը . այդ խօսակցութեան մէջ կ'արհամարհէին քրիստոնէութիւնը եւ զիրենք կրօնքով մահմետական , Մուհամմետը մարգարէ ընդունող կը ձեւացնէին , մինչդեռ նոյն մարդոց Մուհամմետին հայհոյելը տեսած էի ուրիշ ատեններ : Այս հետեւութիւններով համոզուած եմ թէ Եզիտիները աւանց քրիստոնեայ կամ մահմետական կրօնքներու ազդեցութիւնը կրելու պահած են իրենց կրօնքը :

եւ իրենց ցեղերու բաժանումը որմէ մաս մը Աղբաւն եւ մաս մը ջրհեղեղէն առաջ կը հաւ մարեն կ'ըսեն որ անխառն մնացած է մինչեւ այսօր :

Շեխանտի աշխարհ գալու պատմութեան մէկը հոս ներկայացնեմ :

Կ'ըսեն որ Շեխանտի անգամ մը երեւցած է Շանգալի մէջ . աշխարհի բոլոր իմաստունները , մանաւանդ արաբ իմաստունները լսելով անոր մասին խօսուածները, ձեռք(թերեւս վագր) անուն ահաբիւր գազանը կը յաղթեն եւ օձերով սանձելով կուգան անոր հետ մրցելու : Շեխանտին, անոնց գալը գիտնալով , իր Մամառաշա ծառան զանոնք գիմաւորելու կը զրկէ , եւ ան աղօրիքի քարի մը վրայ նստելով քարին կենդանութիւն կուտայ եւ կը յառաջանայ : իմաստունները այս հրաշքէն ահաբեկած կ'ուզեն անմիջապէս ետ երթալ, եւ Մամառաշա, զգալով զայս , կ'ըսէ անոնց . «Հողածիններ, ո՞ւր կուգայիք եւ ինչո՞ւ կը դառնաք , ո՞վ կը փնտռէիք կամ ո՞րո՞ւ համար եկած էիք , պատասխանեցէք» . իմաստունները կը լռեն եւ ինքը կ'աւելցնէ՝ «Ես գիտեմ ո՞վ կը փնտռէք, ահա հոն է , որ վէտ մը ճեղքած՝ ճեղքին մէջ կ'ապրի , գացէք եւ տեսէք զինքը» : Իմաստուններ վէմին կը մօտիկնան եւ ճեղքուածին մէջ մտնելու անկարող , կ'ըսեն անոր . «Ո՞վ հօր իմաստուն , մենք ալ իմաստուններ ենք , բնութիւնը մենք ալ կրցած ենք հնազանդեցնել մեր կամքին՝ շատ անգամներ , բայց մեր կարողութիւնը աննշան է քու առջեւդ, եւ մենք կը չուարինք թէ ինչպէս այս բազմութեամբ վէմի մը պատուածքին մէջ պիտի սղմինք , միթէ մենք մթեղներ ենք որ ճեղքին երկու կողմը փակչինք» :

Այն ատեն Շեխանտին կը հրամայէ վէմին բաւցուիլ եւ հիւրերը տեղաւորել եւ իսկոյն վէմը կը հնազանդի : Քիչ յետոյ իմաստունները կ'ուզեն լուացուիլ , մաքրուիլ եւ աղօթել . Շեխանտին կ'ըսէ որ լուացուելու պէտք չկայ , եւ ամենագովելին է այն աղօթքը որ մարդ մը անկեղծ սրտով , եւ հանգիստ խղճով կը կատարէ , հոգ չէ թէ մարմինը աղտոտ ըլլայ : Բայց իմաստունները կ'ուզեն լուացուիլ . այն ատեն գաւազանը վէմին զարնելով ջուր կը բղխեցնէ եւ իւրաքանչիւր իմաստունին համար կտոր մը օձառ : Յետոյ իմաստունները, առանց անոր հետ մրցելու , կը հարցնեն իր ով ըլլալը , կ'իմանան որ անծնունդ է եւ կը հաւատան անոր սուրբ եւ երկնային ըլլալուն : Ասոր համար Եզրիսները «տպրէստ» չեն ընեն , եւ կ'աղօթեն առանց լուացուելու :

Մամառաշաի համար եւս կը պատմեն ուրիշ շատ մը հրաշագործութիւններ , եւ կ'ընդունին

որ ան ալ մարդոցմէ չէ ծնած եւ մահով չէ մեռած : Հին աւանդութեանց լաւ հմուտ շեխեր Շեխանտին, Խօտէն ընդունելով կ'ըսեն որ Մամառաշա նոյն ինքն Մէալիքի-Տաուզն է . թէ այս երկուքն երբեմն երկրի վրայ իրարու հետ յարաբերութիւն ունեցած են , բայց կան այնպիսի շեխեր որ այս կէտը տարբեր կը բացատրեն :

Մէալիքի-Տաուզը սա պէս ալ կը մեկնեն՝ Տաուզ (մետաղ) , Մէալիք (իշխող , տէր) եւ Մէալիքի-Տաուզ (մետաղեայ աստուած) կ'ըսեն որ իր եօթը նմանները ունի (եօթը կուռքեր) . անոնք աշտանակներու վրայ են շինուած սեւ հաւի մը կամ աղաւնիի մը նմանութեամբ , եւ թէ անոնք ո՛չ կը կոտորուին , ո՛չ կ'այրին , ո՛չ կը ժանգոտին եւ ո՛չ կը պակսին : Մետաղը , որմէ այդ կուռքերը շինուած են անծանօթ է կ'ըսեն , թէ այդ կուռքերը Մէալիքի-Տաուզի հողոյն պատկերը կը ներկայացնէին եւ այժմ «անտեսանելի են մարդոց եւ կորսուած» , եւ թէ անոնց վրայ երկնային գրեր եւ կնիք կան եղեր :

Շանգալիէն եկող զաւաւները (պատուիրակ) իրենց հետ կ'ուեննան այդ արձաններուն նմանութեամբ ձուլածոյ աղաւնիներ որով եղիտի գիւղեր կը շրջին եւ տասանորդներ կը հաւաքեն : Որ գիւղ որ մտնեն , գիւղացիները պարտաւոր են գիւղէն դուրս եկած զանոնք զիմաւորել . այդ միջոցին պատուիրակ շեխերէն մէկը , առնելով աղաւնիի տուփը որ կ'աչեայ պարկի մը մէջ դրուած կ'ըլլայ , գիւղապետի վզէն կը կախէ եւ այն ատեն միւս պատուիրակներն իրենց գրպաններէն հին ձեռով փողեր կը հանեն եւ տխուր երգեր եղանակելով գիւղը կը մտնեն : Ասոր հետ ունին «ուխտի ճրագ» բազմակողմանի լուսասփիւռներով , որուն մէջ կը վառեն բոյսերէ բաղադրուած մեղի անծանօթ տեսակ մը հեղուկ : Օտարագրիներէ այս արարողութիւնները կը թաքցնեն :

Շեխերու համար սա աւանդութիւնը կայ . իւրաքանչիւր շեխը ունենալու է մագէ հիւսած գլխարկ մը որուն «թաճ» կ'ըսեն . եւ երբ ո եւ է շեխ մէկի մը հետ կուռի բռնուելով անոր առաջին հարուածը թաճով տայ ու յետոյ եթէ նոյնիսկ մահացու վէրք տայ անոր , Եզրիսներու առջեւ արգար կը նկատուի , իսկ եթէ առանց նախապէս թաճով զիմադրելու կուռի բռնուի ու նոյն իսկ իրաւունք ունենայ եւ վիրաւորուի՝ նախատանաց եւ բանագրանքի կ'ենթարկուի : Իսկ փիբերու համար կ'ըսեն որ երբեմն քառասուն տոհմ են եղեր , եւ իրենց Փիբէ-չըլ-փիբան փոհմէն յայտնուել են «որմտար»ներ (մարդարէ , գուշակող) որոնց հրաշագործութիւնները մինչեւ հիմա կը խօսուին :

Շեխ ու փրկերը կը պատմեն նաեւ ուրիշ աւանդութիւններ որ նմանութիւն ունին Ս. Գրքի, Հրէից պատմութեան գրուածներուն, եւ այս բոլորը իրենց կը վերագրեն. անոնք կը թուեն իրենց նախահայրերու Շեխանտիին հետ ունեցած յարաբերութիւնները, անոր հետ ունեցած տեսակցութիւնները, զանի հիւր ընդունիլը, անոր ոտքերը լուալը, եւն. նման այն աստուածային ընդունելութեան որ Ս. Գրքին մէջ կը գտնենք Աբրահամի, Իսահակի, Ղովտի, Մովսէսի եւ ուրիշ նահապետներու ու մարգարէներու ժամանակ: Սխալ կ'ըլլայ ըսել թէ Եզրտիները մահմետական կամ քրիստոնեայ ազգերու հետ չփոխելով՝ անոնցմէ հասկցած Ս. Գրքի այս անցքերը, իրենց նախահայրերուն եւ իրենց Շեխանտիին ենվերագրած, որովհետեւ եթէ Եզրտիներու այս աւանդութիւնները ամբողջութեամբ հաւաքել կարելի ըլլայ, պիտի տեսնուի որ Եզրտիները ոչ միայն մահմետականներէ կամ քրիստոնեաներէ փոխ առած չեն, այլ Ս. Գրքի անցքերը մինչեւ Մովսէս ուրիշ բան չեն բայց եթէ այսպիսի աւանդութիւններու ծաղկաքաղ ընտրութիւնը եւ բարեփոխումը: Հետաքրքիր է գիտնալ թէ արդեօք Ս. Գրքի մինչեւ Մովսէս եղած անցքերը եւ Եզրտիներու մէջ հղած աւանդութիւնները իրենցմէ աւելի հին ազգերէ՞ առնուած են, թէ մէկը միւսէն: — Իրենք կ'ըսեն որ այդ բոլորը եւ ուրիշ շատ պատմութիւններ կան գրուած իրենց Շանգար դէրը գտնուող գրքին մէջ, ուր օրը օրին գրուած են աշխարհի բոլոր անցքերը, թէ այն գիրքը կաշիէ թղթեր ունի (անշուշտ մագաղաթ ըսել կ'ուզեն), եւ թէ միշտ աւելնալով այնչափ մեծցած է, որ այժմ փոխադրելու համար եօթ ուղտ հարկաւոր է:

Եզրտի շեխ ու փրկերը՝ իրենց աւանդութեանց վրայ հիմնուած, կ'ըսեն թէ Հայն եւ Եզրտին երբեմն կրօնակից ու բարեկամ ազգեր են եղած, թէ իւրաքանչիւրը ունեցած է իր մէկ Դէրը, Եզրտիները Շանկլի կամ Շանգար Դէրը, իսկ Հայերը Չանկլի Դէրը (այժմեայ Մշոյ Ս. Կարպատը գոր կը յարգեն Եզրտիներ), թէ Հայերը իրենց կրօնքէն շեղեր են նախ իրենց Դէրերը շատցնելով, ուրիշ կուտքեր պաշտելով եւ յետոյ քրիստոնէութիւն ընդունելով:

Իրօք ալ, եթէ առնենք գաւառացի Հայերու նախապաշարումներն եւ աւանդութիւնները, կը զարմանանք տեսնելով որ անոնք նոյն են ինչ որ էին Եզրտիներու մէջ եղածները. հոս կը զետեղեմ հայ եւ Եզրտի նախապաշարումներէն եւ աւանդութիւններէն շարք մը իբրեւ հաստատութիւն իմ ըսածիս:

Հայոց նախապաշարումներն եւ աւանդութիւնները երեք շրջանի մէջ պէտք է փընտռել. Ա. փոքր տղոց քով (աւելի գիւղերը ուր զպրօցներ չկան), ասոնք նոր արթնցած կը խօսին միշտ իրենց նախորդներէն լսելով եւ իրենց յաջորդներուն փոխանցելով. Բ. կոյս եւ անուս աղջկանց քով, աւելի հիւանդատներուն եւ ցաւազարներուն որոնք չեն ամուսնանար եւ իրենց գառն կեանքը կը մխիթարեն աւանդական գրոյցներով եւ նախապաշարումներու գործադրութեամբ. Գ. պառուած աղջկանց, այրի եւ անդուակ կանանց եւ կոյրերու քով, որոնցմէ քաղած եմ հետեւեալները.

Պատաւ աւանդապահ կիները Յիսուսը աստուածորդի ընդունելով, կ'ըսեն որ ան ուրիշ անգամներ եւս աշխարհ եկած է առանց ծնելու եւ անյայտացած առանց մեռնելու, ինչ որ նմանութիւնն է Եզրտիներու Շեխանտիին համար եղած աւանդութեան. եւ երբ հայ աւանդապահին հարցուի թէ ուրիշ անգամ Յիսուսը ե՞րբ է աշխարհ եկած, ան կը պատասխանէ թէ աստուածորդի Յիսուսը աշխարհ եկած է թէ՛ ջրհեղեղէն առաջ եւ թէ՛ վերջ, ու իր ըսածներուն իբր փաստ կը ներկայացնէ Ս. Գրքի մէջ յիշուած Մեղքիսեղէկ քահանայապետը որու ծնունդն եւ մահը յայտնի չէ՝ կ'ըսէ:

Եզրտիները կը հաւատան «նիաթ» կամ չար-աչքին. նոյնպէս կը հաւատան գաւառացի Հայերէն շատերը «նիաթ» կամ չար-աչք կ'ըսուի այն սուր ու գէշ նայուածքը որով մէկը ուրիշը կը գիտէ, անոր կը նախանձի, անոր նման ըլլալ կը ցանկայ. եւ կը կարծեն թէ այդ նայուածքէն ազդուած, ենթական կը հիւանդանայ, կամ քալած ատեն գետինը կ'իջնայ, կամ վերջապէս փորձանքի մը կուգայ: Եզրտիները հիւանդը այդ ազդեցութենէն ազատելու համար շեխ կամ փրկը կը հրաւիրեն որ ասեղ մը, խիլ մը կամ քիչ մը աղ ձեռքին մէջ առած հիւանդին քով կը վազէ եւ յօրանջելով ու անոր վրայ փչելով կ'աղօթէ, եթէ ուռած փեղ մը կայ՝ ամուխով կը գծէ (այսինքն կը գրէ): Նոյնը կը գործադրեն աղօթարար հայ կիները, որոնք պէտք է որ աղօթելու արտօնութիւնը ստացած ըլլան Հայաստանի մէջ գտնուող սուրբերէն՝ զանոնք երազի մէջ տեսնելով՝ Այդ սուրբերէն մէկի, Ս. Կարպատի անունով «նիաթ» բժշկողները տասուչորս տուներէ բաղկացած աղօթք մը կ'ըսեն որուն մէջ ամիոփ կերպով կը յայտնուի մինչեւ հիմա գործադրուող շարք մը նախապաշարումներու եւ աւանդութեանց պատճառները. հոս կը զետեղեմ զայն ամբողջութեամբ եւ իսկութեամբ:

Աղօթեմ, ութ մատով, երկու բթով,  
 Մ. Յովաննու եօթն անուևով,  
 Չանկլու գիւնի զօրութեանով :  
 Մեռնիմ քեզի, Չանկլու գիւնն ,  
 Մեռնիմ քեզի, քու եօթ անուևն ,  
 Դու բթ շինա ցաւ նիաթան :  
 Չար աչն՝ ի չար փուշ ,  
 Չար փուշն՝ ի չար կրակ ,  
 Կարմիր կրակն՝ ի չար աչիչ երակ :

Դիւանք բմէն աշխարհն  
 Ժողովան եկան Չանկլու գիւնն,  
 Ժողով էրին մընջ եօթ օրուան,  
 Ասին՝ տիրենք չուր Հնդեման :  
 Բէ՛հեղդէբուզն էր գիւնապետ,  
 Ասողայէն էր իշխանապետ,  
 Էսոնք կանգած մընջ գիւնին՝  
 Ձինով՝ ասին մընջ ժողովին :

« Լսցէք իշխանք որ դըժտութիւն,  
 « Լսցէք իշխանք Սանդրամէսին,  
 « Լսցէք գուք էլ որ մընջ գիւնին  
 « Էն ա եկեր տիրել աշխարհն :  
 « Էն չըսպանուաւ խըտ տղէկոնց  
 « Որ սպանինք ի Բէթխէմցոց ,  
 « Էն պահած էր իր իշտակ տիրոջ  
 « Որ մըլըտի մընջ սուրը ջրոց :

« Պետք ատթայ առնիլ ըզէն  
 « Ուր նշանց տալ մեր փառք ըմէն  
 « Պետք ա խարբէլ յաղթել ուրեն ,  
 « Ապա թի չէ կ' եղնինք գիւնէն » :  
 Երկու գիւնանք որ մընջ գիւնին  
 Ասին՝ « Կ' էնինք գետ բան շնչին ,  
 « Կ' երթանք, կ' առնինք որ սըր ջրին  
 « Որ մըլըտի ձեռով Մըլըտընն :

« Ձինք կու բերենք չուր Արարատ ,  
 « Յոր մէջ կուտենք ցորեն ի խտտ .  
 « Ձուր չընք իւրմեր աղ կու ծծենք  
 « Աշխարհի փառք ուրին կ' ասենք :  
 « Արարատու ձուն սրդ կ' ենենք ,  
 « Ձուլալ ջըրեր սալ կու շինենք ,  
 « Կողբայ ըսողոր աղ կու կտրենք  
 « Քառասուն օրէն գէն կու յաղթենք » :

Գացին առան աստածորդին,  
 Գացին աշխարհ օր դիշերին ,  
 Կերան ըզաղ խտտ ցորենին,  
 Աստածորդին յաղթեց գիւնին :  
 Աստածորդին որ խաչ էլաւ  
 Սըր կարապետ առաջ ընցաւ .  
 Ճամբան բացաւ աստածորդուն ,  
 Լուր աւետեց որ մընջ դժտութեան :

Սըր կարապետ առաջ ընցաւ  
 Արարատու աշխարհ էկաւ ,  
 Գնաց մտաւ Չանկլու գիւնն  
 Ժողովեց գիւնանք դրեց գնտան :  
 Կաղ-դեւ չոքաւ կանչեց՝ « Ամա՛ն ,  
 « Մի գնեք զիս գուժին ի զնտան .  
 « Ես կ' եղնեմ քեզի փոշէխան ,  
 « Տանիմ Լցեմ՝ փըրէպութման » :

Սուրբ կարապետ խղճաց ուրեն ,  
 Զրնանէն հանեց դրեց փակեղ ,  
 Ասաց՝ « Պետք ա մնաւ էտտեղ  
 « Ձուր ի գալուստ որդուն ա՛հեղ :  
 « Իմ տանուրդին ըմէն լուսու  
 « Քեզի թող տայ սե խաց՝ կուկու ,  
 « Եբ որ կպիս մարգամարդու  
 « Գու էլ դառնատ մէկ սե կատու » :  
 Աղօթեմ, ութ մատով , եւն :

Լանդախօսաներ կ' ըսեն որ Կաղ-դեւը  
 անգամ մը կնոջ մը դպելով , սեւ  
 կատու մը կը դառնայ եւ այն օրէն  
 կը սկսի միւս գիւնը զն անէն  
 դուրս հանել՝ փախցնելով :

Ասկէ զատ արդէն դաւառացի  
 Հայերը ուրիշ շատ պարագաներու  
 մէջ եւս դէպ ի սատանաները ար-  
 համարհնօք չեն վերաբերուիր .  
 Իրենց աւանդապահները զիրենք կը  
 զգուշացնեն սատանաները միշտ  
 « սատանայ » , « դեւ » անուաններով  
 անուանարկելէ , մանաւանդ երբ  
 ջուրի մը ակունքին մօտ , շատ մը  
 ճամբաներու մէջ ջտեղ կամ մուկթ տեղ  
 մը կանգնած ըլլան , ուր որպէս  
 թէ սատանաները իրենց բնակարան  
 կ' ընտրեն . եւ այդ պարագաներուն ,  
 եթէ հարկադրուին յիշել այդ « հու-  
 գիներ » -ը , փոխան « սատանայ » ի  
 « յիսուսքրիստոսներ » , « քաջքեր »  
 կամ « չարքեր » կ' անուանեն՝ պա-  
 րագաներու համաձայն : (Յիսուս-քը-  
 րիստոսներ անուանելու պատճառը  
 այն է թերեւս որ այդ անուանը նա-  
 խապէս յիշելով սատանաները հա-  
 շածած ըլլան) :

Դեռ կան ուրիշ շարք մը նա-  
 խապաշարու մներ որ նոյնութեամբ  
 կը գործադրուին թէ՛ Եգիպտոսի  
 եւ թէ՛ Հայերէ :

Այսպէս , եգիպտոսները սխտորի  
 կեղեւը փողոց կամ բաց տեղեր չեն  
 թափեր , պատերու խոռոչներուն  
 մէջ կը պահեն , սատանաները ան-  
 արգած չըլլալու համար . նոյնը , նոյն  
 պատճառով կ' ընեն դաւառացի հայ  
 կիւները . կենդանիներու թի-սակը  
 (օջախիկ) , եգիպտոսները առանց մէջ-  
 տեղէն ծակելու չեն նետեր : առար-  
 կելով թէ կախարդ մարդոց ձեռք  
 կ' իջնայ , եւ անոնց վրայ կը գրեն ու  
 կը փորձեն իրենց գրով սատանային  
 յաղթել . նոյն սովորութիւնը կը  
 գործադրեն Հայաստանցի Հայերը ,  
 եւ անոր վրայ երիտասարդները  
 իրենց ուժը կը փորձեն՝ բթամատի  
 կամ ցուցամատի հարուածով ծա-  
 կելով զայն : « Սատանի եղունգ »  
 կոչուած քարը (հրաբխաքար) , որ  
 սեւագոյն , շերտաւոր եւ փայլուն  
 է , եգիպտոսները երբ տեսնեն՝ դեմ-  
 նէն կը վերցնեն եւ աչքերնին գո-  
 ցելով զայն դէպ ի ետ կը նետեն ,  
 նոյնը կ' ընեն եւ հայ տղաք :

Այս աղօթքը կը ցուցնէ թէ Չանկլին կամ այժմեայ Ս .  
 Կարապետը, գեւերու ժողովատեղին եւ գիւննն է եղեր,  
 թէ սատանաները Յիսուսի քարոզութեան ժամանակ հոն  
 հաւաքուելով Յիսուսի հետ քառասուն օր ծոմ բռնելու  
 պայմանը որոշած են, Յիսուսի հետ մինչեւ Արարատը  
 բարձրանալով, Արարատի աղբիւրները սալ (սալաքար,  
 սառոյց), ձիւները որդ (\*) եւ Կողբայ չըրջակայքը աղ են  
 դարձուցած որպէսզի Յիսուս խմելու ջուր չգտնայ եւ անկէ  
 աշխարհի փառքերը տեսնելով, — որոնց տէրը սատա-  
 նաներն էին, — տկարանայ եւ յաղթուի . յետոյ կը  
 յիշէ Յիսուսի յաղթութիւնը, Ս. Կարապետի արարատեան  
 աշխարհ գալը եւ գեւերը հաւաքելով գեանափոր բան-  
 ասին մէջ լեցնելը . վերջին մասին մէջ՝ Կաղ-դեւին իրնդ-  
 բանքը, որ խոտացեր է Ս. Կարապետի վառարանին փոշին  
 տանիլ եւ փրէպութման (Շաթիւ-Արապ) գետը լեցնել,  
 ուրուն Ս. Կարապետը խղճալով « զնտանէն » հանած եւ  
 « փակեղն » է դրած՝ օրական « սեւ չորցած հաց » մը որ ու-  
 չելով անոր, եւ սահմանելով որ եթէ « մարգամարդու » (ո եւ է  
 մարդու) վնասէ, ինքն ալ սեւ կատու մը ըլլայ (հայ ա-

(\*) Ամառուան տաքին Մասիս լեւան ձիւնապատի եղերքները, այն  
 տեղեր ուր ձիւնը կիսաջալ է, կը դոյնան տեսակ մը սրբեր, որոնք  
 իրբու մտտեանով իրար կը փակին. և այդպէսով խոշոր մեծութիւն  
 մը կը ստանան. ասոր համար Հայաստանի հեռաւոր անկիւնները կ' ըսեն  
 որ սատանաներու ստեղծած սրբերէն են գոյացած, իսկ Մասիսի ստո-  
 բաները գտնուող բնակիչներէն ոմանք այդ սրբերու ստուգանման  
 պատեանը ծակելով, անոր մէջ հաւաքուած ջուրը կը խմեն :

Գաւառացի Հայերը երբ իր մը կորսնցնեն, փնտոելու համար սա միջոցին կը դիմեն. գետինը թուք կը թափեն եւ վրան խիչեր կը դնեն խաչածեւ. նոյնը կ'ընեն եղբատիները կորուստի համար, թուքի փոխարէն ջուր գործածելով, եւ երկուքն ալ այս պատճառով թէ սատանայ մը իր ճամբան կորսնցուցած՝ կորուստի վրայ է նստած, ու այդ խիչեկամուրջի շնորհիւ իր ճամբան մտաբերելով պիտի անցնի երթոյ, որմէ յետոյ ամէն անկիւն տեսանելի պիտի դառնայ եւ կորուստը եւ յետեան պիտի գայ. հայ երախտները խիչեկամուրջը եւ թուքէ-ծովը իրենց ափին մէջը կը շինեն, յետոյ միւս ձեռքով վրան կը գարնեն, խիչերու մեծամասնութիւնը որ կողմ ի յնայ կը նշանակէ թէ կորուստն այն կողմն է:

Եզրտի վիճակահանները կանանչ աման մը ջուր լեցուցած՝ անոր մէջ կը նային եւ դուշակութիւններ կ'ընեն. նոյնը կ'ընեն Հայերը, եւ ուրիշ քանի մը դուշակութեան ձեւեր ալ որ քրիստոնէութիւնն է բերած իրենց մէջ: Կ'ըսեն թէ Յարութեան երեկոյին ծնած մանուկը, լաւ վիճակահան կ'ըլլայ եթէ երեք տարուան հասնելէ յետոյ միշտ իր աջ ձեռքի բթամատի եղնգան վրայ նայի: Նաեւ դեռ արբուցի չհասած աղջիկներուն ձերմակ կտաւի վրայ նայիլ կուտան եւ այսպէսով այդ փոքր աղջիկները դուշակութիւններ կ'ընեն: Ասոր համար հազիւ ութը տասը տարուան հասակ ունեցող աղջիկ մը կը սորվեցնեն որ կոպերը առանց թարթելու միշտ նայի կըտաւին եւ անի թարթիչները չշարժելու համար իր մատուցներովն ամուր մը բռնած՝ անշարժ կը նայի կտաւին. եթէ փորձը առաջին անգամն ըլլայ շատ ուշ կը յաջողին եւ իրենցմէ շատերը վախերնէն կը հիւանդանան: Անոնք երկար ատեն կտաւին նայելով իրենց չուրջ եղողներուն կ'ըսեն որ կտաւին մէջէն ծով մը կը տեսնեն եւ քիչ յետոյ կ'աւելցնեն թէ ծովին մէջ ձերուներ մը կը լողայ, ապա կ'ըսեն որ իրենց մեռեալ բարեկամները դագաղիմէջ նստած ծովուն մէջէն դէպ ի իրենք կուգան. այս կացութեան մէջ ձերմակ կտաւին ենթակայ եղող աղջիկը սարսափահար եւ ինք իրմէ ելած կցկտուր պատասխաններ կուտայ իրեն ուղղուած հարցումներուն: Այս փորձը որ մինչեւ հիմա իսկ կը դործադրուի իր շատ վնասակար հետեւանքը կ'ունենայ. գործադրելու առիթ տուողները պանդխտութեան մէջ ամուսին կամ զաւակ ունեցող հայ կիները կ'ըլլան, որ անոնց կացութիւնը կամ ապագան զիտնալու համար այս միջոցին կը դիմեն եւ իրենց մատաղ աղջիկները ատոր կը դռնեն ու այն խեղճերը համոզուած թէ տարիներէ ի վեր պանդխտութեան մէջ եղող

հայրը կամ եղբայրը պիտի տեսնեն, սիրով կ'ընդունին իրենց առաջարկուած գերը:

Եզրտիները միեւնոյնը կ'ընեն Հայոց տարեմուտին, Նաւասարդին, ինչ որ կ'ընեն Հայերը: Թողլով այն տօնախմբութիւնը զոր գաւառացի Հայերը կը կատարեն այդ օր, անոնք տարեմուտի առաջին գիշերը կաշիէ պարկ մը առած ձեռուընին, կը սկսին դարնել տօն ամէն անկիւն «Երվօ՛տ, դուբս» կանչելով: «Երվօտ» ները անցնող տարուան չար ժամերու, չար օրերու, հիւանդութեանց եւ մեռողներու ուրուականներն են՝ որ նոյն տարուան վերջին ամսուն կը տեսնուին մարդոցմէ. Հայերը Երվօտները իրենց տուներէն դուբս վանելով անոնց ետեւէն հնցած աման մը կը նետեն եւ դուբերնին կը կղպեն. վա՛յ այն մարդուն որ այդ օրը շուտ մը տուներ եկած չըլլայ, որովհետեւ նոյն օրը ուշացողը ներս չեն առներ, վախաւով թէ բոլոր Երվօտները անոր հետ ներս կուգան: Այսպէս է եւ Եզրտիներու մէջ:

Ասոնցմէ զատ միեւնոյն հեքեաթները կը խօսուին թէ Հայերէ եւ թէ Եզրտիներէ՝ քաջանց թագաւորներու եւ քաջերու մասին: Գաջանց թագաւորներու մատանին որու զօրութեամբ կ'ըսեն թէ կարելի է մարդուս իր փափաքածին հասնիլ, միեւնոյն եռանդով կը բաղձան ունենալ Հայերը եւ Եզրտիները: Եւ միեւնոյն զրոյցները կան նախամարդոց մասին այս երկու աղբերու մէջ, որոնցմէ է «Կորսուած ուրբաթ»ի հեքեաթը:

Կ'ըսեն թէ նախաստեղծ մարդը (ըստ Հայոց Ագամը) թռչուններուն, անասուններուն ծառերուն, կանանչներուն, թփերուն, սողուններուն, գազաններուն մէջմէկ տեսակ անուն տուած էր. իր որդիները, իր թոռները, իր թոռան թոռները, իր աղջիկները, իր հարսները, միեւնոյն անուններով կ'անուանէին զանոնք: Եստ թէ քիչ ժամանակ անցնելէ յետոյ ելաւ նահապետ մը՝ շատ իմաստուն, շատ խելացի, շատ հանճարեղ, անանկ որ երկրի ժայռերն իրենց տեղէն ժաժ կը բերէր, երկնից մանրիկ աստղերը կը համբէր: Այս նահապետը եօթ տարի, եօթ ամիս, եօթ շաբաթ, եօթ օր, եօթ ժամ ծով պահեց. դիչեր ու ցորիկ աղօթեց, խելք թափեց, միտք տուաւ ու միտք առաւ եւ վերջապէս հնարեց ամառուան, օրերու, օրուան ժամերու անունները ու իր որդիք ու իր թոռները ուրախ եղան այս նոր գիւտին վրայ: Բայց, օր մը, տարին չար, ա միս չար, շաբաթ չար օր մը, նահապետի թոռներէն մէկը, նահապետին չափ իմաստուն, շաբթուան օրերը իրարու ետեւ կապեց. կապած ժամանակ ուրբաթ օրը փախաւ: Լուր տուաւ իր հասակակիցներուն, իր եղբայրներուն որ գան ուրբաթը բռնին. ժողովուցան,

աշխարհը իր շորջը ժողովեցան, ու ինքը նորէն շարթուայ օրերը իրարու ետեւ կապեց այսպէս՝ երկուշարթի՛, երեքշարթի՛, չորեքշարթի՛, նինգշարթի՛, . . . շարթի՛, կիրաւի՛ . զինք շրջապատողները զիտեցին որ ուրբաթը չկար, ուրբաթը փախած էր . ձայնը նահապետին ազանջը հասաւ . նահապետը կանչեց իր թոռը ու ըսաւ որ շարթուան օրերը իրարու ետեւ շարէ, ու ան շարեց, նահապետը զիտեց որ ուրբաթը չկա՛յ . ուրբաթը փախած էր . կանչեց իր որդիներէն վեցը, մէկ ալ ինքը՝ եղան եօթը . եւ եօթ զոյգ տրեխ, եօթ զոյգ գուլպայ, եօթ սեսակ հագուստ առին իրենց հետ, եօթ գոյնէ գլխարկով գլուխնին ծածկած՝ ճամբայ ինկան ուրբաթը փնտռելու : Դացի՛ն, շատ ու քիչ դացին՝ չեմ գիտեր . զլտեմ որ եօթ սար անցան, եօթ դաշտաղուրան չափեցին . եօթ դաստարուր կոխեցին, եօթ ջրի, եօթ աղան, եօթ առուի, եօթ աղբրի գլուխը կանգնեցան՝ հարց ու փորձ տուին, ուրբաթը չկար . մատներով ազանջնին գոցեցին եւ «Ուրբա՛թ, ուրբա՛թ» կանչեցին, ուրբաթը չլսեց . փորի վրայ պառկեցան եւ զանի ջրին մէջ փնտռեցին, բայց ի գուր, ուրբաթը չգտան . դատարկ ձեռով տուն դարձան : Նահապետը շատ իմաստուն էր . շուտով ասոր ճարը գտաւ : Շատ ու թեղ, շատ զօրեղ, այլանդակ բան մը, երկնուց իջա՛ծ, տարիներէ ի վեր անտառի մէկ այրին մէջ կ'ապրէր : Նահապետը կը կարծէր թէ ան է աշխարհի ստեղծողը, եւ անոր, ամէն օր, իր թոռներու միջոցաւ դառ մը կամ մաքի մը նուէր կ'ուղարկէր . մտածեց այս անգամ ինքը տանիլ նուէրը ու կորսուած ուրբաթի մասին հարց ու փո՞ձ ընել, ուստի ելաւ շատ աղուոր, մատղաշ մաքի մը առաւ ու իր վեց ընկերներով անոր քովը գնաց : Ստեղծողը այրին ներսն էր . մաքին այրին ներսը հրեց . ստեղծողը մըրթմըրթումով մը կը դառնար այրին մէջ . այն ժամանակ նահապետը հարցուց ուրբաթի մասին, ստեղծողի ձայնը գոռումի կը փոխուէր, եւ նահապետը, կարծելով թէ փախչող ուրբաթը ստեղծողի քովն է եկեր եւ ստեղծողը զանի դուրս հանել կ'ուզէ ու չի կրնար, մտածեց իր գլուխն ու ձեռքերը այրին բացուածքէն ներս անցընելով օգնել իր ստեղծողին, ուստի ըսաւ իր որդիներուն՝ «Գլուխս ու ձեռքերս ներս մտց' ելէ յետոյ քանի որ ես ոտքերս շարժեմ, գիտցէք որ ուրբաթը բռնելու կ'աշխատիմ, եւ երբ զանի բռնեմ՝ ա՛լ ոտքերս չեմ շարժեր եւ դուք զիս դուրս կը քաշէք .» ու այնպէս ալ ըրաւ : Այրին ներսէն հարուածի ձայներ եւ կանչընտուքներ կը լսուէին, նահապետը արագութեամբ ոտքերը իրար կուտար, իր որդիները կ'ուրախանային որ կորսուած ուրբաթը շուտով

դուրս պիտի գայ . անցաւ կարճ միջոց մըն ալ . նահապետը ոտքերու շարժումը դադարեցուց . իր որդիները հետեւեցուցին թէ ուրբաթը բռնուած էր եւ դուրս քաշեցին զայն . բայց ի՞նչ տեսնեն, նահապետի գլխու կէսը չկար, քիթ բերան իրարու էին խառնուած, մարմինը արիւնով ներկուած, եւ ուրբաթն ալ մէջտեղը չկար : Ասոր վրայ մեր իմաստունները վիճիլ սկսան . խնդիրը ծանր էր . մաս մը կը պնդէր թէ նահապետը տունէն դուրս եկած ժամանակ գլուխը արդէն վրան չէր, ուրիշներ կը կարծէին թէ վրան էր եւ ասոր համար վիճիլ սկսան, բայց չկրցան որոշել թէ՛ նահապետը իրենց հետ եղած ժամանակ գլուխը վրան էր թէ՛ վրան չէր : Նահապետէն յետոյ ամենէն հանճարեղը անոր կիսն էր, իրենց մայրը . ուստի անոր գացին եւ ըսին . «Մայրի՛կ, աս քեզ հաց աւ քեզ հացի տաշտ, աս քեզ ջուր աս քեզ ջրի փարչ, աս քեզ աղն ու աս քեզ աղաման, աս քեզ կաթն աս քեզ կթան, աս քեզ կիթն աս քեզ քրթոց, աս քեզ լոծն աս քեզ լծան, հոսիկ մեր օճախն մենք քու դատական՝ որ դուն զողորդն ըսես, մեր պապը երբ մեզ հետ եկաւ գլուխը վրա՞ն էր թէ վրան չէր» : Մայրը մտածեց, խելքն գլուխ ժողվեց, յետոյ նստաւ խելք թափեց, մտքին զարկաւ, բայց ի գուր . ի՞նչ ընէր, ինքն ալ մոռցած էր, ուստի այս տարակուսական պատասխանը տուաւ . «Որդի՛քս, զի՛նչ մեղքս պահեմ, զի՛նչ սուտ խօսիմ, չեմ յիշեր . գիտեմ որ ձեր հայրը երբ աղ ու հաց կ'ուտէր՝ ձեռով ի բերան բան կը կրէր, բերան բաց ու խուփ կ'ընէր, աչքի լուսաուն կը խաղէր, սպտկուցը կը շողէր, կոպեր կը թարթէր, լեզուն կը ճըլլըլէր, դունչ կ'երթէր ու գէր, ու մօրուք կը ժաթէր, բայց չեմ գիտեր գլուխը վրա՞ն էր թէ վրան չէր» :  
 - Կ'ըսեն որ նահապետի ստեղծող աստուածը սրջ մըն է եղեր . ժամանակ մը յետոյ, տարին բարի, ամիս բարի, շաբաթ բարի, օր բարի օր մը ուրբաթ կ'ըլլայ եւ խօսակցութեան մը մէջ նահապետի կտրիճ թոռներէն մէկը զանի կը բռնէ՝ «Այսօր ուրբաթ է» ըսելով . անմիջապէս շատ մը մարդիկ կը հաւաքուին, եօթն օր ուրախութիւն կ'ընեն եւ այն օրէն ուրբաթը շարթուան «նշով» օրը կը մնայ :»  
 Այսպէս հեքեաթներու մէջ կը հանդիպինք ձիեր, օձեր, թռչուններ, ժայռեր, եւն որպէս ստեղծող ճանցչուած ըլլալուն :

Եզրախները նախապաշարունակներով կաշկանդուած՝ ինչպէս Հայերը՝ համոզուած են որ լուրան այրերու, անձաւներու եւ եկեղեցիներու մէջ հրեշտակներ կամ սատանաներ կը բնակին, եւ ասոր համար է որ Եզրախները իրենց

բնական գիւղերու մէջ եղող աւերակ եկեղեցիներէն հետու կը շինեն իրենց բնակարանները եւ աւերակներու քարերը իրենց շէնքերուն չեն գործածեր :

Իրենք , Ս. Կարապետէն զատ որով կերպնուն «բը գէրա Չանգլի», կը յարգեն նաեւ Ս. Առաքելոց եւ Ս. Աղբերկի վանքերը՝ հաւատալով թէ այնտեղ հրեշտակներու կամ սատանաներու բնակութիւն կայ , որովհետեւ աւանդաբար կը պատմուին իրենց մէջ այդ սուրբերու հրաշագործութիւնները :

Ս. Աղբերկի համար կը պատմեն թէ «որմազար» մը հոն երթալով բժշկած է մահամերձ երեխայ մը , թէ հոն բնակուող հրեշտակները կենդանացուցած են այրուած եւ մեռած ուրիշ երեխայ մը , ինչ որ կը պատմեն նաեւ քուրտ ցեղերէն շատերը : Հայոց մէջ այդ աւանդութիւնները կը պատմուին սա պէս , եւ ասի գրուած կար նաեւ Ս. Աղբերկը գտնուող ձեռագիր գրքերուն մէջ : — Կ'ըսուի թէ Թաղէոս առաքեալը Հայաստան գալով այդ գաւառը կ'երթայ եւ կը բժշկէ Բոնիկ իշխանի մահամերձ երախան . Բոնիկ իշխան անոր այս հրաշագործութիւնը տեսնելով անոր քարոզած վարդապետութեան ճշմարտութիւնը կ'ընդունի , եւ իր հովանաւորութեան տակ գտնուողներուն հետ քրիստոնեայ կը դառնան . յետոյ Բոնիկ իշխան կ'ուղէ իր նոր Աստուծոյ համար տուն մը կառուցանել եւ կը հիմնէ Բոնաչէնու (Ս. Աղբերկի) վանքը , մէկ պատը ոսկիէ եւ միւսը արծաթէ կերտելով : Թաղէոս առաքեալը , գովելով հանդերձ անոր աստուածասիրութիւնը , այդպիսի շքեղ շէնքի մը կառուցումը աւելորդ կը գտնայ եւ կ'ըսէ . «Այս խաղաղ ժամանակները պիտի փոխուին , պիտի գայ ժամանակ մը որ այս երկիրը անօրէններու ձեռք իյնայ , պիտի չարերն ու մարդասպանները շատնան եւ գող ու աւազակները անվախ շըրջին երկրիս մէջ» եւ կը խնդրէ որ հասարակ քարերէ ամուր ու պարզ աղօթատեղի մը կառուցանէ : Բոնիկ իշխանը կը համաձայնի եւ առաքեալի հրամանը կը գործադրէ : Թաղէոս առաքեալ ի նշան շնորհակալութեան եւ եղբայրութեան հրաշքով երկու աղբերներ կը ստեղծէ , մէկը ի յիշատակ Բոնիկ իշխանի եւ միւսը իր յիշատակին (այս պատճառներով է , անշուշտ , որ այդ վանքը կ'անուանի Բոնաչէնու վանք եւ Ս. Աղբերկի վանք) : Իսկ ամխացած երախայի կենդանանալը Հայերը կը պատմեն սա պէս , հոն գտնուող սուրբի մը մասունքը (որ Գրիգոր Լուսաւորիչը Յունաստանէն էր փոխադրած) կենդանացուցած է Մանազկերտի իշխանի վառարանը իյնալով գործելի (ածուխ) դարձած երեխան եւ այս պատճառով Բոնաչէնու վանքը անուանուած է

նաեւ «Գործելյարուց-վանք» ու այդ մասունքը պարունակող խաչը «Գործելյարուց-խաչ» :

Ս . Առաքելոց վանքը , որու հրաշագործութիւններն կը պատմուին Հայերէ , Եգիպտոսէ եւ Քիւրտերէ , կառուցուած է Գրիգոր Լուսաւորչէ : Մինչեւ վերջերս , ինչպէս Հայերը , նոյնպէս շատ մը եղիաթի եւ քուրտ ուխտաւորներ մատաղցու եզներով եւ ոչխարներով կը դիգիմէին Ս. Կարապետի ինչպէս եւ Ս. Աղբերկի ու Ս. Առաքելոց վանքերը , եւ ոեւ է մէկը չէր համարձակիր սեփականել այս սուրբերու կառուածները . ասկէ ութ տարի առաջ իր հայատեցութեամբ եւ իր եղեռներով նշանաւոր Մուսա-Պէյի եղբայրը , Ջազօն , առաջինն ըլլալով կը յանդգնէր սեփականել Ս. Աղբերկի անտառը , ինչ որ սակայն չյաջողուեցաւ ընել եւ յանկարծամահ եղաւ այն ժամուն իսկ երբ այդ անտառի ծառերը կտրելով իր առունը կը փոխադրէր : Մեր «ոչորմած եւ երկայնամիտ» Աստուածը որ այդ գաղանացեալ մարդու եւ անոր եղբոր իրենց նմաններու արիւնը խըմելէն չէր զգաստացած , երեւի այս սուրբի ծառերուն վերքերէն հոսող ջուրի կաթիլներէն աւելի ուժգին ազդուած էր քան հարկուրաւոր անմեղ Հայերու արիւններէն , քան այրիներու աղի արտաւորէն , քան բոնաբարուած կոյսերու թալկացումէն , քան որբերու անպատրաստ կացութեանէն եւ քան վառարանի առջեւ , շամփուրներով խոցուած ողջակիզի մարմնոյ ճարպահոտէն՝ զոր գործադրած էին այդ մարդակերպ հրէշները : — Ջազօն հասած այդ պատիժը սարսուռ մը թափած էր բոլոր միւս իւրմաններու վրայ , բայց երեւի միւս իւրմանի «Ալահ»ը ա'լ յաղթած է մեր Աստուծուն որ զինք պաշտողները կրցան կոչուպտել ու այրել այդ սրբալայրերը . . . (\*)

(\*) Ս. Աղբերկի եւ Ս. Առաքելոց վանքերը այն կողպտուած վանքերն են որոնց մասին ասկէ քանի մը ամիս առաջ գրեցին հայ եւ օտարագրի լրագիրները : Յատկապէս միայն կարելի է յիշել այն կորուստը զոր հայ ազգը ունեցաւ այդ վանքերու կողպտումով : Անոնց մէջ կը պահուէին մագաղաթեայ հաստածալ գիրք մը՝ օգտուշատ պարունակութեամբ , որուն կը միանար Անակայ որդի Գրիգորի յուշարէն ինքնագիր կենսագրութեան թարգմանութիւնը զոր կատարած է ասկէ վեց-եօթ դար առաջ Ջրդանէլ Մամիկոնէից իշխանը , նաեւ ուրիշ ձեռագրեր , ու հին գուռներ , իրեղէններ , պղնձներ , եւ որոնք այսօր չկան . . . Այդ վանքերու մէջ կային գերեզմանատուներ որ կը կարծուէին ըլլալ Տաճատ Մամիկոնէից իշխանի , խորենացուոյ , Մամիկոնի , Սահակոյ , Համագասպոյ , Մեսրոպոյ , եւ , որ Ջրդուսիշուր եղան կողպտիչներու մոլորածքով , որոնց համար , աւանդութեամբ , այլակորն ազգերու դամբանարանները քանդել , անոնց քարերը ջարդել կամ ձուտկայ գետը նետելը՝ բաղդաւոր դատարու մէկ միջոցը կը համարուի : Այդ դամբանարաններու միեւնոյն մարդոցն ըլլալը կը հաստատէր Չրո Մամիկոնէից իշխանէ գրուած ձեռագիր ուրիշ գիրք մը որ կը գտնուի ի Հայաստան :

Է. ԵԶԻՏԻՆԵՐՈՒ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՐԵՆՅ ԳՐԱՑԻՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ ՀԱՅՅԵՐՈՒ ՀԵՏ

Եզիտիններու կրօնքը, սովորութիւնները, բարքերը, աւանդութիւններն եւ նախապաշարութիւնքը համառօտակի ուսումնասիրելով՝ երկու խօսքով կ'ուզէի բացատրել, ներկայի մէջ իրենց յարաբերութիւնները զերենք շըրջապատող ազգերու հետ:

Բնաւ չեն սիրեր Պարսիկները, եւ Պարսիկներն ալ մեզք կը համարին Եզիտիի տան եւ փած հացն ուտել կամ անոնց ամանով ջուր խմել. ասոնք իրարու հետ դարաւոր թշնամութիւններ ունին. Պարսիկները աւելի զբաւուած են Եզիտիններու դէմ՝ Եզիտիի մը Մարգարէին յաջորդներէն մէկուն մահուան պատճառ եղած ըլլալուն համար. եւ ինչպէս որ քրիստոնեաները, նոյն իսկ հակառակ Աւետարանի ներող վարդապետութեան, երեք օր Գրիստոսը չարչարող Հրէաներու որդիները երկու հազար տարի տանջելով չեն բաւականացած, այնպէս ալ Պարսիկները դարերէ ի վեր Եզիտինները տանջելով եւ սպաննելով դեռ իրենց վրէժը լուծած չեն համարիր. ասոնց դէպ իրար ունեցած ատելութիւնը անդամանելի է:

Թուրքերն եւ Եզիտիններն եւս անհաշտ թըշնամիներ են իրարու: Թուրքերը որ մահմետական շիյի ազանդին կը պատկանին, իրենց մէկ մասը Եզիտիի տան ամէն բանը պիղծ կը համարի. կան այնպիսիներ որ միայն անոնց խողիողած կենդանիներու միսը չեն ուտեր: Եզիտիններու եւ Թուրքերու ատելութիւնը կրկնապատկուած է եզիտի-թուրք դէպքերէն ի վեր որ սկսած են երեսուն տարի առաջ եւ կը տեւեն մինչեւ հիմա: Եզիտինները մէկը անպատուելու համար զայն «թուրք» կ'անուանեն:

Քիւրտ ցեղերէ մասի մը համար կ'ըսեն որ մահմետականութիւնը ընդունող Եզիտիններ են, եւ այն ցեղերու հետլաւ յարաբերութեան մէջ են. ու այդ ցեղերը կ'ընդունին թէ իրենց նախնիքները Եզիտիններ են եղած եւ իրենք ալ համակրութեամբ կը վերաբերուին դէպ ի Եզիտինները: Ասկէ զատ արդէն Եզիտինները «քիւրտ» անունով ազգ մը չեն ճանչնար, այլ կը ճանչնան տարբեր տարբեր ցեղեր անոնց ցեղական անուններով եւ անոնց հետ կը բարեկամանան կամ կը թշնամանան անոնց ցեղական յատկութիւնն եղող ազնիւ կամ վատ ձիրքերու համաձայն:

Գիտնալով Եզիտիններու դէպ ի «քիւրտ» ցեղերն ունեցած այս վերաբերումը, պէտք կը զգամ նկատել Հայերուս այդ նոյն ցեղերուն մասին ունեցած կարծիքը: — Հակառակ որ

կարծողներ եղած են թէ այդ ցեղերէն մաս մը հայ նախարարական ցեղերու միացորդներն են, այսուհանդերձ մենք մինչեւ հիմա կարծած ենք թէ այդ բոլոր ցեղերը միեւնոյն թերութիւններով, միեւնոյն յատկութիւններով ազգ մը կը կազմեն «քիւրտ» անունով, եւ թշնամացած ենք անոնց բոլորին առանց գիտնալու որ անոնցմէ շատերէն կրնայինք օգտուել...

Պարզապէս կարելի է ըսել թէ «քիւրտ» անունով ազգ մը գոյութիւն չունի, որովհետեւ եթէ մէկը հետաքրքրուի այդ ցեղերով եւ զանոնք առանձին առանձին ուսումնասիրէ կամ իրարու հետ բաղդատութեան դնէ, դժմագիծներու, ձիրքերու, յատկութեանց այնչափ տարբերութիւն պիտի գտնայ որչափ պիտի գրտնար երկու կամ աւելի ազգեր իրարու հետ բաղդատելով. եւ արդէն իրենց մէջ խօսուած լեզուները ինքնին կ'ապացուցանեն որ այդ ցեղերը միեւնոյն ծագումէ չեն: Մենք այդ լեզուներէն միայն մէկին, «քիւրտերէն» ինչ, ծանօթ ենք որ աղաւաղեալ հին պարսկերէն մըն է. այդ լեզուն կարելի է անոնց սեփական լեզուն չհամարել այլ անոնց պաշտօնական կամ անոց տիրող ազգի լեզուն, որովհետեւ «քիւրտ» անունով ճանչցուած ցեղերէն կան այնպիսիներ որ օտարա ազգերու կամ ուրիշ ցեղերու հետ ծանօթ «քիւրտերէն» լեզուով խօսելով՝ իրենց ցեղերու եւ իրենց ընտանիքներուն մէջ կը խօսին տարբեր լեզուներով. օրինակի համար, Մօսկիները կը խօսին լեզու մը որ բնաւ աղնչութիւն չունի «քիւրտերէն» ի հետ եւ կարծողներ եղած են թէ հին յունարէնին մօտ լեզու մըն է. ինչպէս Դըմըլիցի, Չապա, եւն ցեղերը կը խօսին իրարմէ տարբեր լեզուներ որոնցմէ մէկ քանին «քիւրտերէն» ի մօտ լեզուներ ըլլալ կարծուած են, մինչդեռ սխալ է: Ահա «քիւրտերէն» ինչ ամէնէն աւելի մօտ կարծուած զազայերէն լեզուէն քանի մը բառ բաղդատմամբ «քիւրտերէն» ի, եւ անմիջապէս անոնց տարբերութիւնը երեւան կուզայ

պիտեմ	} հիմնական	դանըմ	} հիմնական	մուսայու
կ'ըսեն		դըբէժն		բաւանու
գնացի		ազ չօմ		չաու
հաւկիթ		հէգ		հաքի
զիւղ		զոնտ		տաուբրա
կշուցի		մը քէշեայ		սաթու
տասնհինգ		պանդղա	փէնջաս (*) :	

(\*) Չապա ցեղը զոր Հայաստանցիներէն շատերը «Արեւոկ» (Արեորդի) անունով կը ճանչնան, տարբեր աղանդի մը պատկանող մահմետականներ են: Բարեկամ մը որ տարիներով շրջած է Չապա, Մօսկանցի, Չանգօ եւն ցեղերուն մէջ, խօստացած է անոնց ծագման մասին խօսուած աւանդութիւններն ու անոնց ընտանեկան լեզուէն հաւաքած ստուար Թուով բառերը իր ուսումնասիրութեանց հետ զրկել «Անահիտ» ի խմբագրութեան:

«Քիւրտ» անունով ազգութիւն մը չկայ եւ «քիւրտ» անունով ճանչցուած ցեղերը ազգայնական, հաւաքական անուն մը չունին: Գուցէ միամտօրէն ակնարկուի թէ այսօր ամբողջ աշխարհ զանոնք կը ճանչնայ «քիւրտ» անունով, սակայն այդ փաստ մը չէ թէ «քիւրտ» անունը կրող ազգ մը գոյութիւն ունի, որովհետեւ այդ անունով ճանչցուած ցեղերէն եւ ոչ մէկը կ'ընդունի զայն, եւ եթէ մէկը անոնց «քիւրտ» անունը տայ, զայրոյթով՝ «Քիւրտը դուն ես» կը պատասխանեն: Թէեւ կայ ուրիշ անուն մըն ալ, «Կուրմանջ», որով կ'անուանեն Վիրենք այդ ցեղերէն շատեր, սակայն կան այնպիսիներ որ «Կուրմանջ» կ'անուանեն «աշիր» կոչուած ցեղերուն հպատակ եղող ցեղերը, եւ հաւանական է որ «Կուրմանջ» անունը այդ ցեղերու վրայ դրոշմուած ըլլայ անոնց բոլորին զօրեղ ազգութեան մը հպատակ դառնալէն յետոյ: «Կուրմանջ» եւ «քիւրտ» բառերու ստուգաբանութեան մասին թեր ու դէմ կարգ մը կարծիքներ են եղած՝ որոնք անստոյգ են, եւ մենք Հայերս դեռ չենք կրցեր իրենց իսկութեամբ ճանչնալ մեզ շրջապատող ցեղերը: Անշուշտ այդ ցեղերէն կան այնպիսիներ ուրոնք Հայութեան դարաւոր թշնամիներն են եղած, եւ այնպիսիներ որ մեր նախահայրերէն գերուելով բերուած են Հայաստան ու այսօր մահմետականութիւնը ընդունելէ յետոյ զիրենք գերողներու վրէժը անոնց որդիներէն կը լուծեն, սակայն կան նաեւ այնպիսի ցեղեր որոնք՝ ծագումով իսկ Հայուն մօտ, միշտ համակրական եւ բարեկամական հակումներ ունին դէպ ի Հայ ազգը:

Ցանկալի էր որ ուրիշներ «Անահիտ»ի այս էջերուն մէջ «քիւրտ» անուան տակ խտացած տարբեր տարբեր բարքերով եւ յատկութիւններով ցեղերը ճանչցնէին իրենց իսկական եւ ուրոյն գոյնովը, իրենց դէպ ի Հայութիւնը ունեցած հակումներով կամ ատելութիւններով, եւ հայ ազգը ճանչնար իր բարեկամն ու թշնամին այդ ցեղերէն:

Գալով Եգիպտոսներու եւ Հայերու յարաբերութեանց, Եգիպտոսները հին ժամանակէ ի վեր Հայերն իրենց բարեկամ ընդունած ըլլալով, միշտ բոլոր ազգերէ եւ ցեղերէ աւելի բարեկամական հակում մը ունին դէպ ի Հայութիւն. իրենց առ մեզ ունեցած համակրանքը կրկնապատկուած է ուսուցիչական պատեւրազմի միջոցին՝ ուսանայ զօրապետներու իրենց ըրած բարիքներուն, եւ եգիպտացի ազգականութեան ուսական հողին վրայ բնակութեան տեղ շնորհելուն համար:

Իրենցմէ անոնք որ հայ տուններու մէջ կամ Հայերու հետ մօտէն յարաբերութիւններ ունեցած են, զարմանօք կը պատմեն հայ ըն-

տանիքներու մէջ եղած բարոյականի բարձրութիւնը որ կը պակսի իրենց մէջ եւ մանաւանդ Հայոցս մեր ազգականներէն ամուսին ընտրելու արգելքը:

Եգիպտոսները վերջին տարիներուս թրքահայ գէպքերու միջոցին շատ սոխթներու մէջ օգնեցին Հայերուն, Ռուսիոյ մէջ եղողները որ մեծամասնութեամբ ուսուցիչական սահմանին մօտերն են հաստատուած, Ռուսիա գաղթող եւ հայրենիք վերագարծող խումբերուն առաջնորդեցին՝ կեանքերին զոհելու պատրաստականութեամբ մը, եւ շարաթներով իրենց տունները պահեցին ու խնամեցին անկարող, հիւանդոտ եւ ծերունի գաղթականները:

ԱՐՄԷՆ



### Լ Ա Յ Գ Ն Ր Բ

#### ԺԱ.

#### Ե Հ Ո Վ Ա.

Որոտաձայն կառքով թըռաւ Եհովա, Քերովբէից բըբեր թըռան՝ վառ մըրրիկ. Եւ գոռաց ձայն մը՝ Զի հեծէք եւ արի՛ք, Ո՛վ Արարատ, ո՛վ ժողովուրդ Քասաղայ:

Բաբելոն ա՛լ պոռնիկ դարձաւ, պիղծ պոռնիկ, Բացաւ ծըծերն, օրն ի բուն մերկ են հիմայ, Ճըմէ՛ զանոնք ուրբով, ո՛վ ճետ Թորգոմայ. Ելէ՛ք, անոր դէմ Բարկութիւնս կը տանիք:

Ոսկեքարի պէս Երեւոյթք մը ցոլաց. Ապա անցաւ ինչպէս սին հողմ եւ ունայն, Եւ թանձրացաւ ծըխոյ պէս մութ միզամած:

Բայց Մարգարէն որ սեպ լեռնէն տեսաւ զայն՝ Երկըրպագեց, աղաղակեց բարձրաձայն. Դու անողորմ ես եւ արգար, ո՛վ Աստուած:

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ



# ԲԱՐԻՉԵԱՆ ՆՕԹԵՐ

ԳԻՇԵՐՈՒԱՆ ԲԱՐԻՉԻՆ ՄԷՋԷՆ

— 0 0 —

Հինգշաբթի, 4 յունուար, 1900

Մառախուղի ու խաւարի կէս-գիշերէ մը յետոյ ուր մարդասպաններն ու թափառիկները փողոցներէն շտապով ու դանդաղ կ'անցնին, մինակս, քարափներուն մահացու երկայնքներն ի վար, հսկումի անդառնալի որոշումէն աչուրներս վախով լեցուն, քովս ի վեր ու վրաս յարկուող երկաթէ մութին ու վախին մէջէն՝ տաժանագին կը քալէի :

Հազարաւոր փողոցներ հրդեհուած կածաններու նման կը փախչին կը հեռուընան իրենց ետեւէն քաշքշելով լապտերներու խառնաւ մառնուով, խղզող մշուշին մէջէն, որոնք ճեղքուած գանկերու նման պատէ պատ խարխափելով իրարու կը բաղխին . . . :

Մեռելական գետին վրայ կամուրջները՝ կափարիչները բաց մոռցուած երկայն դադաղներու նման, իրենց եզերքները լոյսի դեղին թերթազերծուող փունջերով քով քովի երկննալով կ'անշարժանան : Ու կարմիր ջուրը իր վրայ գալարուող կամուրջներուն ու ածուխի ու սալքարի հսկայ նաւերուն տակէն սողոսկելով կ'անհունանայ ու կ'երթայ հրէշային ու արիւնհզակ անասուններու կարաւանի մը նման, որ բոլորը մէկ, գիշեր ատեն, փորի վրայ եկած՝ ցած քարանձաւէ մը, վայրագօրէն, մահագուժօրէն, իրենց ոռնուով զսպելով կը փախչին . . . :

Հեռուներէն հազուադիւրս անցորդներ կ'անցնին . հազիւ կ'որոշուի : Անձրեւով խառնուած յոգնած հով մը խաւարն ու մշուշը վերէն կախուած եղբերական վարագոյրի մը նման երբեմն կը շարժէ : Քաղաքին բոլոր լոյսերը անհնարին տանջանք մը ունին այս արապետող կուրութեանը մէջ : Ու թեւերս զէպ ի առաջ երկարելով կ'երթամ :

Անոնք որ միայն գիշերը կ'ապրին, հետզհետէ մօտաւոր գիւղերէ զէպ ի Բարեզ կը սկսին

քալել : Դանդաղ ու ծանր ու յոգնած ձիերը, ամէն ետ փախչող փողոցներէ, իրենց բեռուած սայլերը քաշելէն զէպ ի մեծ հրապարակները կը տարագրուին՝ թաց քարերուն վրայ պայտերնուն ախտաւոր խոնջէնքը հընչեցնելով : Ամէն մէկ սայլի վրայ շալերով ու լաչակներով փաթթուած ծեր կիներ բանջարեղէններու կուտակումներու մէջ զառամած, պղտիկցած, քովերնին կարմիր լապտերներով ու ձեռուընին խարազաններ, զէպ ի Մեծ Հալերը կը մտրակին իրենց ձիերը : Ամբողջ մարդկութիւն մըն է որ կ'անցնի քնացող Բարեզին մէջէն : Գաղթականներու երեւոյթը ունին ասոնք որ ա'լ ձանձրացած են իրենց ամէն օրուան անօգուտ ու վերջալոյսներուն դարձեալ նորոգուող ապարդիւն աքորանքէն : Ձիերն, անձերն ու անիւներն ալ իրենց դարաւոր ու ճակատագրական ճամբան գիտեն, միշտ միեւնոյն սահմակող լոռութեանը մէջէն զէպ ի միեւնոյն դժոխային ու արիւնոտ աղմուկը Մեծ Հալերուն : Իրենց տողանցումները յուղարկաւորումներ են, աւելի ծանր, աւելի հանդիսաւոր ու միշտ անձայն ու մղձաւանջային :

Արուարձաններէն ու գոիհներէն Բարեզի ճամբաներն աւելոյ ընտանիքները՝ հրապարակներուն չորս անկիւնները կը ցրուին : Տասը տարեկան սղէն մինչեւ ութսուննոց էրիկմարդիկ ու կիներ, ձեռքերնին աւելներ՝ արմատէն հանուած ծառերու նման, առանց ձայնի, դանդաղ, համակերպող ու ձեռներէց, քարայտակները կը մաքրեն : Մութին մէջ մեռելական ձեւեր կ'առնեն իրենց շարժող մարմինները, ձեռուընին՝ աւելին կոթին բարձրացուցած՝ անդունդէ մը վեր ելլելու ճիգն ընողներու կերպարանքը տալով իրենց :

Ու քսուելով քովէք կ'անցնին անհամար մարդեր, ուսերնուն վրայ խոշոր պարկերով : Ասոնք ահաւոր կերպարանքներ ունին : Մէկ կողմ ծռած ամենի կղակներով ծերեր են : Իրենց վիզերէն պղտիկ լապտերներ կախած են, արիւնոտ միսի կտորներու նման : Շատերուն փայտէ սրունգները քարերուն վրայ անօգուտ կոչնակը կը հնչեցնեն իրենց աւերակ մարմիններուն : Այս բոլորն ալ Մեծ Քաղաքին դաւակներն են, անոր մեքենաներէն արորուած ու

փշրուած անդամներով : Իրենց հին ու պայծառ ու երկտասարդ մարմիններէն միայն բեկորներ կայ վրանին : Բայց միշտ կը քալեն անոնք :

Իրենց վերջին ազսէնթին տարփանքը մահ երգող գինովներ կ'անցնին , զոյգ զոյգ ու առանձին , հայտնելով որ զիրենք վերջապէս չտարաւ չհասնուող երազին անդորրութեանը : Բաց զլուխներնին մութին կը բաղխեն ինչպէս բանտի մը երկաթէ պատերուն ու նորէն ուշաբերուելով , ձեռքովնին օդին մէջ ուրուականներ կը քանդակեն , պողոտային վրայ ծաս մը գտնելու յոյսով որպէսզի վայրկեան մը հանգչեցնեն իրենց կռնակներուն տիրական խենթութիւնը . . . :

Յետոյ թափառիկները կուգան , անբանութենէն գմբէթուած ցաւագինուսերով , ու իրենց կմախքէ թեւերը մինչեւ գետինը կախ աշուրնին գոց , ջուլերով փաթթուած , խոհուն ու տարամերժ , իրենց ամօթահար քայլերը եւ հպարտութեան ու ատելութեան մարմինները կամուրջներուն տակ աքսորելով : Ու ոչ ալ ասոնք կը խօսին , օտարականներու նման մէկմէկու քովէն կ'անցնին , առանց իրարու նայել կրնալու , ու չես գիտեր ինչ բանէ գինովցած , գրեթէ ծնկաչոք , պզտիկ քայլերով թափառելէն կը կորսուին կ'անհետանան :

Տարիքոտ աղջիկներ երբեք չանցնող հարուստ անցորդին կը սպասեն , յայրատ նայուածքներով , նեղ փողոցներուն անկիւնը , փեշերնին հանգրիծած , անկարելի շուալտութեան յոգնած խոստումներով :

Ու վերջապէս մարդասպանները կուգան : Ամենէն վսեմները : Չհամակերպողները : Անոնք որ իրենց իրաւունքը յաւիտենական Դանակին ազամանդէն կը սպասեն : Քովէզ կ'անցնին իրենց երկու խորունկ աշուրները հոգեթիզ խեղճութեանը մէջ յանկարծօրէն աշտարակելով . . . : Գիտակից ու սպառնական ու տիրական վախն են անոնք : Հերոսի քայլերունին ու կարծես թէ գլխուղ վրայէն կը քալեն : Արիւն կը թքենն ու իրենց հազը փոթորիկ մըն է փողոցներուն վրան : Անոնք միայն գիշերը կը ճանչնան ու Ոճիւրը կ'ապրին , մինակնին , գիւցազնօրէն :

Նոթն-Տամի տակէն կ'անցնիմ , գլուխս ծռած իր վախին , Հաստատութեանը ու Գեղեցկու-

թեանը առջեւ : Իր հսկայական գիծերը չեն որոշուիր , միայն երկու զանգակատունները տարտամօրէն անոր մարմինէն անջատուելով վեր կը բարձրանան աղօթելու խելայիղ ու պաղատագին շարժումով մը :

Աստուծոյ Օթեւանին առջեւէն կը սահիմ կ'անցնիմ , որուն պատուհանները հիւանդներուն բոլոր հոգեվարքներուն դիմացը այնչափ անդթօրէն գոց են : Աջ կողմի դռնէն չորս սեւաւառ որ մարդեր կատքի մը մէջ փաթթուած գիակ մը կը դնեն : Գլխարկս ձեռքս բռնած ողջունելով կ'անցնիմ անձանօթ հոգիին ետեւէն որուն գիշերային մահը վաղուան տենդերուս մէջ ա' յնչափ եղբայրօրէն պիտի ապրիմ : Մեռելակառքը աւերակի փլչող պատի մը պէս քիչ մը անդմուկէ յետոյ կ'անհետանայ . . .

Մինչեւ Մոնմարթի կ'երթամ՝ անմիջապէս վերադառնալով : Միեւնոյն քայքայուած , գիւղերէն Բարիզ , միեւնոյն ցաւագին մարդկութեան : Ու հիմա բոլորը ետ կը զառնան իրենց ամիսներու աշխատանքը , Բարիզին յանձնելէ յետոյ : Պարապ սայլերուն մէջ նետուած են բոլորն ալ , պզտիկները կողովներուն մէջ , ու մեծերն ալ քով քովի իրար տաքցնելով : Կոտորածէ մը փախչողներու աճապարանքը ունին , այս գիււալին աղմուկներուն մէջէն սարսափահար ձիերը խարազանելով : Աշխատաւորները կը սկսին գործատուն շտապել : Կառքերը կը բազմանան : Ու քաղաքը անսահմանօրէն երկեփտալ կը սկսի : Աստուան լրագիրները ամէն գիշէ կը պոռան : Երկաթուղիի հեռաւոր սուլումները հողին տակէն կը գալարուին : Կամուրջէ մը մեր թաղը կ'անցնիմ : Պաշտելի կապոյտ մը քոյրօրէն ամէն բան կը շղարչէ : Քարափներն ի վար ծաղիկի թաղարները կան , քով քովի , խիտ խիտ : Ու բոլոր այդ հանդարտ գեղեցկութիւնները նուիրական գիւղերուն , իրենց խոշոր բաժակները արշալոյսին բացած , միակ միխթարանքս կ'ըլլան այս գիշերուան մղձաւանջի պտոյտէն իմ մէջս անցած ցնորաբեր զահանդանքին :

ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ



Պ. ԻՒՐԻ Յ ՎԵՍԵԼՈՎՍՔԻԻ ՅՈՒՅԼԵՆԸ

— 0 —

Մոսկուայի Հայերը, նախաձեռնութեամբ Պ. Աղեքսանդր Մատուրեանի, յունուար 22ին որոշած են ասուել հանրաձայնօթ հայասէր Պ. Իւրիյ Վեսելովսքիի տասնամեայ գրական գործունէութեան յորելեանը : Պ. Վեսելովսքի ուսական հանդէսներու եւ լրագիրներու մէջ իր հրատարակած բազմաթիւ յօդուածներովը եւ իր մէկ քանի գրքերովը ազնիւ ջանքը ցոյց տուած է չճանցուած կամ գէշ ճանչցուած հայ ժողովուրդը իր ճշմարիտ նըկարագրովը ուս հասարակութեան ծանօթացնելու : Պ. Վեսելովսքի ուսումնասիրած է մասնաւորապէս Քամառ-Քաթիպայի, Պէշքեթաշլեանի, Րաֆֆիի, Լ'Կոնցի, Սուղուկեանցի գրական գործերը եւ ուսերէնի թարգմանած է այդ գրագէտներուն լաւագոյն էջերէն մէկ քանին :

Մեր յառաջիկայ թուով մանրամասն յօդուած մը պիտի հրատարակենք Պ. Վեսելովսքիի հայասիրական գործունէութեան մասին :

Այս յորելեանին առիթով, Ա. Չօպանեան հետեւեալ նամակը զրկեց Պ. Իւրիյ Վեսելովսքիին :

Պարո՛ն,

Կը փութամ իմ անկեղծ շնորհաւորութիւններս ձեզի զրկել այդ երախտագիտութեան յորելեանին առիթով զոր կազմակերպելու բարեպատեհ գաղափարն ունեցած են իմ Ռուսաստանի հայրենակիցներս՝ տօնելու համար թանկագին ծառայութիւնները զոր տասը տարիէ ի վեր դուք կը մատուցանէք հայկական դատին :


Ձեր լեզուն գծադրաբար չեմ գիտեր եւ ձեր գործը բնագրին մէջ կարգալու բարեբաստութիւնը չեմ ունեցած . բայց Հայոց վրակախութեան ու պատմութեան մասին ձեր հրատարակած յօդուածներէն ոմանց թարգմանութիւններն ու վերլուծութիւնները կարդացած եմ եւ գիտեմ թէ ի՛նչ արգարադատ ոգով մը հասկցած ու գնահատած էք հայ ժողովրդին մտաւորական ու բարոյական յատկութիւնները, եւ թէ ո՛րքան վեհանձն եռանդ մը ցոյց տուած էք ուս հասարակութեան ծանօթացնելու համար մեր ցեղին իրական հոգին՝ իր բանաստեղծներուն մէջէն :

Այն եղերական օրերուն, ուր թրքական Հայաստանի մեր դժբաղդ հայրենակիցները ենթարկուեցան ամենէն հրէշային վայրագու-


թիւններուն զոր պատմութիւնն արձանագրած ըլլայ երբեք, ինչ որ մեզ յուսախաբ ըրաւ ու մեզ ցուցուց ամէն բանէ աւելի, այն անգիտացումը եղաւ զոր եւրոպական ժողովուրդները ցուցուցին հայ ցեղին պատմական դերին ու ճշմարիտ նկարագրին, եւ այն թշնամական ու մերթ դայթակղականօրէն նախատալից ընթացքը զոր ունեցաւ արեւմտեան մամուլին մէկ մասը՝ բազմաչարչար Հայաստանին հանդէպ : Դուք մին եղաք անոնցմէ որ մ'ըր ժողովուրդը պաշտպանեցին տգէտներուն ու շարամիտներուն դէմ, որոնց անարգանքներն անոր տառապանքները կը սասուկացնէին եւ անոր վէրքերը կը պղծէին : Դուք ի վեր հանեցիք այն բարոյական առողջութիւնը, այն աննուաճելի կորովը, Արդարութեան ու կեանքի այն ծարաւը զոր, հակառակ աղէտներու եւ անկումներու երկար շարքի մը, հայ ժողովուրդը զեռ կը պահէ, իր բարքերուն եւ իր նկարագրին մէջ, իր բանաստեղծներէն եւ իր արուեստագէտներէն զրուատեղաւորած, մի՛շտ կենդանի ու թարմ՝ Բարբարոսութեան դէմ անընդհատական պայքարի իր յամառ կամքին եւ ազատութեան ու քաղաքակրթութեան ապագայի մը անդըրդուելի հաւատքին մէջ :

Մարգասէրները որ մեր սովամահ եղբայրներուն եւ մեր հազարաւոր որբերուն իրենց գթասիրտ նուիրատուութիւնները զրկեցին, անշուշտ իրաւունք ունին մեր շնորհապարտութեանը . բայց այն բարոյական ծառայութիւնը զոր դուք եւ միեւնոյն գործը կատարող ձեր եղբայրակիցները մեզի մատուցիք՝ զրպարտութեանց եւ տգիտութեանց դէմ մեզ պաշտպանելով, մեզի համար ունի նշանակութիւն մը եւ արժէք մը այլապէս բարձր ու մեծ : Մեր երախտագիտութեանը լաւագոյն մասը ձեզի կը պարտինք, որովհետեւ դուք մեզի պաշտպան կանգնեցաք բարոյական կոտորածին դէմ որ թերեւս շատ աւելի գարշելի եղաւ քան նիւթական վայրագութիւնները զոր անգիտակից անբաններ գործադրեցին :

Հաճեցէք ընդունիլ, Պարոն եւ սիրելի եղբայրակից, յարգալից զգացմանցս հաւաստիքը :  
Ա. ՉՕՊԱՆԵԱՆ



### ՀԱՅ ԷՋԵՐ



Այս ընդհանուր տիտղոսին տակ պիտի հըրատարակենք «Անահիտ»ին մէջ Հայոց հին Քնարին կարգ մը արտադրութիւնները, որոնք զեռ մեծ մասամբ ձեռագիրներէն զուրս չեն ելած եւ անծանօթ են մեր հասարակութեան : Իրենց պատմական ու կրօնական երկասիրութիւններէն զատ, մեր նախնիք մեզի թողած են անհամար բանաստեղծութիւններ, եկեղեցական տաղեր, խորհրդանշանական քերթուածներ, սիրոյ կամ խնջոյքի երգեր, զրոյցներ ու նկարագրութիւններ որոնց մէկ փոքր մասը միայն հրատարակուած է մէկ քանի ամսաթերթերու մէջ ինչպէս եւ մէկ քանի հատորներով («Քնար Հայկական», «Համով-հոտով», «Մանանայ», «Հայգիրք» Արիստակէս Վ. Տեվկանցի, Կոստանեանցի «Ժողովածու»ները, եւն) : Այդ բոլոր հրատարակութիւններն ընդհանրապէս «բանասիրական» գոյն մը ունին . մեր հին քերթութեան այդ նշխարներուն «գրական» նշանակութիւնը զեռ չէ ըմբռնուած, չէ արժեցուցուած ինչպէս որ պատշաճ է եւ հարկաւոր . մեր արդի գրական շարժումին մէջ անոնք չունին իրենց տեղը զոր կրնային ունենալ, չեն ներգործած ազդեցութիւնը զոր կոչուած են ներգործելու՝ երբոր ճանչցուին ու տարածուին իբրեւ ամէն բանէ առաջ «գրական» էջեր : Մենք պիտի հրատարակենք անոնցմէ ամբողջ շարք մը, ընտրանքով, առանց զբաղելու անոնց անտիպ կամ արդէն տպուած ըլլալուն խնդրովը, գանձք տալով մեր ընթերցողներուն իբրեւ «հայկական բանաստեղծութեան էջեր» : Այդ շարքին մէջ պիտի դնենք նաեւ, երբեմն, ժողովրդական երգեր որոնք մինչեւ այժմ կենդանի պահուած են Հայաստանի մէջ եւ որոնց շատը հին են ու այս ձեռագիրներու մէջ գտնուածներուն ժամանակակից (ինչպէս որ ձեռագիրներուն մէջ կը գտնենք քերթուածներ ու երգեր որոնք մինչեւ հիմա ժողովրդին բերանը կը պտըտին), եւ վերջապէս, աշխարհարար թարգմանութիւններ նախնեաց դասական մատենագրութեան հատընտիր հատուածներու : Այդ հին երգերուն ու քերթուածներուն մէջ անշուշտ շատ քիչ կարելի է գտնել, նիւթին տեսակէտով, «հայկական»ինքնատպութիւն . միօրինակ են, մէկ քանի զլիաւոր ու միշտ յեղյեղուած կրօնական կամ աշխարհիկ մոթիֆներու շուրջը կը դառնան անոնք, եւ ձեռին մէջ՝ յաճախ խառնակ ու անճաշակ, կը ցուցնեն բիւզանդական, ասորական ու մանաւանդ պարսկական բանաստեղծութեանց ազդեցութիւնը . բայց անոնց մէջ կանկտորներալ, բաւական բազմաթիւ, ուր բանաստեղծական զգացման կամ քնարերգական արտայայտութեան ճշմարիտ ինքնուրունու-

թիւն մը կը յայտնուի որ ազգային խառնուածք մը կը ներկայացնէ, եւ կամ հետաքրքրաշարժ ցուցարեւութիւն մը մերային բարքերու, ձգտումներու եւ մտաւոր ու բարոյական վիճակներու : Մենք կը կարծենք որ մեր գրական նոր սերունդը, ուշադրութեամբ ուսումնասիրելով մեր հայրերուն այս քերթական հատակոտորները, կրնայ անոնց մէջ գտնել ոչ միայն հին բարքերու, հին լեզուի եւ հին ոճի ուսումնասիրութեան առարկայ մը, այլ եւ շահեկան ու հարուստ միջոց մը մեր արդի բանաստեղծութեան մէջ արեւելեան ու մասնաւորապէս «ազգային» դրոշմը ճոխացնելու(\*) :  
Ա. Չ.

Ա .  
ՏԱՂ ԾՆՆԻՆԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

- Կայր Կոյան ի յայրին, կայր եւ երկնանայր .  
Կամէր ծընանիլ զկեանս ազգի մարդկան :
- Կոյսըն ծընանէր զկեանս ազգի մարդկան,  
Կենսատու Փրկիչն զէակիցըն հօր :
- Կայծակնատեսիլ կարմրացայտ ամպոյն  
Կացեալ սիւն լուսոյ կանգնեալ ի յերկնուստ :
- Կարեւոր խմբիցն կանչեն ի յերկնից,  
Կենարար ծընաւ կեցուցիչ մարդկան :
- Կերպ մի ի գնդէն, կարգ մի ի թըւէն,  
Կանչեն առ հովիւսն կարեւոր կոչմամբ :
- Կոյսըն ծընանէր, կոյսըն ծընանէր,  
Կոյսըն ծընանէր զէակիցըն հօր :
- Կրկնեալ առ նոսա կրթական մտօք  
Կարեւոր կերպիւ կանխեաց ի բարձանց :
- Կոչէր խորհրդով Կարապետին մայր,  
Կաքաւէր կըքով կարեւոր պառաւն :
- Կորուսեալն եւա կողոպտեալ կենօք,  
Կանգնեցաւ ի վեր, կայր մօտ առ կուսին :

(\*) Մեր հրատարակելիք կտորները ընդօրինակուած են վիեննայի եւ վենետիկի Միթիթարեան վանքերուն գրողարանին ինչպէս եւ Բարիդի Ազգային Մատենադարանին ձեռագիրներէն :

Կոյսըն ծընանէր , կոյսըն ծընանէր ,  
Կոյսըն ծընանէր կեցուցիչ մարդկան :

Կոչկոճեալ ոտիւք , կորափիտ անձամբ  
Կանգնեցաւ ի վեր կուսին խոնարհեալ :

Կարմրացայտ այտիւք , կապուտակ շրթամբք ,  
Կոճոպեալ հերովք , կայթէր արտասուօք :

Կողկողեալ կերպիւ կարկառեալ զբազուկսն ,  
Կրճտէր զատամուռնս , կոճէր յոյժ ըզկուրծան :

Կոյսըն ծընանէր , կոյսըն ծընանէր ,  
Կոյսըն ծընանէր զէակիցըն հօր :

Կանչեալ մեծաձայն կոչէր զնախնի հայրն ,  
Կանգնեալ Ազամայն ի կործանմանէն :

Կողկողէր բազկօքն , կըռչէր արտասուօք ,  
Կենարա՛ր Փրկիչ , կեցո՛ր զկորուսեալս :

Կայթելով հովուաց կոչ ասեն քառանց ,  
Կապուտակ ուլիցն կումբ առեալ կայթեն :

Կոյսըն ծընանէր , կոյսըն ծընանէր ,  
Կոյսըն ծընանէր կենսատու փրկիչ :

Կետք են երկուցեալ , կայտառք են սարսեալ ,  
Կարկեալ գետք ի զէմս , կոճի ծով ալեօք :

Կայ տէրն ի վերայ կապուտակ գետոյն ,  
Կամէր մկըրտիլ կարապետ բազկաւն :


Կայր հայր ի վերուստ կանչէր մըկրաչին ,  
Կայ դա իմ որդին կամացն իմ հաճոյ :

Կոյսըն ծընանէր , կոյսըն ծընանէր ,  
Կոյսըն ծընանէր կեցուցիչ մարդկան :

Կայր եւ սուրբ հոգին , կապուտակ ամպով .  
Կայծակնազուռնով կերպիւ աղաւնոյ :

Արդ . օրհնեալ է հայր , 'ւորդին միածին ,  
Հոգին ճշմարիտ յաւիտեանս ամէն :

Կրթարան վեհակի վանքին, ՍՐԻԿ ԿՈՍՏԱՆԴ  
Տաղարան , թիւ 872



### Հ Ա Պ Տ Ո Ւ Թ Ի Թ Ի Ն Ը

— 0 —

Ա՛լ հիմակ ազատած էինք :  
Շոգեհաւանիս, Խանիայէն մեկնելէն ի վեր ,  
ամենի ալիքներուն ձեռք տասնըվեց ժամ ան-  
ընդհատ շարչրկուելէ ետքը , վերջապէս կրցած  
էր ապաստանիլ Սուտայի ծովախորշին մէջ :  
Հո՛ն պիտի սպասէինք ամբողջ գիշերը , եւ  
գուցէ միւս օրն ալ , որպէսզի ծովը խաղաղէր  
եւ կարենայինք ճամբանիս շարունակել զէպ ի  
Ալեքսանդրիս : Յունուար ամսուն , Բանթալէոն  
ընկերութեան «Ուրանա» շոգենաւին մէջ կը  
գտնուէինք : Այսչափը բաւ է հասկցնելու ,  
կարծեմ , թէ մեր էութիւնները ո՛րչափ ան-  
վստահելի տախտակներու յանձնուած էին :  
Բիրէէն մեկնելէս ի վեր , արդէն երեք օր կուռած  
էինք ծովուն հետ , որ մասնաւոր ջանք մը  
ցոյց կուտար պէշ կատակ մը խաղալու քա-  
ռասուն տարիէ ի վեր իր ջուրերը ձեղքող  
«Ուրանա»ին գլխուն :

Երբ նաւը մտաւ ծովախորշին մէջ , կոհակ-  
ներու հալածումէն ազատած , ամենքս ալ մեծ-  
կակ շունչ մը առինք : Ճամբորդները , մեծ մասը  
կրետացիներ , որոնք Ռեթիսօ կամ Քանտիա  
պիտի ելլէին , իրենց կերակուրը եւ գինին  
հանեցին մէջտեղ : Նս , միայնակ , որովհետեւ  
ծանօթ մը չունէի , գացի շոգենաւին խելքին  
կողմը քանի մը քոնեաք խմելու , — տաքնալու  
համար , եթէ արդարացման պէտք մը կը տես-  
նէք , — եւ քանի մը սիկարէթ ծխելու :

Օղը փոթորկալից էր միշտ , պաղ հով մը կը  
սուլէր Աքրոթիրիի դարաւանդներուն վրայէն ,  
ու հեռուէն կը լսուէր ալիքներու փշրուիլը՝  
Սուտայի մուտքին եզերքը կոթողած խարակ-  
ներուն զէմ : Ամպերը հետզհետէ կը սեւնային  
կը թանձրանային գլուխներնու վրայ , չարա-  
չուք վազքով մը զէպ իլեռները խուժելով : Լեռ-  
ներուն կողերը , տեղ տեղ , խարոյկներ վա-  
ռուած էին որոնց կարմիր բոցերը , հովէն տա-  
րուբեր , ու չորս կողմը տարածուած խաւարին  
մէջ փալփուռն , տեսակ մը անարեկիչ հրապոյր  
կուտային մեր առջեւը պարզուած մեծ ու վայ-  
րագ տեսարանին :

Ժամերով մնացի հոն : Նաւուն մէջ ճամբորդ-  
ները , ճաշերնին աւարտած , կը քնանային հիմա .  
միայն մէկը ինծի հետ , խելքին կողմը , արմուկը  
շոգենաւին եզերքին կրթնցուցած , կը նայէր

ծովուն, ասեն ատեն շիշ մը հանելով երկար սեւ վերարկուին գրպանէն ու բերանը դնելով: Պահ մը, երբ նստարանին վրայ ընկզմած կը ծխէի, երգի ձայն մը, զոր հովը կտոր բրդուճ կը բերէր, հասաւ ինծի: Բառերը չէի լսեր, բայց տխուր, միօրինակ եղանակը ցոյց կուտար թէ սեղմուկ, ողորմուկ երգ մըն էր անիկա, որ հովուն վայնասունին հետ խառնուելով ա՛լ աւելի լալկան կը դառնար: Ոտք ելայ տեսնելու համար թէ ո՞ւրկէ կուգար ձայնը: Սեւ վերարկուով մարդն էր որ գետինը կծկտած, երեսը ծովուն, կ'երգէր: Քիչ մը աւելի ուշադիր ըլլալով՝ լսեցի բառեր ու ըոնք հայերէնի կը նմանէին, ու աւելի մօտեցայ: Մարդը կ'երգէր ինք իրեն համար, գրեթէ ցած ձայնով. միայն նաքարաթիւն էր որ աւելի բարձր կը կրկնէր ամէն տունի վերջը: Որոշապէս կը լսէի դայն հիմակ.

«Եկուր երթանք պաղչան ի վար, պզտի հարս, Ես վարդ քաղեմ՝ դուն նուշուֆար, պզտի հարս»

Մէկէն քովը մօտեցայ ու առանց ուրիշ յառաջարանի, տեսակ մը յուզումով, ըսի.

— Բարեւ պարո՛ն, Հա՞յ ես դուն:

Սեւ վերարկուով մարդը երգը դադարեցուց, ինծի դարձաւ ու շեշտ երեսս նայելով՝ պատասխանեց.

- Այո՛:
- Ո՞ւր կ'երթաս... Եգիպտո՞ս:
- Չէ՛:
- Հապա՞...
- Հո՛ն:

Ու ձեռքովը ցոյց տուաւ դիմացի լեռները: Իր կարծ, կտրուկ պատասխանները քիչ մը շփոթած էին զիս, այսու հանդերձ առաջ փարի խօսակցութիւնս:

- Ի՞նչ պիտի ընես հոն:
- Կոխ՛ւ:

1897 յունուարի մէջ էինք, կրետական ապրտամբութեան տաք միջոցին. Ուանիա գըտնուած միջոցնուս՝ շոգեհաւէն լսած էինք ապրտամբներուն հրացանաձգութիւնը որոնք քաղաքը պաշարած էին գրեթէ:

- Մինա՞կ ես, հարցուցի:
- Չէ՛, կրետացի ընկերներ ունիմ:
- Ո՞ւր:
- Հո՛ս, շոգեհաւէն մէջ են:

Անհամբոյր մէկն էր խօսակիցս, որուն հետ անկարելի երեւցաւ ինձ խօսքս երկարել:

— Յաջողութիւն կը մաղթեմ, ըսի, ու հեռացայ քովէն:

— Ծնորհակալ եմ, պարոն:  
Ու նորէն երեսը դարձուց դէպ ի ծովը:

Քիչ մը ետքը ականջիս հասաւ նաքարաթիւն.  
«Եկուր երթանք պաղչան ի վար, պզտի հարս, Ես վարդ քաղեմ՝ դուն նուշուֆար, պզտի հարս»

Երգը կը շարունակուէր, ու ատեն ատեն կը տեսնէի շիշը որ սեւ վերարկուին գրպանէն դէպ ի բերանը կ'երթար:

Իր խորհրդաւոր ձեւերը, ու տխուր, միօրինակ երգը որ հիմակ անուշ ու միանգամայն սրտածմլիկ ազդեցութիւն մը կ'ընէր վրաս, ուշադրութիւնս բոլորովին դէպ ի իրեն դարձուցին: Ակնապիշ զինքը կը դիտէի ու կը զգայի որ ցաւագին պատմութիւն մը ունէր ան, զոր սակայն չպիտի կրնայի իմ հարցումներովս քաղել բերնէն:

Երգը դադարեցուց, ոտք ելաւ եւ սկսաւ զալ դէպ ի ինձ:

— Ա՛լ չե՞ս երգեր, ըսի իրեն քանի մը քայլ ընդառաջ երթալով:

— Չէ՛, պատասխանեց խնդալով:

Իր խնդումէն քաջալերեալ, ես ալ սկսայ ժպտիլ:

— Կ'երեւայ թէ պզտի հարս մը կը սիրես, ըսի աչքերուն մէջ նայելով:

— Ինչէ՞ն:  
— Որովհետեւ երգիդ մէջ տարօրինակ շեշտ մը կար որ կը յուզէր զիս:

Յանկարծ տխրութիւն մը պատեց իր դէմքը, յետոյ՝ մէկէն՝ ձեռքէս ըննեց եւ տարաւ զիս դէպ ի նստարանը:

— Նստի՛ր պատմեմ... ա՛խ, այս վայելեալնիս կ'ուզեմ սիրտս բանալ մէկու մը:

Նստեցանք քով քովի:

— Այո՛, պզտի հարս մը սիրեցի... Նանօն... պատմեմ ինտոր եղաւ: Տղայութենէ կը ճանչնայինք իրար. արտը, այգիին, կալը միշտ մէկտեղ էինք. ես իրմէ չորս սարեկան մեծ էի: Աղւոր, փամփուլ ազջիկ մըն էի. իրար կը սիրէինք, խենթի պէս իրար կը սիրէինք... ու պիտի ամուսնանայինք միասին: Տասներեք տարեկան էր երբոր զինքը ձգեցի ու Պոլիս գացի ստակ շահելու: Գործ չկար: Անցայ իզմիր, յետոյ Պերութ., յետոյ Եգիպտոս, հինգ տարի չարչարուեցայ օտարութեան մէջ, առանց իրմէ լուր մը կարենալ առնելու, միմիայն իր յիշատակովը լեցուած: Վերջապէս կրցայ 120 ոսկի մէկ կողմ դնել եւ անցած տարի դարձայ հայրենիք իմ Նանօս գտնելու: Ա՛խ, պարոն, Նանօն հո՛ն էր, մեծցած, ա՛լ աւելի

աղւոր , բայց ափսոս , հաղա՛ր ափսոս . . . երկու տարիէ ի վեր զինքը կարգեր էին մեր դրացի Մլոյէնց պզտի տղուն՝ Սարգիսին՝ հետ : Սարգիս տարի մը քովը մնալէ ետքը , ձգեր դացեր էր պանդխտութեան եւ հիմակ նանօն , միս-միսակ , պարոնտատին տունը կը սպասէր : Օր մը , վերջապէս , զինքը մինակ տեսայ այգիին մէջ . միշտ կը սիրէր զիս ու դժբաղդ էր հիմակ : Ա՛խ , ժամերով լացինք իրարու գիրկ . . . ամէն բան լմնցած էր մեզի համար . . . «Պիտի մեռնիմ , պիտի մեռնիմ , չեմ կրնար ապրիլ , չեմ ուզեր ապրիլ , » կը գոչէր խեղճ նանօն , իր աղւոր աչքերը սրբելով , կամացկամաց կրցանք այնպէս մը կարգադրել որ ամէն զիշեր կարենայինք գոնէ ժամ մը իրար տեսնել իրենց տան պարտէզին մէկ անկիւնը . . . ու այդ ժամը ալ մեր միակ կեանքը եղաւ : Նանօն չէր ի լար հիմակ , գրեթէ երջանիկ էր , ինչպէս ես :

Խօսակիցս ումպ մը խմեց իր բմպելիքէն ու շարունակեց .

— Գիշեր մը սակայն սարսափահար վրաս եկաւ ու թեւերուս մէջ իյնալով սկսաւ հեծկըտալ . — «Ի՞նչ կայ , բ՞նչ ունիս» , հարցուցի : Երբ քիչ մը հանգարտեցաւ , սկսաւ խօսիլ : — «Ա՛խ , կարօ , իմ ջան կարօ , չես գիտեր ինչ փորձանք կը դառնայ մեր գլխին վրայ , Թուրքերը պիտի դան մեր գեղն ալ կոխեն եղեր Հասան աղան որ պարոնտատիս բարեկամն է , եյիեր է այօր իմաց տալու իրեն : Մեծ ներս ինծի պատմեց լալով : Հասան աղան ըսեր է նաեւ որ Լիվան գեղի Հիւսէին չորպաճիին տղան՝ Մուրատ պէյ , մասնաւորապէս աչք ունի եղեր ինծի ու իս պիտի տանի . . . » Նանօն սկսաւ լալ , վիզս փաթթուեցաւ ու ողորմուկ ձայնով կը մրմնջէր . — «Ա՛խ , կարօ ջան , կարօ ջան , ազատէ՛ իս . . . »

— Զինքը քաջալերեցի , շարունակեց կարօ , արցունքները սրբեցի եւ որոշեցինք որ հետեւեալ գիշերը , Քիւրտի հագուստներ հագած , դամ զինքը փախցնեմ ու միասին երթանք հեռո՛ւ , հեռո՛ւ տեղ մը , ամէն վտանգէ ազատ : Ստակ ունէի եւ վտան էի որ պիտի կրնայի ազատել իմ աղւոր , իմ սիրակա՛ն նանօս :

— «Ա՛խ , չեմ ուզեր , չեմ ուզեր այդ շունին ձեռքը իյնալ» , կը գոչէր խեղճը , աչքերը խրփելով : Խօսքերս սակայն , սրտապնդեցին զինքը : Երբ մեկնելնուս ատենը եկաւ , նորէն սկսաւ վախնալ , չէր ուզէր որ բաժնուինք իրարմէ :

— Հիմակ , հիմակ երթանք , կ՛ըսէր լալագին : Բայց պատրաստութիւններ պէտք էր տեսնել . համոզեցի զինքը եւ վերջապէս տեղի տուաւ :

Հետեւեալ օրը մեր փախուստին պատրաստութիւնները տեսայ եւ գիշերուան սպասեցի , որպէսզի որոշեալ ժամուն երթամ նանօն առնեմ : Քիւրտի հագուստներս հագած՝ տունը պահուրտեր էի , ու արդէն արեւը կը սկսէր մարր մտնել , երբ յանկարծ իրարանցում մը բրդաւ գիւղին մէջ : Թուրքերն ու Քիւրտերը կոխած էին գեղը եւ ջարդն ու թալանը կը սկսէր : Սոսկումի վայնասուն մը ամբողջ գեղը կը սարսէր : Մեռնելու վրայ եղող մարդոց ցաւազին աղաղակներ կը հասնէին ականջիս , դռներու խորտակուելը կը լսէի ու կրակի հոտեր կուգար քիթիս : Եղած տեղս քամուեր մնացեր էի . մութը ա՛լ բոլորովին պատած էր , ու վայնասունները երթալով աւելի ահուկի կը դառնային : Ա՛յն ատեն ահուզող մը ինկաւ մէջս , խենթի պէս դուրս նետուեցայ ու վազել սկսայ առանց ետիս նայելու : Ա՛խ , կը վազէի , կը փախչէի դաշտերուն մէջ , լեռներուն վրայ , ու ձայն մը կը հալածէր զիս անընդհատ , — «Վա՛տ , վա՛տ , վա՛տ» գոչելով :

Վերջապէս՝ յոգնած դադրած՝ ինկայ բլուրի մը վրայ , մացառներու ետին : Հազիւ քնացած՝ ձիերու դփրտոցի ձայն մը զիս արթնցուց : Լուսցած էր արդէն : Չորս կողմս նայելայ , զգուշութեամբ տեսնելու համար թէ ուսկից կուգար ձայնը : Վարը , ճամբուն վրայ , աջ կողմէն , յանկարծ բազմութիւն մը երևցաւ : Չորս ձիաւորներէ ու տաս տասերկու մարդերէ կազմուած խումբ մըն էր : Խումբը կը յառաջանար դէպ ի ինծի . — «Աստուա՛ծ» գոչեցի յանկարծ ինքնիրենս : Զիերուն մէկուն վրայ նանօն էր նստած : Զիուն սանձը Թուրք մը բռնած էր եւ ուրիշ երկու Թուրքեր քովն ի վեր կը քալէին , ձեռքերնին թամբին վրայ դրած : Անմիջապէս հետեւէն ուրիշ ձիով մը : Մուրատ պէյը կուգար : Խելայեղ կը նայէի , անկարող , ձեռնթափ կատաղութեամբ մը . . . : Ի՞նչ կրնայի ընել այդ խմբին դէմ , միսմինակ , առանց զէնքի . . . : Ա՛խ , եթէ հրացան մը ըլլար ձեռքիս տակ , հո՛ն , մացառներուն ետին . . . : Խումբը ա՛լ եկած հասած էր ճամբուն մէջտեղը , ձիդ դիմացս , գրեթէ հազիւ յիսուն քայլ հեռու : Նանօն միշտ կը հեծկտար , ու լսեցի ականներուն մէջէն խեղ-

դուկ , լալկան ձայնը . . . «Ա՛խ , Կա՛րօ , Կա՛րօ ջան» : Ու այդ յուսակտուր , աղաչաւոր ձայնը , սոսկալի յանդիմանութեան մը , ահեղ անէծքի մը պէս կը ցնցէր իս . . . :

«Սոււմբը անցաւ ու աներեւոյթ եղաւ . ձորի մը մէջ : Այն ատեն ինկայ դետին ու լացի , լացի ժամերով , երեսս հողին , ձեռքերովս ականջներս խփած , որպէսզի չլսէի ձայնը որ սակայն միշտ կը թրթռար «Ա՛խ , Կա՛րօ , Կա՛րօ ջան» : Ու փախայ գացի , ապիկարութենէս ու վատութենէս զզուած , ինքզինքս անիծելով . . . : Ամիս մը առաջ՝ Պաթուճէն շոգենաւ մտայ եւ ուղղակի Բիրէ եկայ , առանց գիտնալու թէ ի՛նչ պիտի ընեմ հոն : Միակ մտածում մը ունէի . . . փախչիլ հեռո՛ւ , հեռո՛ւ , մինչեւ որ ա՛լ Նանօին պատկերը , ձայնը ինծի չհասնէր , չհալածէր , ու չլլկէր : Բայց , ափսո՛ս , առտուն , իրիկունը , գիշերը միշտ հո՛ն էր , աչքիս առջեւ այդ պատկերը , Նանօն Թուրքերուն ձեռքը , ձիուն վրայ քաշկոտուած , ու կ'անիծէր , կ'անիծէր զիս շարունակ . . . :

«Չէ՛ , անկարելի էր ապրել այդ շարչարանքի կեանքը : Յոյն յեղափոխականներ ճանչցայ , ու անոնց հետ որոշեցի Կրետէ երթալ , ապստամբներուն մէջ , Թուրքին դէմ կռուելու : Շոգենաւ մտած վայրկեանէս փրկուած էի . . . : Հիմակ Նանօն , իմ սիրական Նանօս , չ'անիծեր իս . . . լլկիչ , տանջող պատկերը ջնջուեցաւ մըտքէս , ու անոր յաջորդեց հին , աղւո՛ր պատկերը , Նանօի տան պարտէպի անկիւնին պատկերը . . . ա՛լ հաշտուեցանք իրարու հետ :»

Կարօ ոտքի ելաւ ու նորէն գնաց շոգենաւին ծայրը , իր առաջուան տեղը : Քիչ մը ետքը լսեցի որ կը շարունակէր երգել իր հաշտութեան երգը .

«Եկուր երթանք պաղչանի վար , պզտի հարս . . . »  
ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ՊՐՈՒՆԻԿ

Հորիվոնէն կարաւանն է կը փրթի .  
Ու կը սպասեմ : Վէտվէտուճներն ուղտերուն  
Կը գըծագրուին ու կը մեծնան , օրօրուն  
Կը մօտենան՝ շողացնելով արծաթի


Թամբերն իրենց : Ու կը սպասեմ . անջըզի  
Անապատէն ծարաւ մըն է անանուն

Ձոր հողույս մէջ այդ ճամբորդներն կը լընուն ,  
Մինչ արեւն ալ դաշտին ետեւ կ'անհետի

Եւ կը լըսեմ , վէտվէտող ծո՛վը մութին ,  
Բոժոժներուն զօղանջը դաշն ու տըրտում ,  
Մանուկներուն , կիներուն սիրտ ի խնդում

Աւետաւոր ճիչերն ու երգ . . . : Բայց , մըթին ,  
Կուլան աչքերս երբ անոնց մէջ չեն ճանչնար  
Ինչ որ գընա՛ց չըգառնալու ա՛լ համար :

ՎՍՀԱՆ ՏԻՐԱՆԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

— 0 0 —

— ՀԱՅԵՐԸ 1900Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՋ . —  
Ֆրանքօ - հայկական ընկերութեան անդամ Բրոք . Լէոն Մարիյեթի առաջարկութեամբ , Պ. Բոլ Սեպիյեօ , ժողովրդական աւանդութեանց 1900ի Տիեզերական Համաժողովին քարտուղար , հրաւիրեց Արշակ Չօպանեանը մասնակցիլ այդ համաժողովին : «Անահիտ» ի տնօրէնը Հայոց ժողովրդական աւանդութեանց վրայ ուսումնասիրութիւն մը պիտի կարգայ Համաժողովին նիստերէն մէկուն մէջ . եւ առկից զատ՝ Համաժողովին արտասովոր երեկոյթներէն մին , որոնք տեղի պիտի ունենան Բարիզի մեծ սրահներէն մէկուն մէջ , պիտի նուիրուի Հայոց ժողովրդական աւանդութեանց , երգերուն ու վէպերուն , որոնց մասին Չօպանեան պիտի արտասանէ բանախօսութիւն մը , եւ Ֆրանսացի արուեստագէտներ հատուածներ պիտի կարգան :

Օգտուելով այս առիթէն , Չօպանեան առաջարկեց որ 1900ի Տիեզերական Ցուցահանդէսին Համաժողովներուն մէջ տեղ ունենան միանգամայն հայկական ցեղագրութիւնը եւ Հայոց հին կրօնքին պատմութիւնը , եւ փափաք յայտնեց որ Պ. Լալալեանց , «Աղագրական հանդէս»ին մեծարգոյ հրատարակիչը , ուսումնասիրութիւն մը զրկէր կամ բերէր Հայոց գեղջկական բարքերուն վրայ , եւ Հ. Յ. Տաշեան , մեր հանրածանօթ գիտունը , ուսումնասիրութիւն մը ներկայացնէր Հայոց հին հեթանոսական կրօնքին վրայ : Այս առաջարկութիւնները ընդունուեցան . Հ. Տաշեան եւ Պ. Լալալեանց պիտի հրաւիրուին Ցեղագրութեան եւ կրօնքներու պատմութեան համաժողովներուն մասնակցելու :

— ՄԱՆՈՒԷԼԵԱՆ . — Յունուարի սկիզբը , Պ. Պ. Մաթիաս Տիւվալ , Բարիզի Բժշկական Համալսարանին ուսուցիչ , ժորժ Հերվէ , Մարգարանական Դպրոցին ուսուցիչ , եւ Էտուան

Իրևյեյ, Գեղարուեստից Վարժարանին ուսուցիչ, նամակ մը ուղղեցին առ Պ. Ի. Կիւլյեօ. նախագահ Բարիզի Մարդաբանական Ընկերութեան (Société d'Anthropologie), առաջարկելով որ Երուանդ Մանուէլեան անդամ ընտրուի այդ ընկերութեան, որու անդամներուն մէջ կան Ռիչէի, Պուչոսի, Մաթիաք Տիւվալի, Ռեյմոնի, Պոուաուելի, Բոճճիի, իշխան Ալպէս աբ Մոնաքօի, իշխան Ռոլան Պոնափաթի պէս անձնաւորութիւններ. յունուար 25ի նստին մէջ, Մանուէլեան անդամ ընտրուեցաւ ժողովին միաձայն հաւանութեամբը:

— ՇԱՀԻՆ. — Լոնտոնի Royal Society of painter-Etchers and Engravers ընկերութիւնը իրեն անդամ ընտրեց Էտկար Շահինը, որուն փորագրական գործերը պիտի ցուցադրուին մարտ 12էն ապրիլ 7 «Գեղարուեստներու ընկերութեան նկարասրահին (gallery) մէջ, 5A. Pall Mall East, London, S.W.

— ՍՎԱՃԵԱՆ. — Վահրամ Սվաճեան հրատարակեցաւ նուագել Բարիզի ամերիկեան հիւպատոսարանին վերջին մեծ ցերեկոյթին:

— ԹԵՐԼԵՄԵՉԵԱՆ. — Պ. Գ. Թերլեմեզեան, տաղանդաւոր Վանցի հայ ուսանող մը, Աքատէմի-Ժիւլիանի գծագրութեան վերջին մրցումին մէջ առաջին մրցանակն ընդունեցաւ: Պ. Թերլեմեզեան նկարչական շատ փայլուն ձիրքերով օժտուած երիտասարդ մըն է եւ գեղարուեստական գեղեցիկ ւպագայ մը կը խոստանայ:

— ԲԱՇԻՆ ԶԱՂԱՆԻ ՆԿԱՐԱԵՐԸ. — Պ. Բաշինջաղեանց չորս դաշտանկար ի տես դրած է Բարիզի ուսարուեստագէտներու Յուցանդէսին մէջ (75 Rue de Rome) որ բացուեցաւ յունուար 7ին եւ բաց պիտի մնայ մինչեւ փետրուար 4: Այդ չորս գործերը (Ամպեր, Կոկչայի լիճը, Տարիալի կիրճը, Արարատ լեռ) այս Յուցանդէսին ամենէն ուշագրաւ արտագրութիւններն են եւ նկարչին ղգալուն ու փափուկ տաղանդն ի վեր կը հանին իր կենդանի զանազանութեան մէջ: «Կոկչայի լիճը» մանաւանդ իր ամպոտ երկնքի ու վճիռ ջուրի հակադրութեամբը, եւ «Տարիալի կիրճը» իր սոմանթիկ հրապոյրովը, բնութեան նրբին ըմբռնողութեան մը ապացոյցներ են: Այս նկարներէն երեքը ընդունուած են արգէն Բարիզի տիեզերական Արուեստահանդէսին ուսական բաժնին մէջ ցուցադրուելու:

«Լա Պրոնտ» լրագիրը հետեւեալ տողերը կը նուիրէ Պ. Բաշինջաղեանցի նկարներուն. «Պ. Բաշինջաղեանցի հետ կ'երթանք Կովկաս ճամբորդութիւն մը ընել: Ինքը մեզ կ'անցընէ «Տարիալի կիրճ»էն, Դժոխքի նրբանցք որուն վիթխարի պատերը կարծես սեւ մետաղով մը կերտուած լեռներ են, եւ կը մթագնեն անիծեալ երկինք մը, հազիւ հեռուանց լուսաորուած կանաչորակ գոլորչիով մը, ինչպէս ծծմբուտի մը լուսաւոր շունչովը: Աւելի պայծառ վեհուութիւն մը ունի Արարատին տեսքը. այդ ար-

տասովոր կրճատուած բուրգը, մերկ, բազրջկագոյն արշալոյսով լուսավառ, պսպղուն ձիւնաչեղջով գլխանոցուած: Իր ստորտը՝ դրախտային պարաէզներ, աշխարհիս գեղեցկագոյն դաշտալայրը, թաւշեայ ծառեր որոնք արտակարգ պտուղներու եւ բուրմունքներու զաղափարը կը ներշնչեն... Արարատ լեռը, զոր նախապաշարման մօտեցող պաշտամունքով մը կը պաշտեն Հայերը, իբրեւ իրենց վերջին ու շքեղ ապաստանը, եւ որուն անունը Քամառ-Քաթիպայի գիւցաղնական երգերուն մէջ ազատութեան գեղեցիկ աղաղակներու կը խոնարհի:»

Այս ուսական Յուցանդէսին մէջ տեսանք նաեւ Պ. Արսէն Շապանեանի երկու սիրուն նկարները («Պարթանեի ծովափունք») եւ «Լուսնակ գիշերով ծովանկար» մը:

— ՇԱՊԱՆԵԱՆԻ ՏՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ. — Քանի մը ամիս առաջ, Պ. Շապանեան մասնաւոր ցուցահանդէսով մը (Galerie George Petit) իր ծովանկարներն ի տես դրած էր. բարիզեան մէկ քանի թերթեր համակրական տողերով գնահատած են հայ արուեստագէտին տաղանդը: Le Journal des Arts կը գրէ. «Պ. Շապանեան բնութեան կը հետեւի. կը տեսնուի թէ գեղեցիկ օղով օրերուն երկարօրէն դիտած է իր սիրած տարրը, թէ արշալոյսին, վերջալոյսին, լուսնի լոյսով, ջանացած է անոր բոլոր վեհաշուք շարժումներն ըմբռնել իրենց այլազան երեւոյթներով: Այդ երկայն զննութեանց մէջ, հեղուկ տարրին հոյակապ մեծութեանն զգացմանը ազդեցութիւնը կրած է, եւ ահա ինչու, եթէ վերլուծենք իր նկարներէն իւրաքանչիւրը, միտոլորտին հոսանուտութեան ու լոյսին մեղմութեանը ներքեւ կը գտնենք ծով մը հզօր, ալիք մը ուժեղ, որ պատրաստ կը թուի թաւալել իր անհուն ոլորքները աւազին վրայ զոր կ'ողողէ: Իր ալիքը, այսպէս շարժում մըն է, միջոցին մէջ նկարչին վրձինէն առկախուած: Ո՛րքան հզօր ու փափուկ արուեստով նկարիչը կը ցած է ծովը ներկայացընել իր հանդարտութեան տեսիլներուն մէջ, ո՛րքան տպաւորութեանց զանազանութեամբ եւ ո՛րքան շինուածքի պարզութեամբ:»

— ՄԵԼԻՔ ԿԱՐԱԳԷՕՉԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ. — Բարիզի Հայ Ուսանողաց Միութեան ժողովավայրին մէջ, Պ. Մելիք-Կարագէօզեան արտասանեց յունուար 24ի իրիկունը, մեծապէս շահեկան բանախօսութիւն մը «Գերմանիոյ հայապատ մասնախումբերուն» պործուէութեանը վրայ: Այդ շատ կարեւոր նիւթի մասին պիտի գրենք «Անահիտ»ի մէջ:

— ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԸ ԼՈՆՏՈՆ. — Լոնտոնէն բարեկամ մը մեզի հետեւեալը կը գրէ. «Մնունդի տօնին առթիւ Լոնտոնի Հայ Գործաւորներու եւ Ուսանողներու Միութիւնը, յունուար 20 շաբաթ գիշեր, իր յատուկ սրահներուն մէջ կազմակերպեց գեղեցիկ երեկոյթ

մը որուն ներկայ գտնուեցաւ Լոնտոնի հայ զաղթականութեան մեծագոյն մասը :

«Հանդէսը որուն կը նախագահէր Պ. Լ. Բաշալեան, սկսաւ «Մայր Արաքսի» խմբերգովը : Յետոյ խօսք առաւ ճարտարագէտ Պ. Բարուճեան եւ գեղեցիկ բանախօսութեամբ մը պարգեց Մնունգի տօնին բարձր նշանակութիւնը : Իրեն յաջորդեց Պ. Պետրոսեան, պարսկահայ երիտասարդ մը, որ մանտլինի վրայ նուագեց հայ աշուղներու սրտայոյզ եղանակներ : Յետոյ երիտասարդներու խումբ մը երգեց «Ծիծեռնակ»ը եւ շնորհալի Հայուհի մը, Օր. Առաքելեան, դաշնակի վրայ ընկերացաւ իրենց : Պ. Ե. Օտեան հակիրճ խօսքերով Յիսուսը ներկայացուց իբր մարդկութեան մեծագոյն յեղափոխիչը : Հանդէսին մասնաւոր փայլ մը աւելցուցին Օր. Յակոբեան քոյրերը, որոնց մին խիստ ճարտարօրէն արտասանեց թէննիսընի մէկ զմայլելի քերթուածը, ծնունդի կոչնակներուն ուղղուած, Ring out, wild bells, եւ Լոնկֆելլոյի մէկ քերթուածը, Excelsior, եւ միւսը դաշնակի վրայ ածեց Շորեհէն վալս մը եւ ուրիշ մէկ քանի կտորներ Բրոֆ. Յակոբեան խօսեցաւ Մնունգի կրօնական նշանակութեան մասին եւ խլեց հանդիսականներէն բուն ծափահարութիւններ : Ամենափայլուն յաջողութիւն մը ունեցան նաեւ Քեմպրիճի համալսարանին ուսանող երկու ուսուցիչները, Պ. Պ. Դրախտէնպէրկ, որոնք Zampasyn եւ La Muette de Porticis կտորներ նուագեցին : Չըմոռնանք նաեւ անգլիերէն Մնունգի յուզիչ երգ մը զոր Բրոֆ. Յակոբեան երգեց ընկերակցութեամբ, դաշնակի վրայ, Օր. Յակոբեանի : Հանդէսին ամենէն մեծ հրապոյրը եղաւ անշուշտ այն գերազանցապէս թելադրիչ բանախօսութիւնը զոր արտասանեց նախագահը, Պ. Լ. Բաշալեան, որ յանկարծ մեզ փոխադրեց Լոնտոնի այդ անկիւնէն մեր ցաւատանջ հայրենիքը : Ներկաներու փափաքին համեմատ Օր. Առաքելեան հաճեցաւ նուագել նաեւ Վերտի «L'orange»ը :

«Ներկայից յայտագիրը գործադրուելէ ետքը ներկաները բոլորուեցան թէյի սեղաններու շուրջը : »

— 1899 դեկտեմբեր 10ին, Պոսթնի Հայերը, նախաձեռնութեամբ Պ. Վ. Վարդի, հանդէս մը կազմակերպած են տօնելու համար Մատթէոս Մամուրեանի յոբելեանը : Պ. Խորէն Անդրէասեան Մամուրեանի փաղանգը գրուատող քերթուած մը կարգացած է, եւ ուրիշներ ատենաբանութիւններ արտասանած են :

— Աղեքսանդրիոյ հայ զաղթականութիւնը, առաջարկութեամբ մէկ քանի հայ գրագէտներու, Տիգրան Երկաթի յիշատակին համար հոգեհանգիստ մը կատարել տուած է, յունուար 21ին, քաղաքին կաթողիկ Հայոց եկեղեցւոյն մէջ : Ներկայ գտնուած են, բացի հանգուցեալին ազգականներէն, բազմաթիւ անձեր : Աղեքսանդրիոյ հայ-լուսաւորչական ու հայ-կաթողիկ հասարակութիւններէն :

— Կը թարգմանենք հետեւեալ հատուածը նամակէ մը զոր մեզի զրկած է Սուչաւայէն, Պ. Օկիւսթ Թէոտորովիչ : «Անի» ընկերութիւնը վերականգնելու նպատակով կազմուած մասնախումբը, որու մասին խօսած էիք «Անահիտ»ի վերջին թուոյն մէջ, եւ որ կը բաղկանայ հայրենասէր երիտասարդներէ, եռանդեամբ կ'աշխատի այդ ընկերութեան պահանջներուն արժանապէս պատասխանելու համար : Մեր առաջին արդիւնքը եղաւ կազմակերպել զպրոցական հանգէս մը, որ գերմաներէն կ'ըսուի Christbaum (Քրիստոսի ծառը) : Բայց այս բարեգործական նպատակին հետ մենք ունինք ուրիշ նպատակ մը բոլորովին ազգային, այն է միութիւն յառաջ բերել այստեղի կաթողիկ եւ լուսաւորչական Հայերուն միջեւ, ոչ թէ գաւառներ խնդրներու մէջ, այլ ամէն բանէ առաջ ազգայնական տեսակետով : Ես ասկից առաջ Լեմպերկի մէջ աշխատեցայ այս գաղափարը իրականացնելու համար : յօդուածներ գրեցի, տեսարակներ հրատարակեցի, եւն. իսկ այստեղ յաջողութիւն մը ունեցայ արդէն : այստեղի հայ-կաթողիկ երէցը, Շառլ Պոկտանովիչ արբան, հաւանեցաւ «Անի» ընկերութեան անդամ գրուել : Ընկերութիւնը խնդրեց այստեղի հայ տիկիններէն որ դրամ հաւաքեն մեր այս զարոյցական հանդէսին համար : Լուսաւորչական եւ կաթողիկ հայ տիկինները եւ Պոկտանովիչ արբան բաւականաչափ գումար մը հաւաքեցին, ծառ մը կանգնեցին, զարդարեցին, լուսավառեցին, եւ յունուար 13ի յետմիջօրէին այստեղի թաղային վարժարանին մեծ սրահին մէջ հանդէսը սկսաւ : Տղաքը Քամաու-Քաթիլայոյի բանաստեղծութիւններն արտասանեցին, հայերէն երգեր երգեցին, — Բա՛մ փորորդան, եւն. — ու յետոյ տիկինները նուէրներ բաժնեցին բոլոր երախաներուն : աղքատները զլիարկներ, զգետներ, զրօքեր ընդունեցան : Ի վերջոյ, Արսէն Վեհունի վարդապետը հայերէն լեզուով շատ գեղեցիկ ճառ մը խօսեցաւ, եւ ըսաւ թէ երբ երկու տարի առաջ այստեղ կուգար Հայութիւնը հոս մեռած կը կարծէր : Բայց հիմա կը տեսնէ որ Հայերը կենդանի են հոս եւ պիտի միշտ կենդանի մնան ու պիտի յաջողին իրագործել իրենց բաղձացած նպատակը, այն է բոլոր Հայերը, լուսաւորչական կամ կաթողիկ, «ազգային» զբօսին ներքեւ միացնել : Իր ճառը աւարտեց արեւշատութիւն մաղթելով մեր Ֆրանց-Յօզէֆ կայսեր, հանդիսականները աւտրիական ազգային երգը երգեցին, ու այսպէս վերջացաւ հանդէսը : Ներկայ էին ի միջի այլոց, Պատոն Շըմոնովիչ, Կատարանին նախագահը, իր ազըկանը հետ, Պ. Պոհոսիովիչ, զօրադնդին յանձնակատար, իր ընտանիքին հետ, Պոկտանովիչ արբան, Պ. Սթեֆանովիչ, Պ. Նիկիտովիչ հայ կաթողիկներէն, եւ լուսաւորչականներէն՝ Բըրուզուլ, Կայնայ ընտանիքները, եւն. : »


Պ. Օկրևսթ Թէոտորովիչ, որ այս տողերը մեզի կը գրէ, Լեմպերկցի երիտասարդ բուրնահայ մըն է, որ կոտորածներէն ի վեր ազգային զգացման հզօր զարթում մը զգալով իր մէջ, իր ցեղին հետ եւ իր ցեղին համար ապրելու որոշումը տուած է: Իր նախորդ մէկ քանի նամակներովը մեզի հաղորդած էր իր խանդավառ բաղձանքը հայերէն սորվելու, հայ ազգութեան գիտակից անդամ մը, հայ գործիչ մը դառնալ կարենալու համար: Դիմած է արդէն Մխիթարեան երկու վանքերուն, որպէսզի հայերէն սորվի, եւ կը ցաւինք որ այդ երկու միաբանութիւններէն ոչ մէկը հաւանած է այս սիրուն եւ յուսատու ուժը իւրացնել: Պ. Թեոտորովիչ հրատարակած է արդէն բուրններէն ու գերմաներէն լիզուով բազմաթիւ յօդուածներ ու գրքոյկներ Հայոց պատմութիւնն ու գրականութիւնը ճանչցնելու համար լեհահայ հասարակութեան եւ անոր մէջ ազգային զգացումը վերաբծարծելու համար: Հիմա Սուչավա եկեր եւ սկսեր է հայերէն սորվիլ օգնութեամբ Արախն վեհուանի վարդապետին, որուն կատարած գերը Պուքովինայի հայութեան վերազարթումին մէջ՝ մեծապէս գովելի է: Մենք կը կարծենք թէ Պ. Թէոտորովիչ կոչուած է շատ փայլուն եւ շատ արդիւնաւոր դէմք մը դառնալ մեր ապագայ ազգային կեանքին մէջ:



Զ Ա Ր Պ

— 0 0 —

Տիկին Մարի Սվածեան որոշած է Բարիզի մէջ հրատարակել բարիզեան նորաձեւութեան ամսաթերթ մը, ԶԱՐԴ անունով: Այս ամսաթերթը շքեղօրէն պատկերազարդուած պիտի ըլլայ եւ բարիզեան նորաձեւութեան վրայ մանրամասն տեղեկութիւն պիտի տայ իր ընթերցողներուն: Այս թերթը, որ իրական պակաս մը կը լեցնէ, յուսալի է որ տարածուի Պուլիս ու Թուրքիոյ հայաբնակ գաւառները, ինչպէս եւ Կովկաս: Ամսաթերթը պիտի ունենայ նաեւ վէպ-թերթի մը, եւ առողջապահական ու կենցաղագրական յօդուածներ: Յաջողութիւն կը մաղթենք մեր աշխատակցուհւոյն այս շատ շահեկան ձեռնարկին:



ՍՈՒԼԹԱՆԻՆԴԱՏԸ

— 0 —

Սուլթանը ետ առաւ իր դատի պահանջքը: Եւ Ֆրանսացի հարցաքննիչ դատաւորը, փոխանակ դատին օրը որոշող կոչնագիրը շրկելու, իմացուց Պ. Պ. Կոհիէին, Քիլիսեան եւ Մալաթոյին թէ «այլ եւս տեղի չկայ դատի, քանի որ Սուլթանը կը հրաժարի իր պահանջքէն:»

«Ուրեմն Սուլթանը իր բերնովը կը խոստովանի, կը գրէ Քիլիսեան «Օրոն»ին մէջ հրատարակուած յօդուածի մը մէջ, թէ «Մեծ Մարգասպան», «Մեծ Մորթող», «Կարմիր Գաղան» անուանակոչութիւնները որ տրուեցան իրեն, բացարձակապէս ճիշդ եւ արդար էին:»

Սուլթանը կ'երեւայ որ ըմբռնած է, — կամ իրեն ըմբռնել տուած են — թէ այդ դասը միմիայն Սուլթանին կրնայ վնաս բերել: Այս հրաժարումը խորին ցաւ կը պատճառէ մեզի. այդ դատին վիժումովը, Համիտին զոհերուն ու դատապարտողներուն համար՝ բարոյական վրիժառութեան հոյակապ առիթ մըն է որ կը ջնջուի, պատմութեան ամենագեղեցիկ էջերէն մէկն է որ չծնած կը սպաննուի: Այդ դատը, եթէ տեղի ունենար, Սուլթանին կամքովը կատարուած միակ բարի գործը պիտի մնար, եւ անոր խափանումը երկտեղի Մարգասպանին ամենէն ծանրակշիռ ոճիւրներէն մէկը կրնանք համարել:



Պ. ՔԱԶԱԶԷՆԻՔՈ ԵՒ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ  
ԲԱՐԻԶԻ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՉ

Մէկ քանի ամիս առաջ Կովկասի բոլոր հայ թերթերը ծանուցին թէ Պ. Քազաչէնքօ, Ս. Բեթերսպուրկի կայսերական Օբերային երգախումբերու վարիչը, մատչելի է 1900ի Յուլիանոսի Բարիզ գալ հայ երգիչներու խումբի մը հետ եւ հայկական երաժշտութեան շարք մը նուագահանդէսներ տալ: Պ. Քազաչէնքօ Կովկասի եւ ռուսական Հայաստանի մէջ պոռոյաներ կատարած, հայ ժողովրդական երգերու մոթիֆներ հաւաքած եւ զանոնք եւրոպական երաժշտութեան վերածած է. 1898ին

Բարիդ ուսական նուագահանդէս մը տուաւ, եւ անոր մէջ իր «հայկական եղանակները» շատ սիրուն յաջողութիւն մը գտան: Տարակոյս չկայ թէ 1900ի Յուլյանահանդէսին մէջ Բազաչէնքօի կազմակերպելիք հայկական նուագահանդէսները, օտար երաժշտէ մը սարքուած, ամենամեծ օգտակարութիւն կրնան ունենալ հայ ժողովրդին համար: Պ. Բազաչէնքօ Հայոց նիւթական աջակցութիւնը կը խնդրէր այս ծրագրին իրականացմանը համար. մենք կը կարծէինք թէ Կովկասի Հայերը առանց վարանման պիտի փութային իրենց աջակցութիւնը նուիրել այդ գործին: Կ'երեւայ թէ սխալ ենք ենթադրեր: Պ. Բազաչէնքօ դառնապէս կը գանգատի, ուսական «Սրիմ» լրագրին մէջ երեւցած յօդուածով մը, այն անտարբերութիւնէն զոր ցոյց տուած են մինչեւ հիմա Կովկասի Հայերը այս ծրագրին նկատմամբ: «Շատ համակերանքներ գտայ, կը գրէ Պ. Բազաչէնքօ, այն Հայերուն մէջ որոնց հաղորդեցի իմ գաղափարս, բայց (օ՛հ, այդ «բա՛յց»ը) երբ հարցը եկաւ նիւթական կողմին, այդ ժամանակ ամենքը որոնք վայրկեան մը առաջ իմ «ազնիւ» ձեւնարկութեանս մասին կը խօսէին աննկարագրելի հիացմունքով մը, խոնարհեցուցին իրենց աչքերը...»: Այդ յօդուածէն մէկ քանի հատուածներ արտատպելով, «Մշակ»ը եւ «Նոր-Դար»ը կծու տողերով կը ձաղկեն Կովկասի Հայութեան այս աններելի եւ անհասկանալի ընթացքը: Մենք կը ձայնակցինք մեր պաշտօնակիցներուն այդ գաղափարին, եւ կը յուսանք որ Ռուսիոյ Հայերը — ինչպէս եւ Թրքահայերէն ամէն անոնք որ կրնան գնահատել այսպիսի գաղափար մը, — պիտի վերջապէս ըմբռնեն այդ ծրագրին անհուն կարեւորութիւնը մեր ազգային բարոյական շահերուն համար, եւ պիտի թոյլ չտան որ օտարի մը կողմէ յղացուած հայասիրական այդքան զեղեցիկ ծրագիր մը միայն Հայոց անտարբերութեանը եւ կծծիութեանը պատճառով վիժի:

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն  
Ի ՆՊՍՍՏ ՀԱՅ ԲՍԱՆՏԱՐԿԵՍԱԼՆԵՐՈՒՆ

Զարմացումով նկատեցինք թէ «Անահիտ»ը միակ թերթը եղաւ որ «Հայկական Միութեան» սրտաշարժ հրաւերին պատասխանեց եւ Պոլսոյ ու գաւառներու բանտերուն մէջ հեծող Հայերուն ի նպաստ հանդանակութիւն մը բացաւ: Մենք կը կարծէինք թէ հայ բանտարկեալները ո եւ է կուսակցութեան չեն վերաբերիր, եւ բովանդակ Հայութեան համակրանքին արժանի են իրրեւ ամենէն զժբազդ զաւակները հայ ժողովրդին: մենք փութացինք հանդանակութիւն բանալ, առանց ուշ գնելու մեզի դիմող մարմնոյն անունին կամ գոյնին, միմիայն ինկատի ունենալով առաջարկուած նպատակը որ ո եւ է Հայու համար յուշ զիչ եւ պարտաւորեցուցիչ է, եւ վստահութիւն ունենալով գործին լրջութեանը վրայ քանի որ Պ. Իսքէնտէր բարեհաճած էր զանձապահի պաշտօնն ընդունել: Կ'իմանանք որ Հայկական Միութիւնը դիմում ըրած է Ligue des droits de l'hommeին, որպէսզի ան իր միջոցներովը այդ նպատը հասցնէ անոնց որոնց սահմանուած է:

Աւելորդ է ըսել որ այս հանդանակութիւնը քաղաքական գոյն չունի, մարդասիրական գործ մըն է լոկ, եւ բոլոր այն Հայերը որ մեր բանտարկեալ եղբայրներուն տխուր կացութեանը վրայ կը ցաւին, կրնան անոր մասնակցել: Այս հանդանակութեան արդիւնքը քիչ շատ ներկայանալի գումարի մը հասցնելով, ազգային համերաշխութեան ապացոյց մը տուած պիտի ըլլանք մեր հայասէր եւրոպացի բարեկամներուն:

Պ. Պենլեան ստիպուած ըլլալով չուտով մեկնել քաղաքէս, Արշակ Բ. ի երկրորդ ներկայացման մը գաղափարը զոր առաջարկած էինք, անկարելի պիտի ըլլայ իրականացնել: Բայց մեզի կը հաղորդեն թէ խումբ մը բարեզգի Հայեր մտադիր են այս նպատակով երաժշտական ու գրական երեկոյթ մը կազմակերպել Բարիդի հայ հասարակութեան մէջ, նման այն երեկոյթին զոր Բարիդի հայ ուսանողները տարի մը առաջ կազմակերպեցին Արովեանի յիշատակը սօսելու համար եւ որ մեծ յաջողութիւն ունեցաւ:

«Անահիտ»ը ընդունած է մինչեւ հիմա հետեւեալ նուիրատուութիւնները:

- «Անահիտ», 10 ֆր., Պ. Վահան Մոզեան (Բարիդ), 20 ֆր., Արմէն Արտոնց (Մէյրաթն), 10 ֆր., Ծաւու (Իտալիա) 5 ֆր., Ն. (Իտալիա) 2 ֆր., Ազգային մը (Բարիդ) 1 ֆր., Պ. Յ. Կոմիկեան, 5 ֆր., Յարութիւն Ս. Փափագեան (Վառնա), 10 ֆր.: Գումար, 63 ֆր.: որ յանձնուեցաւ Պ. Յ. Իսքէնտերի (36, Rue de la Tour d'Auvergne.):

Հանդանակութիւնը կը շարունակուի:



(մօտ 2000 մեթր) լեռնային գիւղում ծնւած , նա իրան դարձրել էր մի տեսակ իտէալիստական մոլեռանդ , որը իսկապէս հաւատում է եւ համոզուած է իր յեղափոխական գործովը հայ ժողովրդին օգնել կարողանալուն , նորան տաճկական կամ մանաւանդ քրդական բռնակալութիւնից ազատելուն , իսկ բոլոր ազգասէր Հայերի երազին իրականացմանը , — կազմել մի ազատ հայկական թագաւորութիւն — գործով մասնակցելուն :

Բնական է , որ նա եռանդուն կերպով պիտի պաշտպանուէր Լոնտոնի կոմիտէի կողմից , որը ձգտել է ամէն կերպ հայկական գաւառները հանդիսատ չլթողնել , եւ մերթ այստեղ , մերթ այնտեղ երեւան հանած ապստամբների խումբերով փորձել է ապացուցանել Եւրոպային թէ Հայերը հակառակ այն մեծագանգուած ջարդերին՝ յուսահատութեան կռիւը դեռ չեն դադարեցրել :

Ես չեմ ուզում այստեղ նախկին ջարդերին ու նոցա պատճառներին անցնիլ . այլ միայն շեշտել եմ ուզում որ , եթէ ներկայումս այստեղ կամ այնտեղ փոքրիկ ջարդեր են առաջ գալիս , չի կարելի տաճկական կռուածութիւնը դոցանում յանցաւոր համարել , գոնէ ո՛չ մի կերպ ուղղակի յանցաւոր . աւելի շատ միմիայն Հայերն իրենք անձամբ պատասխանատու են , մանաւանդ Լոնտոնի կոմիտէն եւ նորա կողմից Տաճկաստան ուղարկուած ապստամբները , բայց յետոյ նաեւ Տաճկաստանի գիւղացիները , իրենց դէպ ի ապստամբները ցոյց տուած գաղտնի պաշտպանութեամբ ու նպատով :

Չնայած այս բոլոր դառն փորձութիւններին , մոլորուած ժողովուրդը դեռ շարունակ չէ կարողանում ըմբռնել , որ ապստամբութիւններսարքել շարունակելով միմիայն Քրդերի գործերն են տեսնում , որոնք Լոնտոնի կոմիտէին իր փչացնող գործունէութեան համար երախտապարտ լինելու ամէն պատճառ ունին : Վան , Բիթլիզ եւ Էրզրում վիլայեթների լեռնոտ ընտրութիւնը բաւականին պարզաբանում է , թէ ինչո՞ւ տաճիկ կռուածութիւնը հակառակ իր անցեալ ճիգերին ապստամբական խմբերը դեռ չի կարողանում հպատակեցնել : Այնպիսի պայմաններում տաճիկ կռուածութեան համար շատ դուրեկան եւ ձեռնտու է , որ բարեկամ քուրդ ցեղերը իրենց աջակցութիւնը առաջարկեն կանոնաւոր դորքին եւ ժանդարմներին՝ փնտռել , հալածել եւ ջնջել ֆեղայիներին (ֆեղայի արաբական մի բառ է , եւ ցոյց է տալիս մէկը որ իր կեանքը վտանգի է մատնում) ինչպէս անուանուում են հայ ապստամբները Թրքերի կողմից :

Եւ ահա այս պատրուակով քրդական մեծ ու փոքր խմբեր , — բնական է բացառաբար լոկ Համիտիէ , քրդական անկանոն զօրագընդին պատկանողները , — անցնում են հայկական գիւղերով , ուր թալանուած լինեցած գիւղացիների հաշուին զուարճանալով՝ միեւնոյն

ժամանակ գործում են ամենամեծ ոճիրները :

Թէ գիւղացւոց ամբողջ ստացուածքը , արջառ , ոչխար , եւն . այդպիսի այցիլութիւններին՝ ժամանակ «սխարմաք» համազգեստուած աւազակներից քչուում տարուում են , թէ կանայք եւ ազջիկերք բռնաբարուում , եւ թէ մէկ կամ մի քանի գիւղացիներ լոկ զուարճութեան համար խմբերով դնդակահար են լինում . . . սոքա բոլորովին առօրեայ գործեր են , որոնցում այլ եւս ոչ ոք , մինչեւ անգամ Եւրոպացիին , մի եզակի բան չէ տեսնում :

Հէնց այս պատճառով մարդ ընտելանում է կամաց կամաց ամենաստուկալիին , եւ երբ մարդ քրեթէ ամէն օր , մերթ այս , մերթ այն շըբ ջանից ամենազարհուրելի ոճրագործութիւններն է լսում , սարսափը այլեւս բխանում է մարդուս մէջ , մանաւանդ բացարձակ անզօրութեան մէջ , եւ որ եւ է փոփոխութիւն առաջ չի կարող գալ :

Տաճիկ կռուածութեան մտքովն անգամ չի անցնում այսպիսի «չնչին» բաների համար իր դաշնակիցները , Քրդերը պատժելով՝ նոցա առաջն առնել , որոնք ուրիշ ոչինչ չեն անում եթէ ոչ «անհանգստացնում են» առւած ֆեղայիների թաքուն բարեկամներին , հայ գիւղացիներին : Ընդհակառակն , վերոյիշեալ փոքրիկ «անկանոնութիւնները» կռուածութեան աչքում ներուում են բոլորովին . չէ՞ որ դոքա իրօք գոյութիւն ունեցող , կամ ինչ աւելի շատ յաճախ պատահում է՝ Քրդերի կողմից երեւակայուած ֆեղայիների պատճառով են . եւ ահա , փոխանակ «պատժի» , քուրդ պէյերը իրենց արածների իբրեւ վարձատրութիւն շքանշաններ են ստանում եւ ուրիշ տեսակ սիրոյ հաւատարմութիւն վայելում :

Ահա՛ օրինակի համար՝ Ձեֆֆէր բէգը , Վան գաւառի ամենամեծ զօրքաւորչ ու վատանուն արազակներից մէկը , որի առաջ քաղաքական պաշտօնեաները պարզապէս անզօր էին , որովհետեւ նորա դիրքը , ինչպէս Համիտիէի կայմակամ , նրան բանտարկութիւնից ու հալածանքից ազահովում էր : Բայց վերջապէս նորա ոճրագործութիւնների շափը այնպէս էր լրացել , որ 1897ի ամբան , վալիին յաջողուեց կայսերական մի հրամանագիր ձեռք բերել , որով Ձեֆֆէր բէգի ձեռքազաւումն էր հրամայուում : Սակայն պատահաբար հէնց այդ միջոցին Ձեֆֆէր բէգը իր Քրդերով պարսկական սահմանապահի մօտերում ապստամբների մի բաւականին ուժեղ խմբի կողմից յարձակման է ենթարկուում . նոքա եկեր էին Ձեֆֆէրի միջոցաւ հազարից աւելի մորթուած Հայերի մահուան վրէժը լուծելու : Եւ այս ժամանակ շատ մեծ դժուարութեամբ մահից ազատուեց . եւ յետոյ իրան հայրենիքի նահատակի ու փրկչի տեղ դնելով , փոխանակ կարգադրուած ձեռքակալման ու պատժին՝ նուիրուում է մի բարձր շքանշան այս աւազակ-մարդասպանին : Բնական է որ նա այժմ սկսեց իր էին արուեստը աւելի մեծ եռանդով ու յաջողութիւններով շարունակել :

Վանում ամեն մի Թուրք, երբ խօսակցու թիւնը Ձէֆֆէր բէգի արարքին էր գալիս, ամաչում էր խոստովանելու որ տաճկական կառավարութիւնը, այսինքն քաղաքական պաշտօնեաները անկարող էին զինուորական համազգեստով պաշտպանուած յերուզակին պատասխանատու թեան ենթարկելու: Վերջապէս այս տարուայ ամբարն վալիին յաջողուեց երկրորդ անգամ լինելով մի կայսերական իւրատէ ստանալ, որով կրկին հրամայուեալ էր Ձէֆֆէր բէգի ձերբակալումն եւ դատի ենթարկումը: Ամբողջ Վանը պատ շունչ քաշեց. բայց դժբաղդարար հաշիւը առանց Ձէֆֆէր բէգին էր արուած, որը այժմ շատ լաւ էր իմանում, թէ ի՛նչ պիտի անէր ձերբակալութիւնից ազատելու համար: Որովհետեւ վերջին յիշեալ իրատէին Վան համակուց մի քանի օր յետոյ, Բազալայից մի հեռագրական լուր հասաւ, թէ տասերկու Փեղայիներ փորձել էին իր գիւղում Ձէֆֆէր բէգին վրայ յարձակուիլ(!), — մտածեցէք, տասերկու ֆէղայիներ պատրաստուեալ են յարձակուիլ մի գիւղի վերայ, որը հանդարտ կերպով հարիւր կամ էլ աւելի ոտքից մինչեւ գլուխ սպառազինուած Բրդեր ունի:

Այս բոլորը Ձէֆֆէր բէգի կողմից սարքուած մի խաղ էր, որ եւ բոլորովին մտադրուած արդիւնքն ունեցաւ. արդէն երկրորդ անգամ ծանր փորձութեան ենթարկուած հայրենիքի պաշտպան նահապետիկն ձերբակալելու մտքից կրկին անգամ հրաժարեցան: Եւ Ձէֆֆէր բէգը ուրախ զուարթ թալանում է ու մորթում շարունակ:

Այս դէպքը առաջ եւմ բերում, ցոյց տալու համար, որ շատ յաճախ Փէղայիներ «երեւաւ կայրում են»:

Եւ քանի որ դեռ Լոնտոնի եւ ուրիշ տեղերի յեղափոխական կոմիտէները նորանոր ապստամբական խմբեր ուղարկելով՝ երկրի խաղաղութիւնը վտանգում են, եւ քանի դեռ տեղական հայ ժողովուրդը, մասնաւորապէս գիւղացիները, անհասկանալի կարճատեսութեամբ այդ ապստամբները պահպանելով՝ նոցա տեղեկութիւն եւ սնունդ են տալիս, այդքան ժամանակ էլ Փէղայիներին հետամուտ եղող Բրդերի բռնաբարումներն ու ոճիրները պիտի չզգարին: Երբ Հայերը Համիտիէներին այս հաճելի պատրուակը ջնջեն, ու թուրք կառավարութեան էլ ցոյց տան, թէ իրօք այլեւս դաւադրութիւնների ու Փէղայիների հետ ոչ մի գործ չպիտի ունենան, թէ նոցա ոչ մի կերպ չպիտի պաշտպանեն, այն ժամանակ, բայց միայն այն ժամանակ կառավարութիւնը լրջօրէն պիտի փորձէ Համիտիէների ընթացքի դէմ մի ճար անել — որոնց շնորհիւ այժմ ամբողջ գաւառի բարեկեցութիւնը ամենաձանր կերպով վնասուեալ է, որը եւ կառավարութիւնն է պզուտ սարսափով, որովհետեւ հարկերի գանձումը անհղապէս քշանում է:

Դառնալով Սերոբին, նորա խումբը մերթ

շատ եւ մերթ քիչ հոգուց էր բաղկացած: Խմբի «գլուխը» կազմում էր ինքը Սերոբը, իր կնոջ եւ որդու հետ, եղբայրը եւ նորա կինը, որոնց դեռ նորերս երեք համադիւղացիներ միացել էին, որոնցից մէկը նոյնպէս իր կնոջով միասին էր: Բոլոր կանայք գնում էին տղամարդու շորերով եւ նմանապէս ոտքից մինչեւ գլուխ սպառազինուած: Ժամանակ առ ժամանակ ուռեղանում էր այս «Գլուխը» ապստամբների խմբերով, որոնք կա՛մ Կովկասի սահմաններից էին ներս մտնուո՞ւ, եւ այն էլ շատ անգամ կարսի ու Կաղզւանի, կա՛մ պարսկական Սալըրբէյջան սահմանազաւատից, ուր մասնաւորապէս Սալմաստի հարթավայրը իր բազմաթիւ հայկական մեծ գիւղերով՝ ապստամբների կեդրոնն ու գործունէութեան պաշտպանութեան կէտն է կազմում:

Փէֆէղայիները Պարսկաստանից Տաճկաստան կարող են անցնիլ, զա այնտեղի պայմաններին ծանօթ մէկի համար ուշադրաւ մի բան չէ, որովհետեւ Պարսկաստանը իր սահմանները բացարձակապէս ինքը չի պաշտպանում, այլ թողնում է իր զրացիներին՝ այդ քիչ հաճոյք եւ շատ ծախք պատճառող ծառայութիւնն անել: Եւ որովհետեւ Տաճկաստանի այս սահմանազրուխներումն էլ ըստ երեւոյթին միեւնոյն սկզբունքն է պաշտպանում, դորա համար էլ ապստամբներին գործնականապէս սահմաններն ազատ են ձգւած, կարող են անցնիլ ուր որ ուզենան: Տաճկական սահմանի պահպանութիւն, այս բառը եւրոպական մշտքով բոլորովին գոյութիւն չունի:

Այս սահմանների վերայով ապստամբները անցնել կարող են, ինչպէս եւ յաճախ արդէն անցել են, սա դժուար չէ հասկանալ. բայց թէ ինչպէս է պատահում, որ այդպիսի խմբեր այնքան խիստ պահպանուած ուռւ-տաճկական սահմանը կարողանում են անցնիլ, զա հասարակ մարդու հասկացողութիւնից վեր է: Ես մի քիչ ծանօթ եմ այնտեղի պայմաններին, որովհետեւ այդ սահմաններով արդէն վեց անգամ անցեր եմ, եւ այն էլ հետեւեալ գրեցերով՝

- 1. — Երեւան - Իգտիբ — Բայազիտ.
- 2. — Կաղզվան — Ալաշկերտ.
- 3. — Կարս — Սարիղամուշ — Էրզրում:

Ռուսական մասում, չհաշուած սահմանին անմիջական հաստատուած զինուորական կայարանները, մօտաւորապէս ամէն մի քիլոմետր հեռաւորութեան վրայ պահականոցներ կան հաստատուած, որոնք այս տեղերում, ուր գեւտինը կիրճերով կտրուած է, իրենց գործունէութեան մէջ պաշտպանում են դադտնի պահականոցներով, ինչպէս որ մասնաւորապէս ուսից զարգացած է Իգտիբի շրջանում: Բաց ի սորանից դեռ շրջիկ հեծելազօրքեր են ուղարկուում, մասնաւորապէս գիշերները, մաքսանենդներին հետամուտելու եւ բռնելու նպատակով: Այսպիսի պայմաններում ապստամբները ի՞նչպէս կարողանում են յիսուական կամ մինչեւ

հարիւրական ու աւելի մարդիկ՝ ուսական զօրքերով վխտացող սահմանի մօտիկ գիւղերում հաւաքուելու եւ մեծ խմբերով Տաճկաստան անցնելու։ Ինձ թւում է թէ սա կարելի է բաւարարել այն ենթադրութեամբ, թէ ուսական պաշտօնեաները այս ընթացքը լռելեայն թողնեն տալիս, թերեւս մինչեւ անդամ ո՛ր եւ է պատճառով խրախուսում են ու պաշտպանում։ Սորա մօտ նկատողութեան արժանի է մի երկրորդ ծանրակշիռ պարտոյ, որը երբեք սահմանուած չէ այս կասկածը տկարացնելու։ այդ այս է, որ բոլոր այս ապստամբները — թող շատերը եկած լինին Ռուսաստանից կամ Պարսկաստանից — ուսական ամենամեծ ձեւի հրացաններով էին զինուած, մեր 88 մտակերպ վերցուած ու բարեփոխուած հրացաններով, որոնք «ուսական Մաուսեան հրացան» են անուանուած ժողովրդից։

Ապստամբներից իւրաքանչիւրը իբր անձնական սպառազինում կրում էր չորս փամփշտագօտի 200 փամփուշտներով եւ առհասարակ մի երկրորդ հրացան կրկին 200 փամփուշտներով՝ Տաճկաստանում գտնուած գաղափարակիցները զինելու համար։

Այն հարցին, թէ այս հրացաններն ու փամփուշտները ինչպէ՞ս են անցնում ապրատամբների ձեռքը, ուսական կառավարութիւնը շտապում է պատասխանել հետեւեալ ոչ բոլորովին գոհացուցիչ բացատրութեամբ — թէ դոքա մեծ քանակութեամբ զինորական մթերանոցներից գողացուած են — խօսքը հազարաւոր հրացանների եւ հարիւր հազարներիով փամփուշտների մասին է։ Իսկ միւս հարցին, թէ ինչպէ՞ս նորա այդպէս զինորական սպառազինումով ոտքերից մինչեւ գլուխ զինուած մեծ խմբերով այնքան հրաշալի կերպով կազմակերպուած ուսական սահմաններից անհետ անցնում են սահմանը, սրան նա ոչինչ չի կարող պատասխանել։ Ես առիթ ունեցայ կուռում ինկած եւ ձերբակալուած ֆէզայիների հրացանների թուահամարները վերցնելու եւ ուղարկել մի ուսական պատասխանատու հիմնարկութեան՝ կամենալով գորանով միջոց տալ այս գողերին ձերբակալելու։ սակայն նա ինձ սիրալիր փայտելով մերժեց զիմումս — հետաքրքիր մի բան չըլլալուն համար (!)։ Որ եւ է լուսաբանութիւն այստեղ այլ եւս հարկաւոր չէ։ Տաճկական սահմանապահութիւնը ուսականի կէսին չափ ոչ խիստ է եւ ոչ հետամուտ, այնպէս որ ապստամբները ուսական գծերը անցնելուց յետոյ շատ հեշտութեամբ մտնում են Տաճկաստան։ Նորա որտեղերից էլ որ գան, Պարսկաստանից թէ Ռուսաստանից, այդ խումբերի մշտական նպատակակէտը Մուշի գաւառն է ուր եւ միանում են Սերոբի գնդին։ Ի հարկէ 225—250 քիլոմէթր երկայնութեամբ տարածութեանը մէջ, որով նորա անցնելու ստիպուած են, նոցանից 70-80ը սպանուած է, գրեթէ ամէն օր Համիտիների, ժանդարմների եւ կանոնա-

ւոր զօրքերի հետ անխուսափելի ընդհարումներով, որոնք ամէն կողմերից նորեկ ֆէզայիների վրայ որսի են դուրս գալիս։ Բայց եւ այնպէս գրեթէ մի շտամբ քանի ապստամբների յաջողուած է մինչեւ Սերոբ փաշային հասնել, — փաշա տիտղոսն է կրում այդ խմբապետը ժողովրդի բերանում։ նաեւ պէտք է ասած որ իր անհաշտ հակառակորդներն անգամ սքանչալուում են նորա ո՛չ մի դժբաղդութեամբ ու կորուստով չանհետացող ոգեւորութեանը, նորա մի անհաւանական գործի նուիրուած քաջութեանը, դիմացկուութեանն ու ճարտարութեանը վրայ։

Այդպիսով նորեկները բռնում են խմբի այն անդամներին տեղը որոնք կռիւներում ընկած են զինուորուած ուժի հետ ընդհարումներ անելով։ Մի անգամ այնտեղ համեմտով նոքա համեմատաբար ապահով են, որովհետեւ երկրի պայմաններին քաջածանօթ Սերոբը զարգացնում է մի ճշմարիտ ռազմագէտի տաղանդ ու ճարպիկութիւն։ Իր փոքրիկ մերթ 50 եւ մերթ միայն 10-12 հոգուց բաղկացած խմբին հետամուտ եղող զօրքերին բաժնեկով, սխալ ճանապարհներով վայրենի լեռներում մոլորցնելով՝ այնքան յետեւից քարչ է տալիս, մինչեւ որ թուլացած ու յոգնած զօրքերը կրկին իրենց զինուորանոցները վերադառնալով վերջ տան անպտուղ որսին։ Իսկ Սերոբը, այդ Անխոնջը, նոցա յետեւից ընկնելով՝ իջնում է կրկին ցած արգասաւոր հարթավայրերը եւ իր խաղը նորից սկսում, որովհետեւ նա սքանչելի կերպով եւ զարմանալի արագութեամբ տեղեկանում է լրսեսներից իրան սպառնացող վտանգի մասին։ Այս ամբողջ խաղը կառավարութեան եւ ապստամբների մէջ, այս անխոնջ որսորդութիւնը անձեռնմխելի խմբապետի վրայ, մի անմասն դիտողի համար շատ հաճելի կը լինէր, եթէ նորա հետեւանքը բովանդակ Քիթլիկ վիլայեթի քրիստոնեաների համար չափազանց տխուր չլինէր։

Հանգիստ կերպով կարելի է ընդունել, որ իւրաքանչիւր թրքի կամ Գրդի համար, որ սպանուած է Սերոբի խմբի կողմից, քսանից մինչեւ երեսուն Հայեր, եւ այն էլ առհասարակ այնպիսիներ որոնք յիշակոխականների ընթացքից բոլորովին հեռու են մնում, ստիպուած են վրիժառու Քրդերին իրենց կեանքով տուժել։ չմտածելով նիւթական այն ահպին վնասն էլ, որ այդպիսի ղէպքերից ամբողջ գիւղեր իրենց սեփականութիւնը կազմող անասուններից, հւն, զրկուում են։

Իսկապէս հազիւ թէ լինի ուրիշ մի լաւ եւ ապահով միջոց հայ ազգը մինչեւ մուրացկանութիւնը հասցնելու եւ նորան կամաց բայց հաստատ կերպով այն անքաղաքակիրթ կողմերում բնաջինջ անել տալու, քան յիշակոխականների ապստամբների տեղափոխումը շարունակելը։

Բ .

Սերոբի խմբին պատճառով ամբողջ վերլայեթին մէջ պատահած անհանգստութիւնները անտարակոյս պիտի գրգռէին մահմետականներին, որոնց մոլեռանդութիւնը միշտ հետաժուտ է կոտորածներ անել : Մի կոտորած սարքելու համար այդպիսի մի վերջին փորձ կազմուեալ էր Բիթլիզում նախորդ տարին . այդ ժամանակ էլ անմիջական պատճառը կրկին Սերոբն էր . յանդուգն խմբապետը Բիթլիզ քաղաքի ամենամօտ հայկական գիւղ Փափշնում էր իջած . քաղաքի ամբողջ պահակազօրքը խակոյն իրանց զաշտային թնդանութիւնով պաշարեցին Փափշինը, խումբը կամ ձերբակալելու եւ կամ անվնաս դարձրնելու համար : Այդ օրերը Բիթլիզը գրեթէ զինուորներով էր ողողուած : Տաճկական ժողովրդի աւագակարարոյ կրօնապետը ի հարկէ չթողնեց որ այս յարմար առիթն անհետեւանք անցնի . նա՛ առանց այն էլ սաստիկ գրգռուած Տաճիկներին մոլեռանդութիւնը վերջին աստիճան գրգռեց, եւ ահա ոռնացող մի բազմութիւն յանկարծ յարձակուեցաւ հայ վաճառականներ խանութները վերայ, որոնց թալանելու ժամանակ մի տասնեակ Հայ մորթուեցան կամ ծանր վերաւորուեցան : Հայերի բաղդից քաղաքի հրամանատարը մի կորովի եւ ուղղամիտ մարդ էր, զօրապետ Ալի փաշա, ծոգմամբ Չէրքէզ . չնայած իր հաւի տեսքին, լուրը լսելուն պէս՝ գրեթէ առանձին, միայն մի մեծ խարազանով զինուած, հասաւ շուկան, ուր իրար անցած ժողովրդի գլխին սկսեց խփել, այնպէս որ մի քանի բոպէից խաղաղութիւնը վերահաստատեց . առանց այս անվախ մարդու ընթացքին, հաւանականաբար մի մեծ կոտորած պէտք է տեղի ունենար : Ի միջի այլոց Սերոբին յաջողուեալ իր խմբի հետ միասին դիշերուայ մէջ իրանց շրջապատող զօրքերի շղթան կտրելու անցնիլ :

Հարկաւոր է նաեւ յիշել թէ կողոպտուած խանութները ամենամեծ մասը արծաթագործներին էին, որը պարզ ցոյց է տալիս թէ ինչ զիտուարութիւններով այդ կրօնապետը ողբուորուած էր : Տաճիկ կառավարութեան պէտք է գովել որ հզօր ձեռքով անկարգութիւնները իրանց ստիճում ճնշելով կարգը վերականգնելու հարկաւոր միջոցներին դիմեց : Ի հարկէ աւելորդ է ասել թէ կարգը խանգարողները կամ գոնէ մարդասպանները ոչ պատժուեցան ոչ էլ հալածուեցան : Ընդհակառակն, այդ կոտորածներին մասնակցող մահմետականները կողմից ցոյց տրուեցան մի տասնեակ անմեղ Հայեր իբրեւ յեղափոխականներ կամ Սերոբի հետ յարաբերութեան մէջ եղողներ . եւ որովհետեւ նրանց մասին ոչինչ չկարողացան հաստատել, մէկը միւսի ետեւից մի քանի ամսէն արձակեցին, եւ վերջինք՝ մեր այնտեղ հասած օրը, այսինքն այս տարուայ փետրվարի վերջին :

Դրանցից յետոյ, բաւական ժամանակ ոչ մի լուր չկար Սերոբի մասին, որի խումբը անցեալ տարուայ հոկտեմբերի սկզբներու Պարսկաստանից եկած քսան ապստամբներով զգալի կերպով ուժեղացել էր :

Վերջին խմբի անցնիլը կապուած է մի քանի յատկանշական պարագաների հետ, որոնք լուսաւորում են այս ապստամբներից ոմանց նկարագիրը . արժէ այդ խնդիրը կարճ պատմել, աւելացնելով որ այդ բոլորը գրեթէ իմ աչքի առաջ տեղի ունեցել է : Այդ քսանուհինգ հոգուց բաղկացած խումբը Մակուից էր եկել, եւ պաշտօնեաներին բոլորովին անտես մնալով հարիւր քիլոմետր տեղ դէպ ի հարաւ մինչեւ Վանայլճի հիւսիս-արեւելեան անկիւնը Բերդբի հարթավայրերը հասել էր, — եւ ահա՛ մի ջախջախիչ ապստամբութեան կողմից սահմանազլիի որ եւ է քննութեան բացակայելուն : Հաւանականաբար այդ տեղերին լաւ ծանօթ եղող ուղեցոյցը՝ յաջողութեամբ Բերդբի գիւղաքաղաքի առջեւից անցկացնելով՝ ուր երկու հարիւր հեաւեակ զինուորների մի ջոկատ կայ, հասցնում է կործան հայկական մեծ զիւղը (քսանուհինգ քիլոմետր հարաւ Բերդբիից), ուր ինձ անձնապէս շատ լաւ ծանօթ մի գիւղացու տանը դիշերում են : Բայց որովհետեւ այնտեղի գիւղացիների կողմից «Հայաստանի ազատութեան եւ անկախութեան կռուին» մասնակցելու փափաքը չէր արտայայտուում, ապստամբները որոշեցին մի առ ժամանակ իրենց մօտից հեռացնել հետները բերած աւելորդ հրացաններն ու փամփուշտները, որի համեմատ քսան հրացան եւ չորս հազար փամփուշտ այդ Հայի տանը թողնում են : Եւ յաջորդ առաւօտեան կանուխ երբ խումբը ճանապարհը շարունակելու էր, ուղեցոյցը յայտնում է թէ նա զբացի գիւղում մի փոքրիկ գործ ունի կարգադրելու, թող ընկերները կամաց մօտակայ գիւղը գնան, եւ թէ ինքն էլ քիչ ժամանակէն այնտեղ կը գայ . թիկապէս էլ ուղեցոյցը մօտ երեսունուհինգ քիլոմետր հեռուն գտնուած ճանիկ գիւղը գնում է, ուր կեցող ժանդարմների լիէօդնանդին պատմում է թէ ինքը գիտէ մի սեղ ուր ֆէզայիները հրացաններ ու փամփուշտներ թաղել են, եւ եթէ պաշտպանութեան համար նա իրան քսան ժանդարմ տայ, պատրաստ է տեղը ցոյց տալու . սպան այս տեղեկութիւնը անհաւատալի գտնելով, լուրը հաղորդողին ձերբակալում է եւ ուղարկում է Վան, ուր մատնիչը միեւնոյն պատմութիւնը կտա վարչին երկրորդում է : Դորա վերայ, նա մի սպայի եւ քսան հեծեալազօրքի հետ ետէ ուղարկուում, եւ նրանց ուղիղ առաջնորդում է Կործան գիւղը իրան հիւրասիրողի տունը, ուր ճիշդ էլ քսան հրացանները եւ չորս հազար փամփուշտները գտնուեցան (սա պատահեցաւ իմ այդ պիւղը հասնելու նախորդ օրը) : Այս բանի մէջ դաւաճանը սխալ հաշիւ էր արել, որովհետեւ փոխանակ իր յուսացած մեծ վարձատրութիւնը

ստ սնալու՝ բանտ նետուեցաւ , այնպատճառով որ ապստամբներին ներս էր մտցրել եւ այժմ իրանից պահանջուում էր նրանց յանձնել կառավարութեան : Վերջնական վճիռ ստանալու համար , նա ուղարկուեցաւ Պոլիս : Եւ այդ տեսակի մարդիկ շատ կան յեղափոխականների մէջ : Հետաքրքրութեան համար զեռ ասեմ որ թուրք զօրքերը չորս հատ հրացան երկու հազար փամփուշտով դէպ ի վան փոխադրելիս ճանապարհին առանց հեաք թողնելու անյայտացուցեր են :

Այս քսան հոգուց բաղկացած խումբը վերջապէս յաջողութեամբ մինչեւ Սերոբին հասել էր , որը այս տարուայ մայիս ամսին իր շարժումով յիշեցնել տուեց թուրք կառավարութեան եւ բովանդակ աշխարհին թէ ինքը զեռ ապրում է եւ թէ Հայերը իրանց վիճակով զեռ եւս գոհ չեն : Այդ ժամանակ նա իր խմբով Մուշի հարթավայրում քաղաքից հեռու դէպ ի հիւսիս գտնուող Յրօնք հայկական մեծ գիւղումն էր եւ զուարճանալու համար ընդհանուրի կողմից յարգուած Մշեցի թալիպ աղային՝ որ այդ ժամանակ բազմաթիւ ժանդարմներով ընկերացած դէպ ի Յրօնք էր գնացել՝ խիստ ցած էր գցել ձիուց : Գաջ զապթիէները իսկոյն , ըստ իրանց սովորութեան , փախուստի ճամբան բռնեցին եւ դէպքը հաղորդեցին Մուշի նահանգապետին , որը քաղաքավարի մերժելով Համիտիէ Գրդերի կողմից եղած օգնութեան առաջարկութիւնը , իսկոյն մի զօրագունդ ուղարկեց Յրօնք : Այդ ժամանակ Սերոբը իր խմբի մեծ մասը հետացրել էր եւ միայն ութը ապստամբներ բաւական էին Յրօնքի համար . ապստամբների եւ զօրքերի մէջ սկսեց կանոնաւոր հրացանաձուլութիւն . մի տան մէջ փակուած , ապստամբները անտարակոյս աւելի քաջութեամբ կուռում էին եւ սպանեցին տասնի չափ զօրքեր ու ժանդարմներ . եւ որովհետեւ անկարելի էր նրանց վրայ գնալ , զօրքերը որոշեցին առնը կրակի տալ , որը եւ նրանց յաջողուեց . ապստամբները կրակին մէջ այրուեցան : Առիթից օգտուելով , Համիտիէ քրդերը հայ գիւղացիների դաւարը քչեցին տարան . բայց զիմադրող զօրքերին յաջողուեց գողերի ձեռքերից խլել գոնէ մեծ մասը եւ վերադարձնել տէրերին : Ի միջի այլոց , շտրկիւ կառավարութեան կորովի միջոցներին , ուրիշ ոչ մի սեղ կարգը չխանգարեց , հակառակ մահմետական բնակիչներին մեծ յուզումին . եւ երբ թալիպ աղայի գիակը Մուշ էր բերուում , միայն մի յանդուգն Հայ , որ դադաղին էր մօտենում , իսկոյն մտրթուելով տուժեց յանդգնութիւնը :

Յետոյ Սերոբը դարձեալ բոլորովին լուռ մնաց , մի սր եւ է հեռու ընկած լեռնագիւղում պահուած , ի դերեւ հանելով կառավարիչների բոլոր ճիգերը՝ հակառակ իր գլխի համար արբուած մեծ գնին : Նորա մասին լուռում էր մերթնեմուդ լերան կողերի վրայ , մերթ Սասունում , մերթ Մօսկանում կամ Խուսթում : Ինքն

ըստ ինքեան հասկանալի է որ զինուորական ջոկատների , զաբթիէների , Համիտիէ Գրդերի կողմից Սերոբին ձեռք ձգելու համար արած ջանքերին պատճառով , հայ գիւղացիները նրանց ծախքն էին հողում : Այնտեղ , Տրմերդում եւ ուրիշ գիւղերում լսեցինք Հայերից (որոնք չզիտեմ ինչ պատճառով ընդունում են առանց այլեւայլութեան որ իւրաքանչիւր Եւրոպացի պիտի համակրէ Ֆէդայիներին , ) թէ Սերոբը մի քանի շաբաթից ի վեր արդէն գտնուում է Խուսթի վայրենի լեռնագաւառում , ուր նրան ձերբակալելու մասին մտածել անգամ անկարելի է : Մինչեւ այն ժամանակ ինձ անհասկանալի էր մնացել թէ ինչո՞ւ Սերոբը անվնաս դարձնելու համար կառավարութեան բոլոր ճիգերը բոլորովին անյաջողութեան էին մատնուում . սակայն երբ մենք բարձրացանք Խուսթի վայրենի լեռնագաւառը իր թաւուտ եւ գրեթէ անթափանցելի անտառներով , ուր կածանից աջ ու ձախ միայն տասը մէթր հեռուն կարելի է տեսնել , երբ սոսկալի չարչարանքներով , մերթ մագլցելով , հսկայական կիրճերը բարձրանալով , յետոյ նոյնքան խոր ձորերն իջանք , սկսեցի ըմբռնել թէ այս ցանցառ բնակուած երկրում իր շատ ծածուկ պահուած գիւղերով իսկապէս անհնար էր լաւ հետեւանքի հասնիլ յանդուգն խմբապետի նկատմամբ :

Խուսթը իր հետաքրքրաշարժ խաղիական նախաբնակիչներով , վայրենութեամբ եւ ոռմանդիկ զրոյնովը դերազանցում է եղերաւհրոչակ Սասունը . այդ տեղերով դժուար է անցնիլ , նրա մեծ մասի համար կառք կամ ձիասուած բաները անձանօթ երեւոյթներ են , շատ գիւղեր կառավարական տուրք երբեք չեն վճարել , որովհետեւ այնտեղ ոչ մնայուն կառավարական օրդաններ կան , եւ ոչ էլ տուրք հաւաքելու համար ժանդարմներ են երեւցած . գիւղերից մէկում գիւղացիները զեռ ոչ մի անգամ ոչ մի զինուոր ոչ մի թուրք կամ պաշտօնեայ չէին տեսել . երկու տարուայ ընթացքում միայն մի անգամ մի հետեւակ ժանդարմ յայտնուել էր . թէ աշխարհում «թուրք կառավարութիւնից զուրս» որի մասին էլ նոքա լսելով գիտեն , էլի ուրիշ պետութիւններ կան , նրանց համար զա օտար էր , ինչպէս մենք ընդհանրապէս առաջին Եւրոպացիներն էինք որ այդ կողմերով անցնում էինք :

... Այդտեղից չորս օրուայ սաժանագին ճանապարհորդութիւնից յետոյ իջանք դէպ ի Իրարբեքի սարահարթերը , եւ Գսննոփոնի ճանապարհը շարունակելով , անցանք Խուսթ լեռը եւ Տիգրիսի ակունքը , ուր գիւղերում իմացանք թէ Սերոբ փաշան այդ միջոցին Խուսթը թողել եւ արեւմտեքում ճիշդ Մուշից հարաւ Տաւրոսիկի շրջանում իր գլխաւոր կայանքն է ընտրել . ուրեմն նա էլի բոլորովին մեզ մօտ էր գտնուում : Մուշի հարթավայրերից ցած իջնելիս , նորից այս քաղաքիս մի երկար այցելութիւն տուինք , ուր դաւառա-

պետր ինձ հաստատում էր թէ Սերոբը Տալուրիկումն է գտնուում եւ թէ ձմեռը չսկսուած մի մեծ հարուած պիտի հասցնեն նրան և ամբողջ Պիթիլիզի եւ Մուշի գործերն ու ժանգարմաները նորա վրայ ուղարկելով: Եւ այս անգամ կառավարութեան ջանքերը իսկապէս յաջողեցան, վեց օր յետոյ Սերոբի ընթացքին վերջ էր տրուած:

Թուում է թէ այնտեղ հայ բնակչութիւնը սկսել է ապահովանաբար նկատել որ Սերոբի ձեռնարկները պատճառով ինքն իր կեանքն ու ստացուածքն է տուժում, թէ զէպ ի կեանքի եւ գոյքի պաշտպանութիւն մի վերապարձ չէ կարելի յուսալ բանի դեռ Սերոբեան խումբը շարունակում է իր ընթացքը: Այս հասկացողութիւնը պատճառ դարձաւ հայ գիւղացիների մեծ մասին նրանից հեռանալուն, եւ այդպէս էլ կառավարութիւնը իմացաւ թէ Սերոբը Տալուրիկումն է գտնուում եւ նրանմէ բերի Ղին մի որոշուած գիւղ է գնալու, որի միջոցին պէտք է անցնի մի կիրճով, ամենախոր լուսթեան մէջ այս կիրճը պաշարուեցաւ ժանգարմաներով և որոնք ժայռերի ետեւ բացարձակ պաշտպանուած էին, եւ բոլորովին անտեղեակ ապստամբները յանկարծակի բռնուեցան գնառակների ատարափին: Այդպէս ընկաւ ազատութեան աներկիւղ մարտիկը, եւ իրան հետ իր տղան, եւ իր երեք ընկերները, մինչդեռ Սերոբի կինը վերաւորուած ձերբակալուեցաւ: Սերոբի գլուխը կտրեցին եւ Քիթլիս բերին, ուր երկար ատեն ժողովրդին ի ցոյց դրուեցաւ, յետոյ տարուեցաւ Հայոց եւ պիսկոպոսին, որը գիշերային լուսթեան մէջ հողին յանձնեց: Այսպէս վերջացաւ շատ սքանչելի շայտ սարսափ ներշնչող Սերոբ փաշան, ազատութեան ծարաւող, իտէալով տուգորուած, լաւը ուզող բայց ամա՛ղ՝ աղեալաբեր մի բնաւորութիւն:

Թէ մոլեռանդ գրգռուած սաճիկ ժողովուրդը, օգտուելով առթից, մի քանի հայկական գիւղեր կողոպտեց եւ տամնեակ հայ գիւղացիներին կեանքին վերջ գրեց, դա թող շատ չգարմացնէ, սա Սրեւելցու բնաւորութեան մէջ է, եւ ի հարկէ Հայերը հակառակ պայմաններու մէջ ձեռք միեւնոյն կիրճ պէտք է վարուէին:

Յուսալի է թէ տաճիկ կառավարութիւնը, որ ուժով եւ ճարպիկութեամբ մինչեւ այսօր որ եւ է մեծ կոտորած Քիթլիզի վելայիթում գտել է, այժմ երբ մշտական վրդովման պատճառը վերջապէս վերցուած է, հանրային կարգապահութիւնը եւ ապահովութիւնը պէտք է հաստատէ: Այս նպատակին, — եւ թէ այդ բանին այնտեղ լրջօրէն ձգտում են, սորա մասին առիթ ունեցայ կրկնակի համոզուելու, — հասանելու համար, կառավարութեան աւելի հեշտ պիտի լինէր երբ խելքի եկող Հայերը նրան իրենց ընդհանուր թշնամի-Քրդերի գէմ օգնէին: Ես անուանում եմ «ընդհանուր թշնամի», որովհետեւ օսմանեան պետութեան ամենազատ թշնամին Քրդերն են: Ես կարծում եմ այս

բոլորը ինչ որ ես գրում եմ նպատաւ որ չեն իմ եւ մեր ապագայ գիտնական ճանապարհորդութիւնների համար թուրքիայում, եւ ես համուզուած եմ որ միակ ձեռնհաս իշխանութիւնը որ միայն այս պայմաններին մէջ փոփոխութիւն մտցնել կարող է, իմ այստողերը ոչ կարգալու է եւ ոչ էլ լսելու: Բայց սա ինձ չէ կարող ետ կացնել, որովհետեւ ես թուրքերին իբրեւ մարդիկ սիրում եմ, նրանց անփական շահի համար բոլոր ճշմարտութիւնը գրելուց եւ նրանց ցոյց տալուց այն վաւերագրով զէպ ի որը անտեղեակաբար նրանք մտահոսում են:

Ութ տարի առաջ երբ առաջին անգամ Ասիական Տաճկաստանով անցնում էի, մերթ այստեղ մերթ այնտեղ տեսայ մարաշխաւ Զեքի փաշան որ նոր ստեղծուած անկանոն ջուրդ գործադրեքը կազմակերպելով զբաղուած էր: Այն ժամանակ, երկիրն ու մարդիկը տեսնելով, այս նոր ստեղծուած գուշերու արժէքն ու նըշանակութիւնը այնպէս հասկացայ թէ՛ կառավարութիւնը օրէնքի չհպատակող անկարգապահ, վատ գիւնուած, անհասակաւ աւազակներից աւազակախմբեր ստեղծում է, որոնք համապատասխան պաշտպանութեան տակ աղաջուանից առելի ստակալի պիտի դառնան եւ երկիրը անիշխանութեան ու ամենից շատ իրանց կամալանութեան ենթարկուած ու ամենից աւելի անպաշտպան Հայերը զէպ ի յեղափոխութիւն պիտի մղեն, եւ զգրագրաբար իմ գուշալութիւնները այսօր ոչ միայն կատարուած են այլ իրականութեան մէջ իմ մտածածէն շատ աւելի անդին անցած են (\*):

ՏՐ. ՎԱԼԴՄԱՐ ԲԵԼԿ

(«Յրանք»-ըթը Զայթուել», 1900, թիւ 5, 8.)

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՏՐ, ՊԵԼՔԻՆ

Պարոն,  
Գերմանիոյ հայրենակիցներէս մին ինձի շրկեց «Փրանք»-ըթըր Զայթուել»-ին մէջ ձեր վերջերս Հայաստանի մասին հրատարակած յօդուածներուն թարգմանութիւնը: Հրատարակեցի զայն հայերէն ամսաթերթի մը մէջ («Անահիթ») որ Բարիկ լոյս կը տեսնէ իմ անօրէնութեամբս: Այդ ամսաթերթով ես կը ձրգտիմ ծանօթացնել հայ հասարակութեան եւրոպական անձնաւորութիւններու կարծիքը՝ հայկական խնդրոյն մասին. եւ ձեր կարծիքը վերջին ծայր շահեկան է անկողմնակալ եւ մանրակրկիտ զննողութեան այն մտահոգութեամբը որ անոր մէջ կը յայտնուի:

(\*) Տո. Պելքի յօդուածին վերջին մասը նուիրուած է ամբողջապէս Համիդի ֆեւրաբուռն, այդ մասին թարգմանութիւնը պիտի հրատարակենք յաջորդ թուով:

Սակայն ինքզինքս ստիպուած կը տեսնեմ ձեր յօգուածներուն ինչ ինչ կէտերուն մասին մէկ քանի գիտողութիւններ ներկայացնելու . որովհետեւ ինձի կը թուի որ եթէ միմիայն բուն իսկ ճշմարտութիւնը փնտռելու ձեր համակ գիտական բաղձանքը անվիճելի է , այն եզրակացութիւնները որոնց յանգած էք՝ իրականութեան քիչ համաձայն են յաճախ եւ արդէն իրենք իրենց մէջ քիչ կապակից :

Տաճկական Հայաստանին մէկ մեծ մասը կտրեր անցեր էք , տեսեր էք բարբարոս անիշխանականութեան վիճակ մը որ այդ դժբաղդ երկրին մէջ կը տիրէ , ականատես էք եղեր այն արիւնոտ պայքարին զոր իրարու դէմ կը մըղեն մէկմէկու վրայ նետուած ցեղերը , եւ անշուշտ տեսած էք չարագուշակ հետքերը այն կործանարար մեծ մըրրիկին որ զեռ երէկ այդ երկիրներուն վրայէն անցաւ եւ զանոնք դիակներով ու փլատակներով ծածկեց : Իրաւ է որ կարեկցութեան քանի մը բառ արտասանած էք տառապող Հայերուն համար , բայց այդ ամբողջ անգղամ ու հրէշային կացութիւնը կը կարծէք մեկնել՝ անոր իբրեւ միակ եւ ուղղակի պատճառ մատնանիչ ընելով հաճ խոտվարարներուն մէկ քանի ապստամբական շարժումները եւ քրդական Համիտի գորագունդերու գոյութիւնը :

Արդ , այդ երկու իրողութիւնները ուրիշ բան չեն բայց եթէ ճակատագրական արգելնքը սկզբնական պատճառներու որոնք նոյն ինքն մահմետական բռնապետութեան վրայ հիմնուած թուրք սեփիմին իսկութեանը մէջ կը կայանան . ասոնք բիրտ արտայայտութիւններն են հիւանդութեան մը որուն արմատները կը գտնուին ոչ թէ հայ տարրին , ոչ իսկ քրեւոտ տարրին . այլ թուրք կառավարական զրուութեան մէջ : Այդ անիշխանական կացութիւնը զոր Հայաստանի մէջ կը տեսնէք , կրկնութիւնն է երեւոյթի մը որ արդէն տեղի ունեցած է Յունաստան , Սուրիա , Պուլկարիա , եւ այժմ նմանապէս կը յայտնուի Մակեդոնիոյ մէջ , ուր Առնաուտները Հայաստանի Բիւրտերուն տեղը կը բռնեն , ինչպէս որ Տրիւզները Սուրիոյ , եւ Առնաուտներն ու Չերքեսները Յունաստանի եւ Պուլկարիոյ համար Բիւրտերուն գործը կատարած են . եւ միշտ թուրք կառավարութիւնն է եղած որ մահմետական հասարակութիւնները քրիստոնէայ հասարակութեանց վրայ արձակած է : Ան է որ Չարդերուն հրամանը տուած է . Առնաուտները , Տրիւզները , Չերքեսները եւ Բիւրտերը ուրիշ բան չեն եղած եւ չեն միշտ բայց եթէ գործիքներ թուրք կառավարութեան ձեռքը որ միակ յանցաւորն է : Եւ դուք գիտէք թէ տեւական կարգաւորութիւն մը հաստատելու համար Յունաստանի կամ Պուլկարիոյ մէջ , Եւրոպան Բարձրագոյն Դրան բարի կամեցողութեանը չէ որ զիմած է . ինքն իսկ միջամտած եւ այդ երկիրները վերակազմած է եւրոպական կառավարական սխտեմի մը համաձայն . եւ անկից ի վեր այդ երկիրները հանդարտ են եւ բարգաւաճ :

Որովհետեւ վերջապէս դուք գիտէք թէ անկարելի է որ Սուլթանը , որ միեւնոյն ժամանակ Սալիֆն է , իր քրիստոնէայ հպատակները մահմետական հպատակներուն հաւասար նկատէ . նոյն իսկ եթէ օսմանեան վեհապետը ամենէն մարդասէր ձգտումներով տողորուած ըլլար , պիտի չկարողանար օրէնքին առջեւ իր կայսրութեան բոլոր մահմետական ու քրիստոնէայ հպատակներուն կատարեալ հաւասարութիւնը հաստատել : Մահմետական օրէնքը , որ այդ կայսրութեան մէջ կը տիրէ , չ'ընդունիր այս հաւասարութիւնը . այդ օրէնքին համեմատ , քրիստոնէայ հպատակները «գլուխինն ուսերնուն վրայ կրելու» իրաւունք ունին միայն տիրող ցեղին ողորմածութեանը (!) շնորհիւ . եւ պարտականութիւն ունին աշխատելու իրենց տերերուն ծառայելու համար . «տայա»ներ են , այսինքն «հօտ» , այսինքն բան մը որ յատուկ է խուզուելու , եւ ուտուելու : Որպէսզի Տաճկաստանը կարենայ լըջօրէն բարեկարգուելու եւ բողոքական տէրութիւն մը ձեւացնել , անհրաժեշտ է որ Սուլթանը օսմանեան կառավարութեան լոկ կայսրը , աշխարհական պետը ըլլայ . այն ատեն կրնայ օսմանեան բոլոր հրպատակներուն օրէնքի առջեւ հաւասարութիւնը ընդունիլ , բայց կը կարծէ՞ք որ Թուրքերը կարենան կամ ուզեն այս էական բարենորոգումը գործադրել : Ես կը տարակուսեմ , քանի որ Երիտասարդ-Թուրքերն անգամ այս արմատական փոփոխութեան անհրաժեշտութիւնը երբեք չեն ճանչնար :

Հայ յեղափոխականները մատնանիչ կ'ընէք իբրեւ պատճառը խոտվարութեանց եւ կոտորածներուն . եւ չէք նկատեր որ այդ մէկ քանի փոքրիկ ապստամբ շարժումները լաւ կառավարուած երկրի մը մէջ երբեք չպիտի կրնային յառաջ բերել անմեղ ժողովրդին ընդհանուր ջարդը եւ հանդարտ գիւղերուն կործանումը : Կը սխալիք գիւցաղական Սերուրը ձեր յարգանքին մէջ կղզիացնելով . մարդիկ որ կեանքերնին վտանգելով սահմանազուլր կ'անցնին եւ տաճկական Հայաստանի իրենց եղբայրներուն օգնելու կ'երթան , ուրիշ բան չեն չերնար ներշնչել բայց եթէ յարգանք եւ հիւսցում : Կարելի է քննադատել իրենց գործելու սխտեմը , — եւ կան շատ Հայեր որ այդ բանը կ'ընեն բացարձակ անվերապահութեամբ մը , — կարելի է մտածել թէ բարիք ընել ու պիտի , այդ խանդի եւ անձուռնութեան մարդիկը աղէտքներ գրգռելու եւ իրենց ժողովրդին տառապանքները սաստիկացնելու կը յանդիս յաճախ կարելի է խտուութեամբ զատել ընթացքը վարիչ մասնախումբերուն որոնք հաստատուած են ժընեւ . (եւ ոչ եւս Լոնսոն՝ ինչպէս կը կարծէք) , կարելի է մեղադրել ամուրյ յատակագիծ մը չունենալնին եւ յաճախ հեռատեսութեան եւ պատեհականութեան ապացոյց չտալնին : Ես իսկ մին եւս անոնցմէ որ կարելի եղածին չափ աւելի զգուշութիւն , հաշիւ ու ճարպիկութիւն կը քարոզեն մեզ ջախջախ

խոյ բռնաւորութեան դէմ մղուած պայքարին մէջ : Բայց այն անհրաժեշտութիւնն որ հայ ժողովուրդը կը գտնուի ինքզինքը նիւթապէս եւ բարոյապէս պաշտպանելու ընդդէմ ոեժի մի մը որ զայն ամէն միջոցներով կը ձգնի փճացնել , անվիճելի է : Եւ եթէ մեր յեղափոխական քոմիթէներուն թաքթիքը կրնայ քրննադատուել , — ինչպէս որ եւրոպական կառավարութեանցն իսկ կարող է քննադատուել ըլլալ , — իրենց զգացումներն ու իրենց նպատակն ամենագովելի են եւ ամենատրամաբանական . իսկ այդ գաղափարին զինուորները , անոնք որ այդ գաղափարին համար մեռնելու կ'երթան , ամէն քննադատութենէ վեր են : (Այդ ուղեցոյցը , որուն մատուցութիւնը կը պատմէք եւ որ ձեզ կը մղէ այդ իրողութիւնն ընդհանրացնելու եւ այդ բոլոր հայ յեղափոխականներու խումբերն աննպատ գոյնով մը տեսնելու , « յեղափոխական » մը չէր . այդ ուղեցոյցները երկրին բնիկ տեղաբնակներն են , տեղաբնակներ որոնք գիւցազնութեան ո եւ է յաւակնութիւն չունին եւ որոնց « արհեստ » է մեկուսացեալ ճամբաներէ առաջնորդել աւազակներ , մաքսանհնգներ կամ յեղափոխականներ :

Լուելեյն կը զգացնէք թէ այդ խոսվարարներու խումբերը որ այնքան դիւրութեամբ ուսուցութեամբ սահմանը կ'անցնին եւ ուսական հրացաններով զինուած են , ուս կառավարութեանէն անուղակի կերպով քաջալերուած են , եւ գրեթէ մինչեւ ենթադրելու կ'երթաք թէ առոնք ուս կառավարութեան գիտակից գործակներն են՝ ուսական գրաւման համար հողը պատրաստուելու գրկուած : Շատ ճամբարտանման է որ Ռուսիա իր քաղաքականութեանը շահաւէտ գտնէ Հայաստանի մէջ յառաջ եկած խոսվարարները , եւ թէ բարեացակամ անտարբերութեամբ մը դիտէ իր սահմանագլխէն զինուած խումբերու անցնելը : Բայց առի բնաւ չի նշանակեր որ այդ յեղափոխականները Ռուսիոյ հաշուոյն իրենց կեանքը վտանգելու կ'երթան . անոնք , անտարակոյս , կ'երթան իրենց հայրենիքը թրքական լուծէն ազատելու միակ նպատակով : Եւ ատով ուրիշ բան չեն ըներ բայց եթէ կրկնել ինչ որ իրենց Ղարապաղի ու Երեւանի պայքարը արդէն ըրած են հարիւր տարի առաջ : Ռուսիա խոստացած ըլլալով ինքնավարութիւն չնործել պարսկական Հայաստանին , հայ մեղիքները այս դարուն սկիզբը Պարսկաստանի դէմ ապստամբեցան . եւ այդ հայկական շարժումներուն շնորհիւ է որ Ռուսիա կրցաւ Պարսկաստանէն խլել Արարատեան նահանգները . ինքնավարութեան խոստումը չգործադրուեցաւ . բայց այդ յոյսը ատով ոչ նուազ կենդանի մնացած է Հայոց սրտին մէջ , մանաւանդ որ Աղեքսանդր Բ . ի Ռուսիան այդ յոյսը վերաբարձեց Սան Սթէֆանոյի եւ Պերլինի մէջ իր բռնած վեհանձն ընթացքով : Մեր օրերուն հայ յեղափոխականները կը վերսկսին ինչ որ իրենց նախորդները փորձած

են , կարծելով թէ Ռուսիա պիտի վերջապէս ընէ թրքական Հայաստանին համար ինչ որ Պուլկարիոյ համար ըրաւ : Կարելի է այս յոյսին առաւել կամ նուազ տոկոսութիւնը քննադատուել , մանաւանդ յորմէհետէ ցարով ու ապշութեամբ տեսանք թէ « սրբազան » Ռուսիան , « Արեւելքի քրիստոնէից պաշտպան » Ռուսիան անկարելիք հանդիսատես եղաւ 200,000 Հայերու կոտորածին եւ այդ աղէտքին յետեւեալ օրն իսկ ուսական Հայաստանի մէջ բոլոր հայկական դպրոցները փակեց : Այս քննադատութիւնը կրնայ բանաւոր ըլլալ , բայց ոչ մէկ բանաւորութիւն կայ հայ յեղափոխականներն ամբաստանելու մէջ թէ պիտակցաբար ուսական շահերուն միայն կը ծառայեն :

Եւ արդէն այդ ապստամբներու խումբերը մասնանիչ ընելով իբրեւ խոսվարարութեանց պատճառը , մինչդեռ անոնց գրգռիչ պատրուակն են լոկ , — ինչ որ , դուք ալ կը հաստատէք , նոյն իսկ թուրք կառավարութիւնը կամ Բիւրսերը երբեմն իրենք ալ կը ստեղծեն , — չէք յիշեր թէ այդ երեւոյթը , որ վերջերս գոյութիւն ունենալ սկսաւ , ուրիշ բան չէ բայց եթէ պատասխան մը այն ընթացքին զոր համիտէ գորազնդերը եւ անոնցմէ առաջ պարզապէս Բիւրսերը եւ նոյն իսկ թուրք պաշտօնականները բռնած են երկար տարիներէ ի վեր Հայոց հանդէպ : Մովթէ որ քառասուն տարիի չափ առաջ առն մը Թուրքիա ապրած է , իր « Տաճկաստանի վրայ նամակներ » ուն մէջ արդէն կը խօսի այն « անարդար հայաժանրներուն մասին » որոնց կ'ենթարկուէին Հայերը թուրք կառավարութեան կողմէն : Տաճկաց հպատակ դառնալէն ի վեր , Հայերը երբեք կեանքի , պատուոյ եւ ինչքի ապահովութիւն չեն վաւելած : Այս վերջին դէպքերուն տարականոն վայրագութիւններէն առաջ , մշտական բնականոն վայրագութիւններու ենթարկուած էին : Համիտէ գորազնդերու կազմակերպումը այդ արդէն անհանդուրժելի կացութիւնը իր արեւելիքի գաղաթնակէտին հասցուց : Թուրք իսկ կ'ըսէք թէ 1890ին Հայաստան ձեր ճամբորդութեան միջոցին , տեսնելով որ թուրք կառավարութիւնը համիտիներու զօրագունդերը կը կազմէ , նախատեսած էք թէ երկիրը ատով անիշխանականութեան պիտի մղուէր եւ Հայերը՝ յեղափոխութեան . ինչու ուրեմն յանցանք կը համարէք Հայոց՝ ձեր ութը տարի առաջ անխուսափելի նկատածը իրականացուցած ըլլալին :

Եւ դուք գիտէք անշուշտ թէ այս « հայկական խնդիր » ծնունդ առած է համիտի գորազնդերուն եւ հայ յեղափոխական քոմիթէներուն կազմակերպուելէն առաջ : Ռուս-թուրք պատերազմէն ու Պերլինի վեհաժողովէն ետքն է որ հայկական խնդիրը երեւան եկած է եւ այն բոլոր աստարները որոնց գործելը հիմա կը տեսնէք՝ կազմուած են : Եւրոպան է որ եթէ ոչ ստեղծած գոնէ պատճառւորած է այն սուր

ախտավարակութեան կացութիւնը որ այժմ կը տիրէ Հայաստանի մէջ, ինչպէս եւ Մակեդոնիոյ մէջ: Ռուսիա որուն մէկ բանակը Մեծ Հայաստանը գրաւած էր միեւնոյն անգին որ իր մէկ ուրիշ բանակը Պուլկարիան կը գրաւէր: Սան Սթեֆանոյի դաշնագրին 1877 յօդուածով Թուրքիոյ հայկական նահանգներուն մէջ իրական պաշտպանութեան մը անհրաժեշտութիւնը պայմանադրեց, ու եւրոպական վեց պետութիւնները ստորագրեցին Պերլինի դաշնագիրը որուն ծանօթ էք անշուշտ 61րդ յօդուածին, որով Բարձրագոյն Դուռը իրեն պարտք կը համարի անյապաղ իրագործել հայկական նահանգներուն մէջ հարկաւոր դատուած բարենորոգումները, ու եւրոպան իրեն պարտք կը համարի այդ «բարենորոգումներուն գործադրութեանը վրայ հսկել»: Եւ եթէ Պերլինի վեհաժողովին ատենագրութիւնները թղթատէք պիտի տեսնէք թէ այն մեծ վիճարանութեան մէջ ուր Անգղիան Թուրքը կը պաշտպանէր եւ Ռուսիա՝ Թուրքիոյ քրիստոնեայ ժողովուրդներուն իրաւունքները, Գերմանացի մըն է, նոյն ինքն Պրզմարք, որ միջամտած է գիտել տալու համար թէ 61րդ յօդուածին Անգլիոյ կողմէ արաջարկուած առաջին խմբագրութիւնը շատ քիչ իրական երաշխաւորութիւն կ'ընծայէր Հայոց համար, եւ լռելիայն զգացուցած է որ բարենորոգումներու գործադրութեան վրայ եւրոպական հսկողութեան պայմանն անհրաժեշտ է: Արդ այնքան միամիտ որքան անձիւզ եղբակացութեան մըն է որ կը համարէր յայտարարելով թէ «Թուրք կառավարութիւնը այն ատեն միայն պիտի կրնայ վերջ դնել այժմ տիրող անիշխանականութեանը հայ յեղափոխական շարժումները դադարին»: Թուրք կառավարութիւնը ինքն է տիրող անիշխանականութեան սկզբնապատճառը. ան երբեք պիտի յանձնատու չըլլայ ո եւ է բան բարենորոգելու, նոյն իսկ եթէ Հայաստանի մէջ յեղափոխական շարժումները վերջանան, ինչպէս որ ոչ մէկ բարենորոգում ուզած էր գործադրել հայ քոմիթիներու ծնունդէն առաջ. բարենորոգումները պիտի գործադրուին այն ատեն միայն երբ եւրոպա իրականապէս միջամտէ երկիրը խաղաղեցնելու եւ արեւմտեան քաղաքակրթութեան սկզբունքներուն համեմատ զայն վերակազմելու համար:

Ու, վերջացնելու համար, պիտի խոստովանիմ թէ ցաւ ու զարմանք զգացի տեսնելով որ գրեթէ հեղուկութեամբ կը նկատէք հայ ժողովրդին իբրեւ ինքնավար ազգութիւն վերակազմուելու բաղձանքը: Այդ բաղձանքը ցնորք կը համարիք: Ինչո՞ւ ցնորք: Ինչո՞ւ Պուլկարիներուն եւ Յոյներուն համար իրագործուածը Հայոց համար անիրագործելի պիտի ըլլայ: Հայ ժողովուրդը մեծ անցեալ մը ունի ասիական բարբարոսութեան դէմ մղուած դարուոր պայքարներու եւ ի նպաստ քաղաքակրթութեան ու յառաջադիմութեան քիչ պերճափառ բայց յարատեւ եւ ուժգին ջանքերու:

Մեր ժողովուրդը երկայն դարերով մաքառեցաւ Դուռնական ցեղերուն եւ ընդհանրապէս իսլամութեան դէմ, արեւմտեան քաղաքակրթութեան յառաջապահ գունդը եղաւ. իր այնքան յամառ որքան դժուրակ գիմաղրութեամբ, Բարբարոսներուն դէպ ի երիտասարդ եւրոպան խաւժոււմը յապաղեցաւց ու թուլցուց: Եւ երբ ձեր մեծ Պարպուսը իր խաչակիրներուն հետ Փոքր Ասիա գնաց քրիստոնէական գաղափարը Արաբներուն դէմ պաշտպանելու, հայ իշխանի մը հանգրիպեցաւ, Լեւոն իշխանին, որ անոր օգնութեան՝ ապամտնեց ու զօրք հասցուց: Պարպուս Լեւոնին խոստացաւ իր ձեռքով իսկ զայն թագաւոր օծել. խոստուածը կատարելէ առաջ մահը վրայ հասաւ, բայց իր որդին Հինրիկա Ջ, թագ մը զրկեց Լեւոնին որ այսպէս տեքակ մը եւրոպական թագաւոր եղաւ Փոքր Ասիոյ մէջ, եւրոպայի գաշնակից ու պաշտպանեալ, եւ որով հիմնուած այս սիրուն թագաւորութիւնը, — Փոքր Հայաստանի թագաւորութիւն կոչուած, — որուն համար Մարքո Բոլոկ'րաէ թէ «չատ արգարութեամբ եւ անտեսագիտութեամբ կառավարուած էր», կրցաւ ամբողջ երկու դար տեսել, հակառակ Մամուլներու եւ Թուրքերու կատաղի յարձակումներուն որոնք կ'ուզէին Հայերը պատժել եւրոպացուց օգնած ըլլալուն համար ու արեւմտեան քաղաքակրթութեան այս կորիզը ջնջել Արեւելքէն, եւ վերջապէս յաջողեցան իրենց նպատակին հասնելու: Մեզի համար տաժանելի է հիմա տեսնել թէ Պարպուսի Գերմանիային մէջ ոչ միայն զիւանազէտները այլ եւ գիտնականները պատմութեան այս ոչ շատ հին էջերը բոլորովին մոռցեր են: Նոյն իսկ այս դարուն մէջ, հակառակ բարոյական ու մտաւորական խորին անկմանը որու մէջ թաղուեր էր հինգ դարու ստրկութիւնէն, հայ ցեղը կրցաւ եւրոպական գաղափարներուն հետ իր առաջին շփումով իսկ արտագրել Տէր-Ղուկասովի կամ Լազարեֆի պէս ռազմագէտներ, Աղամեանի եւ Այվազովսքիի պէս արուեստագէտներ, Լորիս Մելիքովի եւ Նուպար Փաշայի պէս պետական մարզիկ, Անդրէաս Արծրունիի եւ Տաշեանի պէս գիտնականներ, որոնք ի վեր հանեցին ցեղին քաղաքակրթական ամենաբարձր յատկութիւնները: Կարելի չէ ուրեմն առարկել, ինչպէս ոմանք կ'ընեն, թէ այս ժողովուրդը անկարող է ինքզինքը կառավարելու, քաղաքական մեծ գոյութեան մը խոչոր յաւակնութիւններ չէ որ ունի ան. իր ցանկութիւնն է ձեռք ձգել հարկաւոր ազատութիւնները՝ կարենալու համար, մեծ Պետութեան մը կամ Պետութիւններու լիւմբի մը հովանաւորութեանը տակ, ապրիլ ու զարգանալ, ուրիշ բան չ'ուզեր բայց եթէ «վարչական ինքնօրինութիւն» մը. եւ ատոր կարող է, եւ արժանի է ատոր: Կը մեղադրեն իրեն թէ փոքրամասնութիւն կը կազմէ մահմետական մեծամասնութեան հանդէպ, որպէս թէ հայ տարրին մտաւորական գերազանցու-


թիւնը, միացած իր պատմական իրաւունքներուն, չբաւէր իրական մեծամասնութիւնը, այսինքն բարոյական մեծամասնութիւնը, իրեն ապահովելու, — չնայելով որ մէկ քանի կեդրոններու մէջ թուով ալ տիրողը հայ աբրն է : Արգէն, բաց ի Թուրքէն, այսինքն կառավարական տարրէն որ եկամուտ է եւ հողին հետ ո եւ է խորին կապ չունի, եւ որ ինքնին Տաճկաստանի հայկական նահանգներուն մէջ փոքրամասնութիւն կը կազմէ, երկրին միւս «բնիկ» ժողովուրդները՝ Եգիպտի, Նեւատրական, Այսորի, Ղպտի, Աւշար, եւ նոյն իսկ խոշոր մաս մը Գիւրտերէն (որոնք Արիական ցեղին կը պատկանին եւ Հայերը «խնամի») կը համարին, բաց ի քանի մը վաչկատուն ջոկերէ որոնք միայն պատասխանեցին Համիտիէ զօրագնդեր կազմելու հրաւերին զոր Սուլթանը ուղղած էր բոլոր Գիւրտերուն, այս բոլոր ժողովուրդները կ'ըսեմ, մասմետական, քրիստոնէայ կամ հեթանոս, թրքական տիրապետութիւնը չեն սերեր եւ կարծուածին չաի թ չնամի չեն հայկական ինքնավարութեան մը կազմակերպմանը, որ այդամբողջ երկրին վերջնական հանդարտացումը եւ կանոնաւորումը պիտի ըլլէր եւ այդ բոլոր ժողովուրդներուն բարգաւաճման աղբիւր պիտի ըլլար Վերջապէս, այդատարկութիւնը զոր ատենով կը ներկայացնէին ինքնակոչ պատմագէտներ, բոլորովին անհիմ է այլ եւս, քանի որ եւրոպական դիւանագիտութիւնը թրքական Հայաստանի մէջ վարչական ինքնորինութիւն մը հաստատելու հարկաւորութիւնը եւ կարելիութիւնը ճանչցաւ, 1895ին Բարձրագոյն Դրան ներկայացնելով Թուրքիոյ հայկական նահանգներուն համար բարենտրոգմանց ծրագիր մը՝ քրիստոնէայ ընդհանուր կառավարչի եւ եւրոպական վերին հսկողութեան էական պայմաններով :

Ահաւասիկ, Պարոն, այն մէկ քանի խորհրդածութիւնները զոր ձեռ Հայաստանի վրայ գրած յօդուածներն ինծի ներշնչեցին, կը յուսամ որ ներողամիտ պիտի ըլլաք այն անպատրուակ անկեղծութեանը համար որով ինքզինքնիս թոյլ տուի զանոնք ձեզի նշանակելու : Ես կը պատկանիմ ժողովրդի մը որ չափազանց տառապած է, եւ անոնք որ կը տառապին ուրիշներէ աւելի իրաւունք ունին բարձր խօսելու : Պուլկարները, Յոյները եւ ուրիշ գերի ժողովուրդները իրենց ազատագրումը պարտական եղած են մեծ մասամբ եւրոպական ժողովուրդներու իրենց համակիր եղող հանրային կարծիքին ճնշմանը : Եւ մտածման մարդիկն են որ կը կազմեն հանրային կարծիքը . ասոր համար է որ ձեզի պէս գիտունի մը խօսքը մեզի համար մեծ կարեւորութիւն ունի . — մանաւանդ որ դուք կը վերաբերիք մարդկային ազնուագոյն ազգերէն մէկուն եւ որ կոչուած է Փոքր Ասիոյ մէջ մեծ դեր մը խաղալ : Դիւանագիտութիւնը միշտ շատ եսական ու շատ կասկածոտ է . մտածման մարդիկն են որ արդարութեան եւ մարդկայնութեան շար-

ժումները կը ստեղծեն, եւ անոնք են որ վերջ ի վերջոյ կը յաղթանակեն : Ձեր էջերուն մէջ դուք կը յայտնէք իրական ցաւակցութիւն մը, որ ուշադրութենէս չի կրնար վրիպիլ, «գոթաղզ» հայ ժողովրդին համար որուն անելի մարտիրոսացումը մօտէն տեսեր էք : Մի կարծէք թէ ձեզի կը խօսիմ յանուն յուսահատ եւ գթութիւն հայցող ժողովրդի մը . չեմ սիրեր հայցել : Հայերը պատմութեան մէջ իրենց անկարելիութիւնը չորս անգամ վերստացած են՝ հսկայական ճիգերով : Անոնք ժողովուրդ մըն են որ իր կենսականութեանը գիտակցութիւն եւ իր ապագային վրայ հաւատք ունի, եւ որ կը ջանայ իր իրաւունքները վերստին ձեռք ձգել . այդ նպատակին հասնելու համար կը դիմէ մտածող ու քաղաքակիրթ Եւրոպային, որովհետեւ իր ցեղովն, աւանգութիւններովն ու ձգտումներովը ինքզինքը Եւրոպային մէկ մասը կը զգայ . կը մտածէ թէ Եւրոպան ինքն իր նկատմամբ պարտականութիւն մը կատարած կ'ըլլայ իրեն օգնելով որ իր իրաւունքներուն վերստին տիրանայ, ու չի կրնար ընդունիլ թէ Եւրոպան վերջնականապէս շնական որոշումը տուած ըլլայ իր մարտիրոսացումը չահագործելով շնորհումներ ընդունելու, — որոնց արդէն իրականացումն անկարելի է որքան ատեն որ երկիրը արմատապէս չքուտուի իր խորունկ ու թունաւորուած վէրքերէն : Ան համոզուած է թէ իր դատին յաղթանակը միանգամայն Գաղաքակրթութեան յաղթանակ մըն է :

Ձեռն կը խնդրեմ ուրեմն, Պարոն, յանուն «գոթաղզ ու ազնիւ հայ ազգին» (ինչպէս կ'ըսէր Լորտ Պայրըն), ոչ թէ վեհանձն կամ գթած ըլլալ, այլ արդար :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



ՊԱՏՊԱՄԱՒՈՐԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԷՆ

— 0 —  
Եւր . (\*)

— Պիւլովի տեսակցութեան մէջ Նարպէյ օֆիքսաիոնի խօսքը ըրեր է զոր արգելեցինք արտասանել ուրիշ անգամ :  
— Նարպէյ եւ Չերազ գացին քարթ ձգելու բոլոր լիազօրաց . իսկ Պիքոնսֆիլտին եւ Անտրասիին նամակ գրուեցաւ :  
Ծածկագիր հեռագրին մէջ նոր փոփոխութիւններ մտցուցինք որ ապահով ըլլանք . վասնզի հեռագրիները դիտմամբ սխալ գալ սկսեցան որ շուարինք :  
7/19 Յուն . — Պուլէն հեռագիր առինք ընդարձակ եւ հրահանգական :

(\*) Տե՛ս «Անահիտ», Բ . տարի , թիւ 1—2 .

— Հեռագիր մենէ՛ դեսպանաց ի Պոլիս հե-  
ռագրին վրայ թէ՛ Վալի մը տուէք եւ ասոնք  
ասկէ հեռացուցէք :

— Թուրք դեսպանատան մէջ ըսեր են թէ  
Նարպէյ ռուսական մարզ , Խրիմեան Թուրքի  
մարզ եւ Փափագեան եկած է զանոնք միացնել :

— Խրիմեան կը կարծէ եղեր թէ մեր վիճա-  
կագիրը ամբողջ Սալնամէէն առած ենք . ար-  
գէն քիչ հաւատք ունէր , հիմա ա՛լ բոլորովին  
թերահաւատ դարձեր է : Դանդաղ է , վեհերոտ  
է , միանգամայն յուսահատ . մեծ դժուարու-  
թիւն կը կրեմ իրեն գործել տալու , եւ եթէ  
սպաննալից ընթացք մը չընտուի իրեն հան-  
դէպ՝ անկարելի է բան մը ընել տալ . թէեւ  
զիս « բռնաւոր » կ'անուանէ վճռական եւ կտրուկ  
ընթացքիս վրայ :

Խեղճ Չերազ այնքան տաղանակեր է որ ուրա-  
խութեան մէջ է այժմ եւ հանգիստ ազատե-  
ցայ , կ'ըսէ , սրտմաշուքէ եւ պատասխանու-  
ութենէ :

— 8/20 Յուն . — Պոլսէն կը հեռագրեն որ  
թուրք դեսպանաց այլ եւս չերթանք եւ ան-  
ուղղակի կերպիւ ազանջնին ձգենք թէ պատ-  
րիարքը պիտի գայ :

— Պիքոնաֆիլտէն Օսթենլի անուն անձը  
եկաւ . կը ցաւի որ շատ զբաղած ըլլալուն  
համար չկրնար հայ պատգամաւորները ընդու-  
նիլ . կ'ուզէ որ գրով հաղորդուին իրեն խնդր-  
ներնիս :

— Այսօր վերջապէս « խարթայ » ին որոշումը  
տուինք միաձայնութեամբ : Փոքր սահմանը  
ընդունեցինք եւ աւելի համառօտեցինք . Տը-  
րապիզոն եւ Կիւմիշխանէ դուրս ձգեցինք ու  
միայն Բիզադի ծովեզրը առինք . միւս թրդ-  
թերը անոր համեմատ սրբազրեցինք ու յետոյ  
լիազօրաց գիր մը պատրաստեցինք :

— 9/21 Յուն . — Պոլսէն հեռագիր , որ կը  
պատուիրէ մոռնալ Նուպարի անունն անգամ :

— Հրաւէր եկաւ վաղը ժամը 12 1/2ին կայս-  
րորդուոյն ներկայանալու :

— Քարթեր դեսպաններէն եւ լիազօրներէն  
ի պատասխանի մեր քարթերուն :

— Պուչի խորհուրդը մեր որոշմանց համա-  
ձայն եկաւ :

— Նուպարի ճասին հեռագրին վրայ բար-  
կացաւ Հայրիկ եւ յայտարարեց ինձ թէ « պատու-  
րիարք եւ դու պատասխանատու էք , այսու-  
հետեւ ես չեմ պատասխանատու , ինչպէս կ'ու-  
զէք , այնպէս ըրէք » : Չերազ ներկայ էր :

— 10/22 Յուն . — Ներկայացան կայսրոր-  
դուոյն որ մեծ պատուով ընդուներ է զիրենք  
իւնիֆորմով եւ պատուանշաններով :

— 12/24 Յուն . — Սաղապըրի գիրը ան-  
ստորագիր միայ Նարպէյի բացակայութեան  
պատճառաւ . քիչ միաց որ ես ստորագրէի . եւ  
երբ ոչ ատեն հասած միջոցին ըսի իրեն ,  
այն ատեն պատասխանեց « Թող ստորագրէիր ,  
եթէ ուրիշ ժամանակ պէտք ըլլայ իմ տեղս  
ստորագրէ՛ : »

Եթէ մեր պատգամաւորները ստորագրելու

իրաւունքը անգամ ուրիշին փոխանցին , ա՛լ  
ի՛նչ յուսալու է իրենցմէ :

Չերազ զՆարպէյ կ'անուանէ « բացակայ ներ-  
կայացուցիչ » , զԽրիմեան « Թող մնայ այսօր » ,  
վասնզի Խրիմեան գործի մը լիննալէն աւելի ,  
կ'ուզէ որ մնայ , յետաձգուի , մտածել պէտք է  
եղեր եւ աճապարելու չէ : « Եթէ դու չըլլաս ,  
կ'ըսէ Չերազ , գործ մ'ալ տեսնուելիք չունի ,  
մէկն օրն ի բուն բացակայ , միւսը յետաձգող ,  
եւ ազգն ալ թող անդին սպասէ որ իր գործը  
պիտի տեսնուի եւ յառաջ քալէ : Ասոր վրայ  
պայման դրինք որ ոչ ոք առանց գործ մ'ու-  
նենալու դուրս ելնէ ժամը 4էն առաջ :

Ասկից զատ Նարպէյ երբ պատահի որ դուրս  
չելնէ , այնքան երկար նամակագրութիւննե-  
րով կը զբաղի որ ես ու Խրիմեան սկսանք  
կասկածներ ունենալ . դիտողութիւն ըրի թէ  
ինքը ազգին գործին համար եկած է եւ ոչ թէ  
անձնականին ու ձգէ քիչ մը սա թղթակցու-  
թիւններուն օձիքը . պատասխանեց թէ ինքն  
ալ ազգին գործերով կը զբաղի եւ բարեկամ-  
ներու կը գրէ որոնք անհամբեր իրմէն լուրի  
կը սպասեն եղեր :

Դիտել տուի իրեն թէ բարեկամները կրնան  
սպասել , բայց գործը ո՛չ : — Չերազ տկար  
ըլլալուն իւր պրերը ես սկսած էի գրել իւր  
ճիֆթեովը եւ շատ մը զժուարութիւններու կը  
մատնուէինք , ուստի առաջարկեցի որ ինքը  
(Նարպէյ) օգնէ մեզ , զոր մերժեց :

— Նարպէյ իւր անձին համար շոռայարար  
ծախսելուն եւ ուտելիքի մասին խնայողու-  
թեամբ չերթալուն Խրիմեան գանգառեցաւ .  
Խնդրեցի իրմէ որ այդ կարգի խնդիրներ  
չյարուցանէ եւ սա գործը վերջացնենք ա-  
ռանց կուռի եւ աղմուկի : Իրաւէ թէ Նարպէյ  
չափազանց կը ծախսէ իւր անձին պլանքին  
համար՝ սակայն Խրիմեան ալ այնքան անհոգ  
է այս մասին որ մէկուն չափազանց զարդը  
միւսին պարզասիրութիւնը կը չափաւորէ եւ  
պատգամաւորի մը համար վայելուչ ըլլալը  
հարկաւոր է , թէեւ ո՛չ չափազանցութեան տա-  
նիլ մինչեւ կանացի ըլլալու աստիճան : Սա-  
կայն Խրիմեանի միտքը ուրիշ է , կ'ուզէ որ  
Նարպէյ ասկից երթայ կամ հանուի : Չերազ  
ալ կ'ըսէ թէ Նարպէյի ներկայութիւնը , ի՛նք  
ինչ որ ալ ըլլայ , անհրաժեշտ է . ի հա կին  
եթէ Խրիմեան դանդաղի կամ տատամսի : Են  
կը վարենք . ես ալ համամիտ եմ իրեն , եր-  
կուքն ալ իրարու համար եւ իրարու դէմ պէտք  
են , միայն վարելու համար հարկ է ո՛ր . եւ  
չըջանայեցողութեամբ գործենք :

— Խրիմեան այսօր առանձին ճաշի հրաւիր-  
ուեցաւ Մ\* \* \* էն . Չերազ կը կասկածի ո՛ր , ու-  
պարի համար ըլլայ եւ զանի բերել տալ փոր-  
ձեն :

— 13/25 Յուն . — Նարպէյ որ լիազօրնե-  
րուն զրկուելիք գրերը պիտի օրինակէր ,  
տրամջացեր է Խրիմեանի եւ ուզեր է անոր  
հետ միանալով որոշումը փոխել տալ . անոր  
վրայ Խրիմեան ըսաւ ինձ որ գրի խնդիրը թե-

թեւցնենք . պատասխանեցի թէ գրէ փախչելու համար անվայել բան ընելու չէ . առաւօտէն մինչեւ երեկոյ կը նստի նամակ կը գրէ իւր անձնական գործերուն համար եւ պաշտօնական գրերէն կը փախչի : Քոնկրէին առաջ ազգային խնդիր ներկայացնելով եկաւ թէ իր շուսինեանական ժառանգին խնդիրը հաստատել տալու :

Կարծես թէ հոս բան մը չընելու համար եկեր ենք եւ գործէ աւելի խօսք քալեցնելու ելեր ենք . կա՛մ ամենուն ալ շրջաբերական խրկելու է եւ կամ ոչ մէկուն . եթէ խրկել հարկ է, այն ատեն պէտք է որ ամենուն ալ միօրինակ երթայ, չէ՛ թէ առաջիններուն ընդարձակ եւ երկրորդականաց համառօտ կամ ընաւ, քանի որ ամենքն ալ ձայն պիտի ունենան քոնկրէին մէջ : Կը դարմանամ թէ այսքան ընդդիմութիւն կը յարուցուի ամենապարզ եւ որոշ բանի մը համար եւ գործերնիս այսքան կ'ուշանայ :

— 14/26 Յուն . — Նարպէյ եւ Պ\*\*\*եան սկսան շրջաբերականները գրել : Չերազ Վատինկթոնէն լուրերու թէ հաւանք է մեր բոլոր թղթերուն եւ ամենուն ալ շուտ խրկել պատուիրէ : Ասոր վրայ ամենքն ալ լռեցին . ստանելու է Սրբիմանի վիճակը, ինք սկսաւ կարգադրութիւններու ելնել, այն մարդը որ «այսօր թող մնայ» կ'ըսէր ամէն ատեն : Որոշուեցաւ անմիջապէս խրկել մեծերունը, եւ Նարպէյ որ «թողէք նամակս գրեմ» կը հեծեծէր սիշտ, առաւօտէն մինչեւ երեկոյ աշխատեցաւ գոնէ մեծերունը հասցնելու համար :

— Չերազ տարաւ Պիզմարքի, Անտրասիի, Պիքոնսֆիլտի եւ Քորթիի նամակաց ծրարները . Պիզմարքիին մէջ պատրիարքին գիրն ալ կար :

— Գիշերը Աւստրիոյ դեսպանատան երեկոյ թին գացին Երեկոյ թին մէջ, Մ. , Հոնէնլոնէ իշխանին քով Նուպարի հոս գալը կարեւոր դատեր է . Չերազ հարցուց ինձ թէ ի՛նչ պիտի ընենք եթէ գայ, «անոր ալ գիւրին ճամբան կը գամենք» ըսի, եւ որոշեցինք զրել ի Պոլիս :

Սրբիման աւելի համարում ունի Նուպարի վրայ քան Պոլսեցիներուն . հետեւաբար երբ ես կը ծրագրեմ, Չերազ կը թարգմանէ եւ Մ. կը հաւանի, ինք (Սրբիման) առարկութիւններու կ'ելնէ, մինչ երբ Վատինկթոնի վկայութիւնը կը հասնի, այն ատեն կը լռէ, ինչպէս որ պատահեցաւ շրջաբերականներու խնդրոյն մէջ :

— Մ. խորհուրդ տուաւ որ Պիքոնսֆիլտին առանձին նամակ մը գրուի որուն մէջ ոչ-սլաւ տարր մը ըլլալնիս, ցարդ Ռուսիոյ նկատմամբ ընդդիմանալնիս յիշատակուի եւ ի վերջոյ սպառնալիքի ձեւ բան մ'ընել . հաւանեցայ եւ սկսանք պատրաստել :

— Օ. եկաւ կրկին . քանի մ'անգամ է որ կուգայ եւ մօտէն ու հեռուէն հրահանգներ կուտայ, հայ վալիով մը բաւականանալ կը յորդորէ եւ աւելին պահանջելու համար հարկ եղած պաշտպանը չուսնալնիս կը յայտնէ :

— 15/27 Յուն . — Նուպարի մեմորաւը եկաւ :

— Չերազ պատմեց ինձ որ երէկ իրիկուան երեկոյ թին մէջ Ֆէրիտուն կը հարցնէ Սրբիմանի «Դո՛ւք էիք որ Բեթերսպուրկ գացեր էիք թէ նա (Նարպէյը ակնարկելով որ հեռուն է եղեր) . Սրբիման կը պատասխանէ այնպիսի ձեւով մը որ ըսել ուզեր է թէ ինք անանկ տեղեր չերթար, նա կ'երթայ, եւ թէ ինք հակառու է : Չերազի վրայ լաւ տպաւորութիւն չէ ըրեր այս, եւ իրաւամբ ալ, վասնզի զիրար նշաւակելու ժամանակը չէ, ընդհակառակը զիրար բռնելու եւ բարձրացնելու :

— Հրաւէր եկաւ Անգլիոյ դեսպանատունէն երեկոյ թի համար :

— Հրաւէր եկաւ գահաժառանգէն ճաշի վաղը ժամը 5ին ի Բոցտամ :

— Գարաթոտորի Սրբիմանի ըսեր է թէ հայ վալի չըլլար, ինքն ալ հաւատացեր է եւ իր կարեւոր բան կ'ուզէ հեռագրել ի Պոլիս որ հայ վալիով բաւականանալ համոզուին, վասնզի Նուպարի խորհուրդն է եւ Նուպար ինքը վալի ըլլայ տէ՛ ի՛նչ կ'ըլլայ ըլլայ հայ ազգը . այս մասին գրեցինք ի Պոլիս որ արթուն կենան եւ եթէ Կոււր այդ կարգի որոշում մ'ընէ յէ՛մ ելնեն այս անձին որ կ'երեւի թէ Բարիզի թուրք դեսպանին եւ թերեւս այլոց հետ ալ խորհրդակցութիւն ունի Հայոց խնդիրը թեթեւցնելու եւ պատեհութիւնը կորսնցնել տալու համար :

— Այսօր յանձնեցինք «Թայմզ»ի թղթակցին մեր թերթերը վաղը «Թան»ին, «Տէպա»ին եւ միւսներուն պիտի տանք :

— Տարինք նաեւ Չերազի հետ երկրորդ լիազօրաց թղթերը, վաղն ալ երրորդներուն :

— «Թան»ի թղթակցէն իմանալով որ Նուպար իր «մէմուառ»ը խրկեր է Վատինկթոնի, իրրեւ բացատրիչ Հայոց խնդրոյն (անշուշտ մտքերը նախապաշարելու համար), ըսի որ թե՛լ զարնեք իրեն եւ հասկցնենք թէ ուչ մնաց իւր մէմուառը եւ մենք մեր թղթերը արդէն տուած ենք : Սրբիման ըսաւ որ «Պիքոնսֆիլտ եւ Վատինկթոն ուղեցին մեր թղթերը եւ մենք ալ տուինք» գրենք նամակով եւ ուղեց նախ անանկ Մ. ը :

— Հայրի՛ կ, ըսի, սպասել չըլլար, հեռագրով իմացնենք որ հասկնայ թէ մենք իրեն չենք հետեւիք . երկու կերպ աշխատութիւն չըլլար . վնաս կ'ըլլայ մեզ, մանաւանդ որ Պոլիս ըսաւ մեզ «անունն անգամ մուցէք» :

— «Ես Պոլիս մոլիս չգիտեմ, ես Պոլսոյ հրահանգներուն հետեւիլ պարտաւոր չեմ, պարագաներուն պիտի հետեւիմ, ես այն մարդը չեմ կրնար կոտրել, պիտի շահիմ զայն, » ըսաւ :

— «Հայրի՛ կ, ծանր են վայրկեանները, չենք կրնար երկու ճամբայ բռնել : այսօրուան գործը վաղուան չենք կրնար ձգել, պէտք է զարնենք հեռագրերը, ստիպողական է» :

— «Ես մի թէ ընաւ կարծիք չուսնի՛մ, ես քեզի՞մ միայն պիտի հետեւիմ, քու խօ՞սքդ պիտի ըլլայ միշտ, ուրիմն ես հոս գործ չուսնիմ» :

— «Ի՛նչ կ'ըսէք, Հայրիկ, ո՞ր պարագային մէջ քու խօսքիդ չեմ հետեւեր, բայց այս մասին չեմ կրնար հանդուրժել. Պոլիս զմեզ խրկեր է, Պոլսոյ պիտի հետեւինք:»

— «Ես այդպիսի հեռագիր չեմ ստորագրեր», ըսաւ եւ ոտքի ելաւ մեկնելու:

— «Ես կը ստորագրեմ», ըսի եւ Չերազի պատաստել տուի հեռագիրը զոր ինքը ստորագրեց եւ յետոյ նամակ մը խմբագրելով Չերազ թղթերովը միասին դրկեցինք Նուպարին:

— Երեկոյն Նարպէյին պատմեցի, նա ալ հեռագիր մ'առեր է Լոնտրայի Յակոբեանէն որ յուրիս չին ժողով մը կայ եղեր ի Լոնտրա, անդ ներկայ գտնուի:

Պէտք եղած պատասխանը տուի թէ ինք պէտք է մնայ իւր պաշտօնին գլուխը:

— Նարպէյ կ'ըսէ որ Խրիմեան գայ չգայ ինքը պէտք է իւր պաշտօնը կատարէ եւ լիազօրներուն պարտի:

— Առանց Խրիմեանի տեղ մը չեմ կրնար երթալ, ըսի, եւ արդէն ինչո՞ւ չպիտի գայ, պատասխանատուութիւնը ծանր ըլլալուն կուգայ. եթէ ան չիգայ ու միայն դուն երթաս եւ եթէ անյաջողութիւն մը պատահի, բոլոր պատասխանատուութիւնը վրադ կը ծանրանայ եւ ասոր համար զդոյշ պէտք է ըլլալ:

— «Լա՛ւ, ըսաւ, եթէ վաղը Խրիմեան չգայ ճաշին կամ սուարէին, ես Չերազը կ'առնեմ կ'երթամ»:

— «Այդ, տեղերը կրնաք երթալ Չերազի հետ պատասխանեցի, սակայն պաշտօնական այցելութիւններուն կամ երկուքնիդ մէկ պէտք էք եւ կամ ոչ մէկերնիդ:»

Նարպէյ ալ կը ջանայ որ պատգամաւորութիւնը առանձին իրեն սեփականէ եւ Խրիմեանը մէկ կողմ նետէ. առաջին օրէն այս մասին շատ աշխատեցաւ, սակայն առաջըր առինք: Կը գանգատի նաեւ Չերազէն որ զԽրիմեան միշտ «նախկին պատրիարք» ըսելով կը յիշէ տեսակցութիւններուն մէջ եւ զինքը շատ կը սրբաբարկցնէ — Աստուած իմ, ինչե՛ր մտածել կուտաս մարդուն՝ հայ պատգամաւորին, Հայութեան այս անկղ վայրկեանին մէջ:

Իոկ Խրիմեան գաղտնի եւ յայտնի (ինձ ըսելով) կը ջանայ Նարպէյը հեռացնել ասկից. «Վնասակար է, կ'ըսէ, մեր խորհուրդները Ռուսաց կ'իմացնէ. զրկենք զինք Բարիզ կամ Լոնտրա»:

— «Ի՛նչ կ'ըսես, Հայրիկ, Պոլիսը ի՞նչ ընենք» Հարկ է այս երկուքը միացնել մէկ կողմէն, էնթրիկներուն դէմը առնել, եւ միւս կողմանէ զործը հոգալու է, աշխատելու է: Չերազ ու ես կ'աշխատինք. իրենք ի՞նչ ըրած ունին, բաց ի արգելք կամ դժուարութիւն հանելէ:

ՍՏԵՓԱՆ ՓՍՓԱՋԵԱՆ

(Շարունակելի)

### ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՍԸ

— 0 0 —

«Դրօշակեան Դրութիւնը» յօդուածս նախատինքներու, հայհոյանքներու եւ զրպարտութիւններու նոր տարափ մը բերաւ «Անահիտ»ին վրայ. եւ բնական էր որ այդպէս ըլլար: Չպիտի զբաղիմ ատոնցմով. չպիտի զբաղիմ մանաւանդ այլ եւս «Շարժում»ով. այդ ուղորմիլի թերթին մէջ երեւցած բարբառնալիքներուն ուչ զարձնելու պէտք զգացի, լոկ անոր համար որ կը կարծէի թէ այդ թերթը Դրօշակեան կուսակցութեան անպաշտօն օսկանն էր. արդ այդ կուսակցութիւնը ներքնապէս ճանչցող անձեր ինձի կը հաւատեն թէ բաւական ատենէ ի վեր «Շարժում»ը դադարած է Դրօշակեան կուսակցութեան հետ ո եւ է կապ ու նենալէ. ուրեմն այլ եւս բացարձակապէս անօգուտ եւ անիմաստ կը դատեմ ո եւ է կարելուութիւն ընծայել լիբը ստութիւնը, գիտակից զրպարտութիւնը, ապուչ վայրահաչութիւնը իրեն ուղեգիծ դարձուցած անհատական աննշան հրատարակութեան մը:

Միայն վերջին բացատրութիւն մը կ'ուզեմ տալ, յօդուածի մը առիթով զոր «Շարժում»ին մէջ այս օրերս հրատարակեր է պարոն մը, որ շատ իրաւացի կերպով ինքզինքը կ'անուանէ «իմանարժան աշակերտս»: Այդ յօդուածին մէջ ինձի կը վերագրուին կարծիքներ զոր չեմ յայտնած, ու կ'երեւան զրպարտութիւններ, զորս կ'ուզեմ քայքայել, վերջին անգամ մըն ալ ցոյց տալու համար, — եթէ այլեւս պէտք կայ, — այդ թերթին «մարդ մրտնդու» սիստեմին տղայական անբարոյականութիւնը:

Յօդուածագիրը կ'ըսէ որ զէնք փոխադրող խուճիկ մը վերջերս ունեցած մէկ ընդհարումը «իբր արշաւանք մը ժողովրդին ներկայացուցած եմ»: Ամէն ոք գիտէ թէ ինձմէ առաջ, բոլոր եւրոպական լրագիրները այդ իրողութիւնը ներկայացուցած էին իբրեւ «զինուած մարզոց անցք մը սահմանազլխէն», այսինքն «իբր արշաւանք մը». եւ նոյն իսկ «Շարժում» «Նորից սկսուում է» փողոցսով խմբագրականի մը մէջ, այդ անցքը կը ներկայացնէր իբրեւ արշաւանք մը, իբրեւ «կուրս վերսկսումը», ո եւ է Հայու համար, բնական էր այդ անցքը Խնաստորի արշաւանքին վերանորոգումը համարիլ. ես «արշաւանք» բառը գործածեցի, որովհետեւ համոզուած էի որ արշաւանք մըն էր. եւ Պելք, որ մօտէն տեսած է իրողութիւնը, դարձեալ «արշաւանք» բառը կը գործածէ իր յօդուածին մէջ: Իբօք ալ, այդ անցքը, թէպէտ զէնք փոխադրել միայն իրեն նպատակ ունեցած ըլլայ, «արշաւանքի» հանգամանք ունի, եւ արշաւանքի մը հետեւանքներն ունեցած է: Ժողովուրդը ինքնապաշտպանութեան պատրաստել, ասի ամենէն գովելի, ամենէն հասկանալի ու անհրաժեշտ գործնէ զոր յեղափոխա-

կան ընկերութիւն մը կարենայու պարտի կատարել . բայց աւելորդ է ըսել թէ ամենէն ըզգոյշ ու ճարպիկ մեթոտները պէտք է նախընտրել՝ այդ նպատակին հասնելու համար, որովհետեւ աններելի է որ ժողովրդին ձեռքը զէնք տալու աշխատած ատեն՝ կուսակցութիւն մը պատրուակ հայթայթէ նորանոր ազէտներու . եւ ինծի կը թուի թէ «հարիւր հոգիով» սահմանադրւի անցք մը, զէնքի գաղտի եւ անվըտանգ փոխադրութեան ամենէն ուշիմ եղանակն ըլլալէ հետո է : Յեղափոխական գործունէութեան մէջ վտանգն անխուսափելի է, եւ կարելի չէ առանց վտանգը աչք առնելու . ո եւ է քայլ առնել . առի անուրանալի է . բայց նոյնքան անուրանալի է որ մեզի պէս չափաւոր կնճոտ ու զժուարի կացութիւն մը ունեցող եւ բազմաթիւ թշնամիներով պաշարուած ազգի մը համար, յեղափոխական կուսակցութիւնները պարտաւոր են ամէն ջանք ընել կարելի եղածին չափ վտանգը չէզոքացնող միջոցներով ժողովուրդը ինքնապաշտպանութեան պատրաստելու :

Յօդուածագիրը կը յանդգնի ինծի վերագրել սա գաղափար «Ինչնակցականները ոռու կտորավորութեան վարձեալ գործիքներն են եւ ի հաշիւ անոր քաղաքականութեան կը դործեն» : Կը հրաւիրեմ «Անահիտ» ի ընթերցողները մէկ տղ մը, մէկ բառ մը գտնելու յօդուածներուս մէջ որ այս գաղափարը արտայայտեն : Այդ կասկածը յայտնուած է «Արմենիային» մէջ եւ «Մարտ»ին մէջ . բայց ամէն ոք զիտէ թէ «Անահիտ»ը կապ չունի ոչ մէկ կուսակցութեան, ոչ մէկ թերթի հետ, եւ իր անհատական դիտելու ու դատելու եղանակն ունի, որ կրնայ իրալ կամ ճիշդ ըլլալ . բայց որ իրն է : Եթէ մտածեմ եւ փաստերով համոզուած ըլլայի թէ Իրօչակեանները ոռու կտորավորութեան վարձուած ու դիտակից գործիքներն են, այնպէս կը գրէի, եւ փաստերով ըսածս կ'ապացուցանէի : Ես ըսած եմ եւ կը շարունակեմ ըսել, թէ Իրօչակեանները «անգիտակից» գործակիցները կ'ըլլան Մեծ Հայաստանի ոռուական գործումը պատրաստելու գործին : Ես միշտ կը մտածեմ թէ քաղաքականապէս հայ իշխանութիւններն ու կուսակցութիւնները ոչինչ ընելու են՝ Ռուսիան գրգռող կամ մեզի դէմ զայրացնող, որովհետեւ մեր ապագային վճռումին մէջ Ռուսիան ճակատագրականապէս սահմանուած է ամենամեծ դեր մը կատարելու . բայց նոյնպէս կը մտածեմ թէ բնաւ երբեք չ'արժեք արիւն թափել Բոլսետոնոցէֆի Ռուսիայէն գրաւուելու համար : Պատրաստել ժողովուրդը ինքնապաշտպանութեան, եւ առանց նոր ջարդերու պատրուակ փախու, ապասել դէպքերուն, ջանալով որ կարելի եղածին չափ ուժ վերագանենք ու խտացնենք որպէսզի կարենանք ճիշդ մը փորձել երբ պատեհ առիթ մը ներկայանայ, — անա ինչ որ պարտք ունի ընել յեղափոխական կուսակցութիւն մը :

Յօդուածագիրը կը ձգտի ցուցնել թէ «Անահիտ»ը «միմիայն» Իրօչակեան կուսակցութիւնը

կը քննադատէ, եւ թէ անոր «թշնամի» մըն է, այսինքն թէ հակառակորդ ուրիշ կուսակցութեան մը ներքնչումովը կը վարուի : Ոչինչ կարելի է երեւակայել աւելի սխալ . տատն անգամ յայտարարած եմ թէ ոչ անցեալին մէջ, ոչ ներկային մէջ ո եւ է կուսակցութեան չեմ պատկանած ու չեմ պատկանիր, եւ ասոր հակառակը ոչ ոք կրնայ փաստով հաստատել : «Նոր կեանք»ին մէջ քանի մը յօդուած հրատարակած եմ, ոչ թէ իրրեւ Հնչակեան, այլ իբրեւ հայ գրող մը, եւ ամիկից ոչ ոք իրաւունք ունի հետեւցնելու թէ «Նոր կեանք»ը հրատարակող գրազէտներուն հետ բարեկամական ու դրական յարաբերութիւններէս զատ ուրիշ կապեր ունեցած ըլլամ : «Անահիտ»ը բացարձակապէս անկախ, անհատական օտկան մըն է, — կ'ուզեմ որ ասի վերջնապէս հակցուի : Արդէն ըսել թէ միմիայն Իրօչակեան կուսակցութիւնը քննադատած եմ, պարզ ստույթիւն մը գործել է թէ ըսուէ վերընթեռնուլ «Պատասխանատուութիւնները» յօդուածս, ուր, տեսնելու եղանակով մը որ միմիայն իմն է եւ որուն չատ մը կէտերուն համակարծիք չեն «Արմենիա»ի կամ «Մարտ»ի խմբագիրները, քննադատած եմ «հայկական շարժում»ը սկզբէն : Ինչեւ վերջը եւ ցոյց տուած եմ թէ «Արմենիական, Հնչակեան եւ Իրօչակեան» ամենքն ալ սխալ ծրագրի մը վրայ գետեղած են իրենց գործունէութիւնը . եւ եթէ հիմա իմ դիտողութիւններս Իրօչակեան կուսակցութեան վրայ կը մասնաւորուին ու կը խտանան, պատճառը լոկ այն է որ այս վայրկեանին միայն այդ կուսակցութիւնն է որ սխալ գործունէութիւն մը նոյնութեամբ շարունակել յամառելով՝ «դրականապէս» վերնաաբեր կը հանդիսանայ մեր ցեղին բարձրագոյն շահերուն : Իմ քննադատութիւնս երբեք կը թրամ չէ անձնական կամ կուսակցական նկատումներու վրայ, այլ հայկական ինդրոյն լուծման բոլորովին ինքնուրոյն տեսլական մը վրայ, որուն միշտ յարած կը միամտ իսկ երբ զիս «հակաեղափոխական» կամ «պակասողական» կամ «թրքառէր» անուանելու կ'եւլեն, ապուշ կատակ մը կը գտնեմ միայն ատոր մէջ . ոչ ոք ինծի չափ սիրող է «գործունէութեան», ոչ ոք ինծի չափ սկզբունքով «յեղափոխական», ու ոչ ինծի չափ «թրքատեաց» . եւ այս բոլորը ապացուցած եմ, իմ կեանքովս, իմ որոշ սահմանի մը մէջ ունեցած գործունէութեամբս, իմ նկարագրովս ու խտրութեամբս, որ զիս ճանչցողներուն համար ո եւ է անորոշութիւն չունի : Յեղափոխական ըլլալու համար անհրաժեշտ չէ այսինչ կամ այնինչ կուսակցութեան տեսութիւնները կուրօրէն ընդգրկել : Իսկ երեւակայուած հակաեղափոխականութեան մը դէմ Յեղափոխական ու Ազգային Գաղափարը պաշտպանելու ձեւն աւնող դիւրին ու իմաստակ հետտրութիւնը, զոր ատենէ մը ի վեր ազգասիրութիւնն իրենց մենաշնորհ ու արհեստ դարձուցած կարգ մը պարոններ անամօթաբար կը շահագործեն,

այնքան ծիծաղաշարժ որքան գարշելի քա-  
 ւորիկնամ մըն է եւ ուրիշ ոչինչ : Ես առ-  
 ջի օրէն յայտարարած եմ թէ հայ ժո-  
 զովրդին համար ձիակ նպատակակէտը «բա-  
 ցարձակապէս ազատ եւ ինքնուրոյն կեանք  
 մը ունենալու» հասնելը պէտք է ըլլայ .  
 այդ նպատակին հասնելու համար , ես կ'երեւ-  
 ւակայեմ ծրագիր մը որ տարբեր է մինչեւ  
 հիմա գոյութիւն ունեցող կուսակցութեանց  
 ծրագիրներէն . եւ գալով «միջոցներ»ուն ,  
 իմ բացարձակ իրաւունքս է լաւ կամ յոտի  
 պոնել այն միջոցները զոր գործածած են մեր  
 բոլոր կուսակցութիւնները : այդ նպատակին  
 համար : Խնդիրը զիս հասկնալուն , զիս հասկը-  
 նալ ուզելուն վրայ է , — եւ կը կարծեմ թէ  
 կուսակցամոլներէն ու անձնական նկատում  
 ունեցողներէն դուրս , արդէն կան Հայեր , բա-  
 ւական բազմութիւ , որ սկսած են զիս հասկնալ :

Վերջապէս «Շարժում»ի յօդուածագիրը սա  
 խեղկատակ ենթադրութիւնը մէջտեղ կը նե-  
 տէ թէ «Անահիտ»ը ինքն իսկ ուսակց  
 գործիք մըն է (!) , քանի որ Թուսաստան ազատ  
 մուտք ունի , եւ «հակայեղափոխական» է , քանի  
 որ ուսահայ գրողները իրենց անունովը կը  
 յանդգնին հոն ստորագրել :

Կարելի չէ երեւակայել զրպարտութիւն մը  
 աւելի ցնորականօրէն ապուշ :

«Անահիտ»ը իր յայտագրին մէջ ազդարարած  
 էր թէ զերպանցապէս ազգայնական թերթ  
 մը պիտի ըլլայ , եւ թէ : առանց «քաղաքական  
 գործունէութիւն ունենալու» , այսինքն առանց  
 յեղափոխական կուսակցութեան մը օակնը  
 ըլլալու , — ինչ որ չէ եղած երբեք եւ չպիտի  
 ըլլայ , — պիտի «հրատարակէ տեսութիւններ  
 ազգային եւ քաղաքական հարցերու վրայ» :  
 «Անահիտ»ը գործադրեց իր յայտագրին խոս-  
 տումները : «Անահիտ»ին «քաղաքական կուսակ-  
 ցութեան մը օակնը» չըլլալը երբեք չի նը-  
 շանակեր որ ան պահպանողական թերթ մը  
 ըլլայ . «Անահիտ»ը տեսականօրէն յեղափոխա-  
 կան է , որովհետեւ «ինքնուրոյն Հայութեան  
 մը կազմակերպումին բաղձանքը» զոր «Անա-  
 հիտ»ը հռչակած է միշտ , կը բաւէ ինքնին այդ  
 մասին ո եւ է կասկած անհնարին դարձնելու .  
 բայց ճիշդ որովհետեւ «Անահիտ»ը տեսակա-  
 նօրէն յեղափոխական , եւ անհատական անկախ  
 օակն մըն է , ու ո եւ է կուսակցութենէ , ո եւ է  
 գործօն մարմինէ կախում չունի , իրաւունք  
 ունի ազգային շարժումին գործունէութեան  
 եղանակներուն վրայ իր կարծիքը համարձա-  
 կօրէն յայտնելու :

Գալով «Անահիտ»ին ազատօրէն Թուսաստան  
 մտնելուն , անաւասիկ իրականութիւնը . «Անա-  
 հիտ»ի Ա. Տարեշրջանին Ա. թիւին մուտքը ամ-  
 բողջութեամբ արգիլուեցաւ Թուսաստանի մէջ .  
 նմանապէս Գ. թիւը , Գ. թիւը : Է. թիւն սկսեալ  
 որոշեցի երկու մասի բաժնել թերթը , քաղա-  
 քական յօդուածները հրատարակել վերջին մա-  
 սին մէջ եւ միայն առաջին մասը , «գրական  
 բաժինը» զրկել Թուսաստան շայրպէսով , Է . :

Թ . , Ժ . , ԺԱ . , ԺԲ . թիւերուն գրական բա-  
 ժինները շրկուեցան եւ մտան Թուսաստան , —  
 եւ այս կարգադրութիւնը իմացուցի ուս-  
 սական գրաքննութեան , եւ ուսահայ աշխա-  
 տակիցներու : Երկրորդ Տարեշրջանին 1—2  
 թիւը , — որուն վերջին բաժինը չզրկուեցաւ  
 Թուսաստան , — ամբողջութեամբ ետ դարձաւ  
 «Արգիլուած» նշանակումով : Մեր ուսահայ  
 աշխատակիցները «գիտէին» «Անահիտ»ին ծը-  
 ագիրը եւ ուղղութիւնը . եթէ շարունակեցին  
 ստորագրել , պատճառը այն էր որ անոնք զի-  
 րենք աշխատակից կը նկատէին միմիայն  
 «գրական» բաժին , եւ իրենց յօդուածներուն  
 պատասխանատուութիւնն ունէին լոկ . այսու-  
 հետեւ անոնք պիտի վարուին ինչպէս որ պատ-  
 շաճ դատեն :

«Անահիտ»ը եթէ շատանար պարզ «գրական»  
 գործունէութեամբ մը , կոչուած էր նեւթա-  
 կան ամենամեծ յաջողութիւն գտնելու , ինչ  
 որ հաստատեցի առաջին թիւերուն թէ կով-  
 կասի եւ թէ՛ Ամերիկայի կամ ուրիշ երկիրնե-  
 րու Հայութեան մէջ արագ եւ ընդարձակ տա-  
 րածումովը : Բայց ես չէի կրնար անտարբեր  
 եւ լուռ մնալ մեր ցեղին ամենէն կենսական  
 խնդիրներուն առջեւ : Այդ խնդիրներուն մասին  
 կարծիքս յայտնելու «Անահիտ»ին նեւթապէս  
 վնասակար եղաւ . ես որոշապէս գիտէի որ այդ-  
 պէս պիտի ըլլար , բայց չպիտի ներէի ինք-  
 դինքիս որ ետ կենայի այդ գոհողութենէն .  
 ինչով ինքզինքիս պիտի ապացուցանէի իմ  
 անկեղծութիւնս , եթէ զոնորոքիս յանձն  
 չառնէի , զոնորութիւն իմ ուրոյն գործունէ-  
 ութեանս մէջ , իմ կրցած եղանակովս : «Անա-  
 հիտ»ը պիտի շարունակէ , իր ուղղութեանը մէջ  
 անյողողղ ընթանալ , ինչ որ ալ ըլլան պայման-  
 ները , ինչ անպատեհութիւններ ալ որ իրեն հա-  
 մարձագին իր ընթացքէն : «Անահիտ»ին քարո-  
 զած տեսութիւնները կրնան անձիշդ ըլլալ . թող  
 ինծի լըջօրէն , ուղղամտօրէն ու անկեղծօրէն  
 փաստեն իմ գաղափարներու «անձիշդ» կամ  
 «ճիշդ» ըլլալը : Բայց ամէն անգամ որ զրպար-  
 տութիւններու աղտոտ ու խախտում միջոցին  
 գիմեն , ամէն անգամ որ ինծի վերագրեն անձ-  
 նական ու շահադիտական գծութիւններ , ուրիշ  
 բան պիտի ըրած չըլլան բայց եթէ ինծի «ժա-  
 ոայութիւն մատուցանել» , որովհետեւ ինծի  
 համար ամենէն զիւրին բանն է այդ զրպար-  
 տութիւնները մէկ հարուածով փշրել , եւ ատով  
 անգամ մը եւս ապացուցանել «Անահիտ»ի հա-  
 կառակորդներէն ոմանց վիճաբանութեան գար-  
 շելի ու անբարոյական մեթոտը :

Ա. 2.



Le Gérant: GEORGES W ALINE

Paris. — Imp. V<sup>o</sup> ALBOUY, 75, avenue d'Italie.

ծագումներով փայլուն անցեալ մը ունենալով, վա.յրագ գրայիներու մշտանորոգ հարուածները կը կրէ ու վերջապէս Թուրքին բռնաւորական լուծին տակը կ'իյնայ: Ու լսելով այն խանդավառ պաշտպանողականը զոր բանախօսը կ'արտասանէ ի նպաստ իր հարստահարուած եղբայրներուն, կը զգացուի որ ինքն ալ անոնց պէս հայրենիքին պաշտամունքը պահած է եւ թէ ստրկութիւնը չէ տկարացուցած խրոխտութիւնն այդ մարդերուն որոնք ատենով, թէպէտ Արեւելցի, Արեւմուտքի քաղաքակրթութեան յառաջապահ եղան, եւ որոնք հիմա ստիպուած են ենթարկուիլ գարշելի կոտորածներու ինչպէս անոնք որ Ապտիւլ Համիտի գրգռմով վերջերս աւերեցին այդ երկիրը առանց որ ու եւ է բարեկամ ձեռք օգնութեան հասնէր անոր: Այդ օգնութիւնը Հայերը սպասած էին կեղեքեալներու կարեկցող վեհանձն Փրանսայէն: Յարգանք ընծայելով հանդերձ Պ.Ֆամպոնի ջանքերուն, որուն հաստատակամ վարմունքը յաջողեցաւ մէկ քանի մեծ շարժերու առաջին առնել, բանախօսը ուժգնապէս քննադատեց Պ. Հանոթոյի արտաքին քաղաքականութիւնը...

Լիւ, ԼԸ ՓՐՈՎԿԷ ՏԻՒ ՆՈՌ, 17 յունուար 1900.

... Պ. Զօպանեան Հայ մընէ կը զգացուի, կը տեսնուի որ եռանդաւոր կը սիրէ իր հայրենիքը: Խանդով կը խօսի անոր մասին, անոր աւանդութիւնները կը կրկնէ ներշնչեալ ձեւով մը. եւ երկիւղած յարգանքով մը կ'արտասանէ իր ազգային երգիչներուն քերթուածները: Ունկնդիրներուն առջեւ ոգեց երկայն շարքը Հայոց թագաւորներուն՝ Հայկէն ի վեր, եւն, եւն: ... Հայոց վերջին թագաւորներէն մին Փրանսայի իշխան մը եղաւ, Լեւոն Լուսինեանը, որ Լեւոն Զ. անունով թագաւորեց եւ մեռաւ, — բարբարոս արշաւողներուն ձեռքով գահէն վար առնուած ու վտարուած, — Բարիզի կեղեասրնեանց վանքին մէջ՝ 1393ին:

Յետոյ երկայն շարք մը սխաւ կոտորածներու:

Պ. Զօպանեան ըսաւ թէ հայկական վերջին կոտորածներուն միջոցին՝ երբ 300,000 անհատներ կորան, Անգլիոյ կողմէ յանկարծ լքուելը այնքան զարմանք չպատճառեց Հայոց որքան դժնդակ յուսախաբութիւն մը զգացին տեսնելով թէ Ռուսիան եւ մանաւանդ Փրանսան, որուն պաշտպանութիւնը կը յուսային, բոլորովին անշարժ մնացին: Բանախօսն այս յուսախաբութիւնը ամփոփեց միամիտ ու վսեմ ազաղակի մը մէջ, — որ անգամատուած Բողոնիային ճիշդ կը յիշեցնէ, — եւ զոր վերջին կոտորածներուն միջոցին հայ պառաւ մը արձակեք է՝ «Բայց ուրիմն Աստուա՛ծ ալ տաճկեք է»...

Լիւ, «Լ'ԷՔՕ ՏԻՒ ՆՈՌ, 17 յուն. 1900.

... Մեր պաշտօնակիցը, — Պ. Զօպանեան, Բարիզի մէջ կը հրատարակէ հայերէն լեզուով ամսաթերթ մը — ֆրանսերէնը կը գործածէ հազուադեպ գիւրութեամբ մը: Ուստի իր ատենաբանութիւնը, որ կը ներշնչուի խանդավառ սէրէ մը զոր բանախօսը կը տածէ իր հայրենիքին համար, կը ստանայ միանգամայն վայելուչ ձեւ մը:

Պ. Զօպանեան ցոյց տուաւ հայ ժողովուրդը, որ քրիստոնէութեան առաջին յարողներէն եւ ղած է եւ Արեւելքի մէջ Արեւմտեան քաղաքակրթութեան յառաջապահ գունդը կազմած է: Հայաստանի ա՛յնքան շարժումնալից պատմութեան բոլոր փուլերը փաստեր են ինդաստ այդ քաջարի փոքրիկ ժողովրդին որ երբեք չէ դադրած իր անկախութեան համար մարտնչելէ. եւ այդ Թուրքէն հարստահարողներուն նկատմամբ որչափ համակրութիւն ունենանք՝ քիչ է:

... Ճաւալի է որ Փրանսա լքած ըլլայ այդ բարեկամ ժողովուրդը, որ ամէն ատեն աչքը Ֆրանսայի յառած է, մեր գրականութենէն ներշնչուած է, եւ Արեւելքի մէջ մեր ազդեցութեան եռանդուն եւ ուշիմ օժանդակ մը կարող է ըլլալ:

... Պ. Զօպանեանի ձեռնարկած այս պայքարին կ'արժէ ամէն տեսակէտով որ շահագրգռուինք, եւ լաւ է որ Փրանսայի մէջ հանրային կարծիքը գիտնայ թէ ի՞նչ է ճշգիւ հայկական խնդիրը: Ռուսպէ, ԼԸ ԺՈՒՌՆԱԼ ՏԸ ՌՈՒՊԷ, 16 յուն. 1900

... Այդ թուականէն (Ռուսիանեանց թագաւորութեան անկումէն) ի վեր, Հայերը օտար լուծի տակ կ'ապրին, եւ անկախութիւնը վերստին ձեռք ձգելու համար իրենց բոլոր ջանքերն ի դիմելու ելան: Ամէն տեսակ հալածանքներ կրած են իրենց տիրողներուն կողմէն, որոնք միշտ ջա-

նացած են ժամատականութիւն ընդունել տալ անոնց . բայց քրիստոնէական հաւատքը միշտ յաղթանակած է , եւ այսօր իսկ , թէպէտ Հռովմէական եկեղեցիէն զատուած , Հայերը մահմեւ տական ճնշումին դիմադրելու համար իրենց ուժին մեծ մասը կը քաղեն այն յոյսին մէջ թէ ինչը վերջ ի վերջոյ պիտի յաղթէ Մահիկին :

... Հայկական խնդրոյն մէջ Ֆրանսայի կատարած դերին վրայ խօսելով , Պ. Չօպանեան խորտորէն կը քննադատէ Պ. Հանթոնի վարմունքը , եւն :

... Պ. Չօպանեան կ'աւարտէ կոչում ընելով Ֆրանսայի զգացումներուն եւ շահերուն , հրաւիրելով զայն որ Հայութեան վրայ կրթնի՝ վերստին գրաւելու համար ամբողջ Սրբեւելքի մէջ այն դերը զոր մինչեւ հիմա բռնած էր :

Բանախօսը շատ ծափահարուեցաւ :

Նանթ, ՖԱՌ ՏԸ ԼԱ ԼՈՒԱՐ, 27 յունուար 1900 .

Պատույի «Լը Ժուռնալ սը Պոստօ» թերթը , արտատպելով Նանթի լրագրին ընդարձակ յօդուածը , հետեւեալ սողերը կ'աւելցնէ .

«Կը յուսանք թէ Պ. Ա. Չօպանեան պիտի շարունակէ իր բանախօսութեանց շարքը Ֆրանսայի մեծ քաղաքներուն մէջ , եւ թէ բոլոր վեհանձն սրտերը պիտի երթան ունկնդրել իր տաք ու համոզուած բանախօսութիւնը , պատկերներով լեցուն ու գեղեցիկ բացատրութիւններով որոնց ամէն վայրկեան կը հանդիպինք հայ գրականութեան մէջ . . .

ՕԿԻՒՍԹ ՊԵՆԱՐ. — ԺՈՒՐՆԱԼ ՏԸ ՊՈՐՏՕ

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անանիսը պիտի հրատարկուի ամբողջ մէկ անգամ . իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ էջէ , եւ պիտի արժէ՝ ձեռքէ քնդդնելու համար 1 ֆրանք (Ֆրանսա) , 20 սէնդ (Ամերիկա) , 1 ֆր. 20 (օտար երկիրներ) :

Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) , 5 րուպլի (Ռուսիա) , 2 տոլար (Ամերիկա) . վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիրներ) , 2.50 րուպլի (Ռուսիա) , 1 տոլար (Ամերիկա) :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր .

Կ'ընդունուին ազգեր :

Նամակ , յօդուած եւ բաժանորդագրին զրկել՝

A. TCHOBANIAN

6 Place de l'Odéon

PARIS

«ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼ ՆԵՐԸ

ԹԻՖԼԻՍ

ՊՈՒՔՐԷՇ

ԴԱԻՐԷԺ

ԳԱՀԻՐԷ

ՆԻԻ-ԵՈՐԳ .

ԲՐՈՎԻՏԷՆՍ (Ամերիկա)

ԻՍԹ-ՈՒՅԹԸՐԹԱՈՒՆ. (Մաս . , Ամերիկա)

ՈՒՍԹԸՐ . (Մաս . , Ամերիկա)

Պարոն Աղեքսանդր Թարխանեանց

» Արիս Լազար

» Տր . Կ . Փաշանեան

» Աշոտ Սեդրաք

» Պ. Կատարեան

» Նազարէթ Թաթեոսեան

» Մանուկ Գալստեան

» Երուանդ Յակոբեան